



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 128 2022

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Գևորգ Բաղդասարյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Արմեն Մարուխյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրեփանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Դավիթ Մելքոնյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Արթուր Չախոյան** ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-640  
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am  
orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 05.05.2022թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 5 պայմ. մասով  
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2022թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գոռ Հովհաննիսյան Անհրաժեշտ պաշտպանության նախապայմանները .....	3
---	---

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գայանե Մելիքյան Հանձնման ինստիտուտի իրավական բնույթը, հանձնման հասկացությունը և տարբերակումը այլ հասկացություններից .....	11
Զարուհի Պապոյան Բջջային սարքերի փորձաքննության և դրանց արդյունքում ստացված տվյալների ապացուցողական նշանակության հիմնախնդիրները .....	15
Արայիկ Ասլանյան Փորձագետի եզրակացության գնահատման որոշակի առանձնահատկությունները .....	22

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Զավեն Սմբատյան Վարչական ակտի հիմնավորվածությունը որպես վարչական ակտի նյութական իրավաչափության տարր .....	28
Գևորգ Իսրայելյան Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները .....	34
Պետրոս Վարդանյան Վարչական արդարադատության ինստիտուտի ձևավորման և զարգացման ընթացքն ու արդյունքները .....	40
Գոռ Հովհաննիսյան Ծանապարհային երթևեկության նշանների իրավական բնույթն ու դրանցից պաշտպանվելու իրավական հնարավորությունները .....	45

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ժորա Ջհանգիրյան Իրավագիտական գնահատական ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թ. մարտի 26-ի N ՍԴՈ - 1586 որոշման սահմանադրականության վերաբերյալ .....	52
Արման Թադևոսյան Ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման որոշ տեսական հիմնախնդիրներ.....	58

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արման Հովհաննիսյան Բարոյականությունը որպես մարդկային գործունեության նորմատիվ կարգավորիչ .....	64
Հայկ Ավետյան Ժամանակի ընթացքում օրենքի գործողության սկզբունքը մի շարք երկրների իրավունքում .....	69
Հայկ Շահբազյան Իրավունքը օբյեկտիվ և սուբյեկտիվ առումով .....	76
Նունե Զոմարոյան Սոցիալական պետության սկզբունքի իրացումը Հայաստանի Հանրապետությունում .....	80

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts .....	87
---	----

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները .....	100
--	-----

**ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հազենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր)

**ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱԿՆԵՐԸ**

**1. Ընդհանուր ակնարկ**

1. Հայ օրենսդիրը ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մասում<sup>1</sup> նախատեսել է անհրաժեշտ պաշտպանության երկու ձև: Մի դեպքում ոտնձգության ենթարկվողը պաշտպանում է սեփական բարիքները (*«պաշտպանվողի... կյանքը, առողջությունը, իրավունքները...»*)<sup>2</sup>: Հնարավոր է ոտնձգությունից պաշտպանել նաև երրորդ անձանց բարիքները (*«մեկ այլ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները...»*)<sup>3</sup>:

2. Անհրաժեշտ պաշտպանությունն այն պաշտպանությունն է, որն անհրաժեշտ է պաշտպանվողին կամ մեկ այլ անձին սպառնացող հակաիրավական ոտնձգությունը վերացնելու համար: Անհրաժեշտ պաշտպանությունն ունի երեք նախապայման.

- Անհրաժեշտ պաշտպանության վիճակը (*«Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որն արարքը կատարել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում...»*),
- Պաշտպանական գործողությունը (*«Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որն արարքը կատարել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում...»*),
- Պաշտպան(վ)ելու գիտակցությունը և կամքը (*«հակաիրավական ոտնձգությունից... պաշտպանելիս»*)՝ անհրաժեշտ պաշտպանության սուբյեկտիվ կողմը):

Եթե ՀՀ ՔրՕ հատուկ մասի որևէ նորմի փաստակազմում նկարագրված արարքի կատարումը բավարարում է այս երեք նախապայմանները, ապա այդ արարքն արդարացված է, այսինքն՝ հանցագործություն չէ, ու կատարողը քրեական պատասխանատվության չի ենթարկվում:

3. Անհրաժեշտ պաշտպանության դեպքում, ինչպես բխում է օրենքի ձևակերպումից (*«պաշտպանվողի կամ մեկ այլ անձի»*), պարտադիր չէ, որ պաշտպանվողը նույնական լինի ոտնձգության ենթարկվողի հետ: Բայց երրորդ անձի շահերի պաշտպանությունն անթույլատրելի է, այսպես կոչված, տնօրինելի իրավական բարիքների դեպքում, երբ ոտնձգության ենթարկվող երրորդ անձը (ճանաչելիորեն) ցանկանում է հանդուրժել իր բարիքի կորուստը, օրինակ, որպեսզի խուսափի ոտնձգողին վնաս պատճառելուց<sup>4</sup>: Ոտնձգության ենթարկվողը պարտավոր չէ հրաժարվել սեփական գործողություններով պաշտպանվելուց, անգամ եթե կա նրան պաշտպանելու պատրաստ երրորդ անձ (ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 2-րդ մաս):

**4. Անհրաժեշտ պաշտպանության ստուգման սխեման**

Ա. ՀՀ ՔրՕ հատուկ մասի որևէ նորմի փաստակազմի իրականացումը

Բ. Այդ արարքի հակաիրավականությունը. այստեղ՝ արարքի հնարավոր արդարացումն անհրաժեշտ պաշտպանությամբ

<sup>1</sup> Խոսքը 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված նոր քրեական օրենսգրքի մասին է, որն ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հուլիսի 1-ին:

<sup>2</sup> Անհրաժեշտ պաշտպանության այս ձևը գերմանական քրեական իրավունքում կոչվում է Notwehr (տե՛ս գերմ. ՔրՕ §32-ը):

<sup>3</sup> Անհրաժեշտ պաշտպանության այս ձևը գերմանական քրեական իրավունքում կոչվում է Nothilfe: Sten Kühl AT § 7 Rn. 138; Rengier AT § 18 Rn. 110; Hilgendorf/Valerius AT § 5 Rn. 22:

<sup>4</sup> BGHSt 5, 245 (247 f.); Jescheck/Weigend § 32 IV; Kaspar JuS 2014, 769 (773); Kühl Jura 1993, 233 (236); Otto AT § 8/54 f. Տարբերակելով՝ Seeberg, Aufgedrängte Nothilfe, Notwehr und Notwehrexzess, 2004, 172 ff.: Ոտնձգության ենթարկվողի կամքը հաշվի առնելու դեմ են արտահայտվում Schmidhäuser AT 9/107; Schroeder Maurach-FS 127 (141):

**I. Անհրաժեշտ պաշտպանության վիճակը**

1. Ոտնձգություն
2. օրենքով պաշտպանվող շահերի նկատմամբ («կյանքը, առողջությունը և իրավունքները»)
3. Ոտնձգության առկայությունը պաշտպանվելու պահին
4. Ոտնձգության հակաիրավականությունը («հանրության համար վրանգավոր ոտնձգությունից»)

**II. Պաշտպանական գործողությունը**

1. Պաշտպանությունը
2. Անհրաժեշտությունը
  - ա) պիտանի և
  - բ) համեմատաբար ամենամեղմ միջոցը
3. Անհրաժեշտ պաշտպանության սոցիալ-էթիկական սահմանափակումները՝
  - ա) աննշան ոտնձգությունները
  - բ) ճշացող անհամաչափությունը
  - գ) սադրումը
  - դ) երեխաները, հոգեկան հիվանդները, առանց մեղքի գործողները
  - ե) մոտիկ ազգականի կողմից ոտնձգությունը

**III. Անհրաժեշտ պաշտպանության սուբյեկտիվ կողմը**

1. Անհրաժեշտ պաշտպանության վիճակը և պաշտպանական գործողությունը գիտակցելը
2. Պաշտպան(վ)ելու կամքը  
Եթե առկա են անհրաժեշտ պաշտպանության նախապայմանները, ապա անձն արդարացվում է, հակառակ դեպքում պետք է շարունակել ստուգել հանցագործության մյուս նախապայմանները:

**(Գ. Մեղքը)**

**II. Անհրաժեշտ պաշտպանության վիճակը Սահմանում.**

անհրաժեշտ պաշտպանության վիճակ ստեղծվում է օրենքով պաշտպանվող բարիքի (շահի) դեմ ուղղված հակաիրավական ոտնձգության միջոցով:

**1. Ոտնձգությունը մարդկային վարքի միջոցով** օրենքով պաշտպանվող շահերի վնասման սպառնալիքն է:<sup>5</sup>

**ա) Եթե կենդանիները** կամ առարկաները մարդու կողմից իբրև գործիքներ չեն օգտագործվում վնաս հասցնելու նպատակով,<sup>6</sup> ապա դրանցից բխող վտանգները «ոտնձգություն» չեն ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մասի իմաստով: Այդպիսի վտանգները վերացնելու իրավունքը որոշվում է ՀՀ ՔաղՕ 1060-րդ հոդվածով կամ ՀՀ ՔրՕ 34-րդ հոդվածով: Բայց եթե կենդանին մարդու կողմից օգտագործվում է իբրև ոտնձգության միջոց, ապա ոտնձգության ենթարկվողը կարող է դիմել անհրաժեշտ պաշտպանության, եթե կենդանին ոտնձգողի սեփականությունն է:<sup>7</sup>

**բ) Մարդկային վարքը** պետք է ունենա արարքի որակ (տես ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մասը՝ «...անձը, որն **արարքը** կատարել է...»), այսինքն՝ առնվազն ղեկավարվի մարդու կամքով, հակառակ դեպքում վարքը չի կարող գնահատվել իբրև հակաիրավական ոտնձգություն<sup>8</sup>: Օրինակ՝ էպիլեպտիկ ջղաձգումների նոպայի դեպքում սպառնացող վնասումներն անհրաժեշտ պաշտպանության դիմելու իրավունք չեն տալիս<sup>9</sup>:

Ըստ գերիշխող կարծիքի՝ ոտնձգության նախապայմանն է վնասելու նպատակ հետապնդելը. **ոչ դիտավորյալ** վարքը նույնպես կարող է լինել ոտնձգություն<sup>10</sup>: Որոշիչ է, թե արդյոք վարքն իր օբյեկտիվ միտումով անմիջականորեն ուղղված է վնաս հասցնելուն<sup>11</sup>: Օրինակ՝ ազատությունից զրկելու միջոցով ոտնձգության չի ենթարկվում նա, ով թաքնվում է ուրիշի խնություն դրա փակվելուց հետո գողություն կատարելու նպատակով: Այս դեպքում պոտեն-

<sup>5</sup> Kindhäuser/Hilgendorf, LPK-StGB, 2022, § 32 Rn. 9.

<sup>6</sup> BGHSt 14, 152 (155).

<sup>7</sup> Joecks/Jäger, StudKomm StGB, 2018, § 32 Rn. 7; Baumann/Weber/Mitsch § 17 Rn. 4.

<sup>8</sup> Hilgendorf/Valerius AT § 5 Rn. 25.

<sup>9</sup> Jakobs 12/16; Roxin/Greco I § 15/8.

<sup>10</sup> Geilen Jura 1981, 200 (202); Sternberg-Lieben JA 1996, 299 (300).

<sup>11</sup> Kindhäuser/Hilgendorf, LPK-StGB, 2022, § 32 Rn. 12. Հակառակ կարծիքի է Otto AT § 8/20, որը պահանջում է օրենքով պաշտպանվող բարիքի նկատմամբ գիտակցված սպառնալիք:

ցիալ զոհն ինքն է իրեն դրել վտանգավոր դրության մեջ, այնպես որ ինքն էլ պիտի կրի դրա հետ կապված ռիսկերը<sup>12</sup>:

**գ)** Սկզբունքորեն հնարավոր է նաև ոտնձգություն **անգործության** միջոցով, եթե ոտնձգողն ունի գործելու հատուկ իրավական պարտականություն:<sup>13</sup> Մասամբ նաև պահանջվում է, որ անգործությունը լինի նաև պարտականության՝ օրենքով պատժելի խախտում<sup>14</sup>: Բոլոր դեպքերում սահմաններն այնտեղ են, որտեղ խոսքը պարզապես պայմանագրային պարտավորությունների չկատարման մասին է<sup>15</sup>: Օրինակ՝ վարձատուն չի կարող վարձակալին, որը վարձակալության պայմանագրին հակառակ հրաժարվում է ազատել բնակարանը, անհրաժեշտ պաշտպանության միջոցով ստիպել դուրս գալ բնակարանից<sup>16</sup>:

**2.** Ոտնձգության առարկա կարող են լինել անձամբ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի՝ **օրենքով պաշտպանվող բարիքները** (շահերը)՝ այն է՝ կյանքը, առողջությունը, ֆիզիկական անձեռնմխելիությունը, պատվը, սեփականությունը, օրինական տիրապետումը և այլ իրավունքները: Պետք է ուշադրություն դարձնել, որ **ոչ իսկական գենքով** սպառնալը թեև օբյեկտիվորեն չի վտանգում մարդու կյանքը կամ առողջությունը, բայց կարող է լինել ոտնձգություն *որոշում ընդունելու ազատության* նկատմամբ, այնպես որ այստեղ չպետք է արագ անցնել թվացյալ պաշտպանության հարցի քննարկմանը:<sup>17</sup> Առանձնահատուկ

խնդրահարուց իրավիճակներ կարող են առաջանալ մարդու պատիվը վարկաբեկելու,<sup>18</sup> տանտիրոջ իրավունքի խախտումների<sup>19</sup> և, հակառակը, մուտքն ապօրինաբար արգելելու,<sup>20</sup> հետիոտնի կողմից ուրիշի մեքենայի կայանումը խոչընդոտելու,<sup>21</sup> փողոցային երթևեկության մեջ ճանապարհը փակելու,<sup>22</sup> լուսանկարահանումների միջոցով<sup>23</sup> անձնական կյանքի նկատմամբ միջամտությունների<sup>24</sup> դեպքերում: Սեփական պատկերի իրավունքը նույնպես ենթակա է պաշտպանության անհրաժեշտ պաշտպանության միջոցով<sup>25</sup>:

Անհրաժեշտ պաշտպանությունը միշտ բացառվում է, եթե ոտնձգության ենթարկված բարիքի պաշտպանությունը երաշխավորված է միայն մի որոշակի իրավական ընթացակարգով: Օրինակ՝ վարձատուն չի կարող վարձակալին, որը վարձակալության պայմանագրին հակառակ հրաժարվում է ազատել բնակարանը, անհրաժեշտ պաշտպանության միջոցով ստիպել դուրս գալ բնակարանից (տես վերևում):

**3.** Ոտնձգությունն **առկա է ներկա պահին**, եթե այն անմիջականորեն ակնկալվում է, արդեն սկսվել է կամ դեռ շարունակվում է<sup>26</sup> (<< ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մաս («...*ոչնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից...*»):

**ա)** Ոտնձգությունն առկա է այն պահից, որ պահից ոտնձգության ենթարկվողի իրավական բարիքը **կոնկրետ վտանգվում է** (օբյեկտիվորեն):<sup>27</sup> Ընդ որում, պարտադիր չէ, որ ոտնձգող գործողությունը հատած լինի հանցավորձի շե-

<sup>12</sup> Kindhäuser/Hilgendorf, LPK-StGB, 2022, § 32 Rn. 12.

<sup>13</sup> LK-Rönnau/Hohn Rn. 101 ff.; Joecks/Jäger, StudKomm StGB, 2018, § 32 Rn. 8; այլ կարծիքի է՝ Schumann Dencker-FS 287 ff.:

<sup>14</sup> Geilen Jura 1981, 200 (204); Jescheck/Weigend § 32 II 1 a.

<sup>15</sup> Roxin/Greco I § 15/12; տարբերակելով՝ LK-Rönnau/Hohn Rn. 105 ff.

<sup>16</sup> Stü Kühl Jura 1993, 125; Lagodny GA 1991, 300 ff.:

<sup>17</sup> Kindhäuser/Hilgendorf, LPK-StGB, 2022, § 32 Rn. 14. St'ս նաև Amelung Jura 2003, 91 (93 ff.):

<sup>18</sup> BayObLG NJW 1991, 2031.

<sup>19</sup> BGH bei Holtz MDR 1979, 985 (986).

<sup>20</sup> Այդ մասին մանրամասն տես Sickor Jura 2008, 14 ff.

<sup>21</sup> BayObLG NJW 1995, 2646.

<sup>22</sup> BayObLG NJW 1993, 211.

<sup>23</sup> BGH JZ 1978, 762; OLG Karlsruhe GA 1982, 224 ff.; OLG Hamburg StraFo 2012, 278 m. zust. Anm. Hecker JuS 2012, 1039 (1040 f.): Դատական նիստերի դահլիճի դիմաց լուսանկարելու դեմ ամբաստանյալի անհրաժեշտ պաշտպանության մասին տե՛ս NK-StGB/Kindhäuser § 32 Rn. 39:

<sup>24</sup> BayObLG NJW 1962, 1782 f.

<sup>25</sup> OLG Hamburg JuS 2012, 1039. Սեփական պատկերի իրավունքի մասին տե՛ս Հովհաննիսյան/Ղամբարյան/Սարգսյան, Մասնավոր անձի կատարած տեսագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարությունում, Երևան 2017, էջ 29-31: Մարդու դեմքին ծխախոտի ծուխ փչելու մասին տե՛ս հանդեսի այս համարում տպագրված խնդիրը:

<sup>26</sup> BGH NJW 1973, 255; HK-GS/Gunnar Duttge, 2022, StGB § 32 Rn. 13.

<sup>27</sup> Stü OLG Stuttgart NJW 1992, 850 (851); BGH 1.2.2017 – 4 StR 635/16:

մը. որոշիչ է, թե արդյոք հապաղելու դեպքում վտանգված իրավական բարիքը պահպանելու շանսերն զգալիորեն կնվազեն (այսպես կոչված **արդյունավետության սահման**):<sup>28</sup> Օրինակ՝ ոտնձգությունն առկա է արդեն այն ժամանակ, երբ ոտնձգողը ձեռքը տանում է զենքին, որ հետո կրակի<sup>29</sup>:

Դեռ շարունակվում է նաև արդեն դադարած (գերմ. *vollendet*), բայց դեռ չավարտված (գերմ. *beendet*) ոտնձգությունը<sup>30</sup>: Ոտնձգությունը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ կա դրա կրկնության և նոր վնասող գործողության անմիջական սպառնալիք<sup>31</sup>: Ըստ այդմ՝ անհրաժեշտ պաշտպանությունը ներառում է նաև **գողին** հետապնդելու դեպքերը, երբ նա փախչում է գողոնով, քանի որ այդ պահին (նախքան գողոնը վերջնականապես թաքցնելը) ոտնձգությունը դեռ ավարտված չէ<sup>32</sup>: **Շորթման** դեպքում անձի կամքի ազատության դեմ ուղղված ոտնձգությունը սպառնալիքն արտաբերելուց հետո էլ դեռ առավարտված չէ, քանի որ այդ ոտնձգությունից պաշտպանվելու վերաբերյալ զոհի որոշումից հետո ևս այն դեռ պոտենցիալ կերպով նրա ազատությունը սահմանափակող ներգործություն ունի<sup>33</sup>: Ոտնձգությունն առկա է նաև այն դեպքում, երբ շորթիչը թեև արդեն ստացել է իր պահանջած գումարը, բայց դեռ գտնվում է զոհի բնակարանում<sup>34</sup>: **Վիրավորանքի** դեպքում զոհի պատվի դեմ ուղղված ոտնձգությունն արդեն ավարտված է հայիոյանքի արտաբերման պահից: Հետևաբար, անգամ դրան ակնթարթորեն հետևած ապտակը չի կարող արդարացվել անհրաժեշտ պաշտպանությամբ: Բայց ոտնձգողին ապտակելը կարող է արդարացվել, եթե ակնկալվում է վիրավորանքի (անմիջական) շարունակություն նոր հայիոյանքների ձևով<sup>35</sup>: Եթե հարձակման է ենթարկվում նախկին, արդեն

նահանջող ոտնձգողը, ապա կարող է առկա լինել ոտնձգություն արդեն նրա նկատմամբ, որն իր հերթին իրավունք ունի պաշտպանվելու անհրաժեշտ պաշտպանության միջոցով<sup>36</sup>:

**բ)** Այն դեպքերում, որոնցում (վստահաբար ակնկալվող) ոտնձգությունը թեև անմիջականորեն մոտալուտ չէ (դեռ չկա իրական սպառնալիք), բայց բավարար արդյունավետությամբ կարող է կանխվել միայն շտապ միջոցներ ձեռք առնելու դեպքում, մասամբ ընդունվում է այսպես կոչված **անհրաժեշտ պաշտպանությանը նմանվող վիճակը**, որում արդարացված է «կանխարգելիչ անհրաժեշտ պաշտպանությունը»<sup>37</sup>:

Գերմանական գրականության մեջ գերիշխող կարծիքը, հակառակը, մերժում է անհրաժեշտ պաշտպանության այդպիսի ընդարձակումը: Անհրաժեշտ պաշտպանության «հանդուգն» իրավունքը պետք պահել նեղ սահմանների ներսում, որի նախապայմաններից է ոտնձգության՝ ժամանակային առումով անմիջական առկայությունը: Օրինակ՝ անթույլատրելի է քնած բռնակալ ամուսնու սպանությունը նրա կնոջ կողմից այն բանից հետո, երբ ամուսինը նրան սպառնացել է քնից արթնանալուց հետո սպանել<sup>38</sup>: Անհրաժեշտ պաշտպանությանը նմանվող վիճակն ավելի շուտ ծայրահեղ անհրաժեշտության վիճակ է, որի նկատմամբ կիրառելի է ծայրահեղ անհրաժեշտության մասին նորմը<sup>39</sup> (ՀՀ ՔրՕ 34-րդ հոդ.):

**գ)** Եթե պաշտպանվողը վախի, հուզմունքի, սթրեսի կամ այլ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների հետևանքով չի գիտակցել և չէր կարող գիտակցել, որ հակաիրավական ոտնձգությունը կամ դրա իրական սպառնալիքը բացակայում է, ապա օրենսդիրը ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 6-րդ մասի 1-ին նախադասության միջոցով ֆիկցիայի է դիմում և ընդունում անհրաժեշտ

<sup>28</sup> Matt/Renzikowski/Engländer StGB, 2020, § 32 Rn. 14, ինչպես նաև BGH 1.2.2017 – 4 StR 635/16, BGH 13.4.2017 – 4 StR 35/17; BGH 7.6.2017 – 4 StR 197/17.

<sup>29</sup> Տե՛ս BGH NJW 1973, 255:

<sup>30</sup> BGHSt 48, 207 (209).

<sup>31</sup> BGH 25.1.2017 – 1 StR 588/16.

<sup>32</sup> Joecks/Jäger, StudKomm StGB, 2018, § 32 Rn. 9; Jäger AT Rn. 112; Wessels/Beulke/Satzger Rn. 328.

<sup>33</sup> Roxin/Greco I § 15/29; այլ կարծիք են՝ KG JR 1981, 254; Arzt JZ 2001, 1052 f.

<sup>34</sup> GHSt 48, 207.

<sup>35</sup> Kindhäuser/Hilgendorf, LPK-StGB, 2022, § 32 Rn. 18; Hilgendorf/Valerius AT § 5 Rn. 27.

<sup>36</sup> BGH bei Altvater NSTz 2004, 29 (29).

<sup>37</sup> Schmitt JuS 1967, 19 (24); Suppert, Studien zur Notwehr und „Notwehrähnlichen Lage“, 1973, 356 ff.

<sup>38</sup> Jäger AT Rn. 114; Kindhäuser AT § 16 Rn. 20; Kühl AT § 7 Rn. 42.

<sup>39</sup> BGHSt 39, 133 (136); NK-Kindhäuser Rn. 56; Kühl Jura 1993, 57 (61 f.)



պաշտպանության վիճակի առկայությունը, այնպես որ պաշտպանվողի գործողություններն արդարացվում են, թեև օբյեկտիվորեն անհրաժեշտ պաշտպանության վիճակ առկա չի եղել:

**4.** Ուտնձգությունը **հակահրավական** է, եթե այն՝ իբրև ուրիշի իրավական բարիքի սպառնալիք, թույլատրված չէ որևէ իրավանորմով, ու այդ պատճառով ուտնձգության ենթարկվողը պարտավոր չէ հանդուրժել այն<sup>40</sup>: Դա հատկապես այդպես է, եթե ուտնձգողի արարքն իր հերթին արդարացված չէ որևէ հիմքով: Ըստ ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մասի՝ ուտնձգություն կարող է լինել միայն քրեական օրենքով արգելված արարքը («...սույն օրենսգրքով նախատեսված հակահրավական ուտնձգությունից...»): Հայ օրենսդրի այս մոտեցումը խնդրահարույց է թվում, որովհետև թեև հակահրավական ուտնձգության կարող են ենթարկվել նաև քրեական օրենքով չպաշտպանված բարիքները, բայց անձն իրավունք չի ունենա անհրաժեշտ պաշտպանության միջոցով պաշտպանելու դրանք: Օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանությունը թույլատրելի չի լինի սովորական վիրավորանքի դեպքում: Ավելի ճիշտ է թվում այն մոտեցումը, որ պարտադիր չէ, որ ուտնձգության միջոցով իրականանա ՔրՕ հատուկ մասի որևէ նորմի փաստակազմը: Ուտնձգություն լինելու համար պետք է բավարար լինի, որ արարքը լինի հակահրավական, այսինքն՝ թույլատրված չլինի որևէ իրավանորմով:

**ա)** Հարցական է, թե արդյոք ուտնձգությունը պետք է լինի նաև **մեղավորությամբ** կատարված:

ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մասի բառացի տեքստը պահանջում է միայն հակահրավական արարք, այնպես որ առանց մեղքի կատարված արարքը նույնպես կարող է լինել ուտնձգություն<sup>41</sup>:

Փոքրամասնության կարծիքով՝ անհրաժեշտ պաշտպանության համար ուտնձգությունը պիտի լինի մեղավորությամբ կատարված արարք<sup>42</sup>: Փաստարկները՝ միայն մեղավորությամբ կատարված արարքի դեպքում է իրավակարգի գործողությունը հարցականի տակ դրվում, որի պաշտպանությանն էլ ծառայում է անհրաժեշտ պաշտպանությունը<sup>43</sup>: Բացի դրանից, միայն մեղավորությամբ գործողը պիտի ամբողջ ծավալով կրի կոնֆլիկտի բացասական հետևանքները, այսինքն՝ պաշտպանության արդյունքում իրեն պատճառված վնասը<sup>44</sup>: Ըստ այս կարծիքի՝ առանց մեղքի ուտնձգության դեպքում գործում են ծայրահեղ անհրաժեշտության կանոնները:

Պետք է այստեղ ուշադրություն դարձնել, որ գերիշխող կարծիքը նույնպես սահմանափակում է անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ընդդեմ առանց մեղքի գործողների, բայց ոչ թե «ուտնձգության» հասկացական մակարդակում, այլ պաշտպանության սոցիալ-էթիկական սահմանափակումների շրջանակում (տես ստորև III.3.):

**բ)** Իշխանական գործողությունների դեպքում վիճելի է, թե երբ է իշխանության ներկայացուցչի գործողությունը հակահրավական: Ըստ գերմանական դատական պրակտիկայի՝ պետք է կիրառել իրավաչափության քրեահրավական հասկացությունը, ըստ որի՝ իշխանական գործողությունն իրավաչափ է անհրաժեշտ պաշտպանության իմաստով, եթե պահպանվում են պաշտոնատար անձի տարածքային ու առարկայական իրավասությունը, ինչպես նաև օրենքով սահմանված էական ձևականությունները, և նա իրեն վերապահված հայեցողությունը կիրառում է պատշաճ կերպով<sup>45</sup>:

Բայց ավելի ճիշտ է թվում իշխանական գործողության իրավաչափությունը ձևական և նյութական առումով կապել նման գործողություն կատարելուն լիազորող համապատասխան նորմի նախապայմանների հետ և խուսափել իրավաչափության երկատված հասկացությունից: Ավելի շուտ պետք է սահման գծել պաշտոնատար անձի այն վարքի միջև, որը դեռ կարող է ստեղծել պետության կամքն իրականացնելու արդար

<sup>40</sup> Jescheck/Weigend § 32 II 1 c; Köhler 267; Fischer Rn. 21.

<sup>41</sup> Այս մոտեցումը գերմանական իրավունքում գերիշխող կարծիքն է, տես BGHSt 3, 217; S/S-Perron Rn. 24; Roxin JuS 1988, 425 (428)

<sup>42</sup> Hoyer JuS 1988, 89 (96); Hruschka 140 ff.; Renzikowski, Notstand und Notwehr, 1994, 99 ff.; տարբերակելով՝ Matt/Renzikowski/Engländer StGB, 2020, § 32 Rn. 19.

<sup>43</sup> Otto AT § 8/19 f.

<sup>44</sup> Jakobs 12/16.

<sup>45</sup> BGHSt 60, 253 (258 ff.), քննադատաբար Kindhäuser HRRS 2016, 439; Rönnau/Hohn StV 2016, 313:

րացի պատրանք, և այն կամայական վարքի միջև, որը վերագրելի է պաշտոնատար անձին՝ բացառապես իբրև մասնավոր անձի, և ոչ թե նրա գործառույթին՝ իբրև պետության կամքն իրականացնող պաշտոնատար անձի: Որքանով պաշտոնատար անձի վարքն այլևս չի արտահայտում պետության կամքը, այլ ծառայում է կամայական նպատակների, և այդ պատճառով պետք է որակվի իբրև լիազորությունների վերագանցում, պաշտոնատար անձը հավասարվում է ցանկացած քաղաքացու, որն սպառնում է հակաիրավական կերպով վնասել մեկ այլ քաղաքացու՝ պետության կողմից երաշխավորման ենթակա իրավական բարիքները: Հակառակը, որքանով պաշտոնատար անձի վարքը դեռ կարող է ընկալվել իբրև պետական կամքի արտահայտություն, անհրաժեշտ պաշտպանությունն անհամարժեք է և այդ պատճառով պետք է մերժվի՝ չնայած «ոտնձգության» հակաիրավականությանը: Պետության ու քաղաքացու միջև կոնֆլիկտներն իրավական կոնֆլիկտներ են, այնպես որ քաղաքացին իր կարծիքով հակաիրավական պետական միջամտությունից պետք է պաշտպանվի սկզբունքորեն դրա համար նախատեսված իրավական պաշտպանության միջոցներով:<sup>46</sup>

### III. Պաշտպանական գործողությունը

**Սահմանում.** պաշտպանական գործողության ներքո պետք է հասկանալ անհրաժեշտ ու պատշաճ պաշտպանությունն ընդդեմ ոտնձգողի:

**1. Պաշտպանությունը** պետք է ուղղված լինի միայն ոտնձգողի դեմ, այսինքն՝ նա, ով վնասվում է պաշտպանության միջոցով, պետք է նույնական լինի ոտնձգողի հետ<sup>47</sup>: Այդ պատճառով երրորդ անձանց բարիքների նկատմամբ միջամտության թույլատրելիությունը (նաև պաշտպանության նպատակով) որոշվում է ոչ թե ՀՀ ՔրՕ 32-րդ հոդվածով, այլ ծայրահեղ անհրաժեշտության մասին նորմերով (ՀՀ ՔրՕ 34-րդ հոդ., ՀՀ ՔաղՕ 1061-րդ հոդ.): Ըստ այդմ՝ պաշտպանվողի գործողությունների իրավաչափությունը նման դեպքերում պետք է չափվի արդարացման երկու

տարբեր հիմքերով: Օրինակ՝ եթե Ա-ն, որի հագին իր ընկեր Գ-ի վերնաշապիկն է, հարձակվում է Բ-ի վրա, ապա Ա-ի հարձակումից պաշտպանվող Բ-ն, որը ոչ միայն մարմնական վնասվածք է հասցնում Ա-ին, այլ միաժամանակ վնասում է նրա հագի վերնաշապիկը, կարող է անհրաժեշտ պաշտպանության հիմքով (ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ.) արդարացվել միայն Ա-ին մարմնական վնասվածք պատճառելու, բայց ոչ նրա հագի վերնաշապիկը վնասելու համար: Վերնաշապիկը, որը պատկանում է Գ-ին, վնասելը կարող է արդարացվել միայն ծայրահեղ անհրաժեշտության հիմքով (ՀՀ ՔրՕ 34-րդ հոդ.):

**2. Անհրաժեշտ է** այն պաշտպանությունը, որն օբյեկտիվ ex-ante դիտանկյունից **պիտանի** է թվում վերջնական դադարեցնելու ոտնձգությունը և միաժամանակ **հավասարապես պիտանի միջոցների** թվում այն մեկն է, որը նվազագույն վնասն է պատճառում ոտնձգողին<sup>48</sup>: Ըստ գերիշխող կարծիքի՝ անհրաժեշտությունը վերաբերում է պաշտպանական գործողությանը, ոչ թե պաշտպանության արդյունքին<sup>49</sup>, այնպես որ լիցքավորված ատրճանակով անհրաժեշտ հարվածը նաև այն դեպքում է արդարացված անհրաժեշտ պաշտպանությամբ, երբ այդ հարվածի արդյունքում պատահաբար կրակոց է արձակվում, որը մահացու վիրավորում է ոտնձգողին<sup>50</sup>:

**ա)** Անհրաժեշտ պաշտպանության դեպքում սկզբունքորեն անկարևոր է ոտնձգության ենթարկված և պաշտպանության արդյունքում վնասված բարիքի **համարժեքությունը** («իրավունքը չպետք է նահանջի ապօրինության առաջ»)<sup>51</sup>: Ոտնձգողի վնասները, որոնք առաջացել են անհրաժեշտ պաշտպանության արդյունքում, արդարացված են:<sup>52</sup> Ըստ այդմ՝ նյութական արժեքները կարելի է պաշտպանել նույնիսկ ոտնձգողին ծանր վիրավորելու կամ անգամ նրան սպանելու միջոցով, եթե հավասարապես պիտանի, բայց ավելի մեղմ միջոց կոնկրետ իրավիճակում առկա չէ<sup>53</sup> (տես ՀՀ ՔրՕ

<sup>46</sup> Ամբողջ պարբերության համար տես Kindhäuser/Hilgendorf, LPK-StGB, 2022, § 32 Rn. 27:

<sup>47</sup> Geppert Jura 2007, 37.

<sup>48</sup> Տես BGH NStZ 2015, 151 (152); NStZ 2019, 136; HK-GS/Gunnar Duttge, 2022, StGB § 32 Rn. 19:

<sup>49</sup> BGH NStZ 1981, 138; Jakobs 12/37 f.

<sup>50</sup> BGHSt 27, 313.

<sup>51</sup> Berner, Lehrbuch des Deutschen Strafrechts, 5. Aufl. 1871, 144; RGSt 21, 168 (170).

<sup>52</sup> BGHSt 27, 313 (314); BayObLG JZ 1988, 725.

<sup>53</sup> Տես BGHSt 42, 97 (100 ff.); NK3-Herzog Rn. 63; Otto Württenberger-FS 129 (137 f.); Roxin ZStW 93, 68 (99 ff.):



32-րդ հոդ. 4-րդ մասը): Հետևաբար, հրազենի կիրառումը թեև ի սկզբանե բացառված չէ, բայց պաշտպանության վերջին միջոցն է<sup>54</sup>:

**բ)** Պաշտպանվողը պարտավոր չէ դիմել նվազ վտանգավոր պաշտպանական միջոցների, եթե դրանց ներգործությունը պաշտպանության համար կասկածելի է<sup>55</sup>: Պաշտպանվողը պարտավոր չէ մտնել անորոշ ելքով մարտի մեջ<sup>56</sup>: Ով սկզբում պաշտպանվել է նվազ վտանգավոր միջոցով, ապա կարող է դիմել ավելի վտանգավոր միջոցի, եթե պարզվում է, որ այդ միջոցը բավարար արդյունավետ չէ<sup>57</sup>: Ըստ ընդհանուր կանոնի՝ ով հնարավորություն ունի արդյունավետորեն ու ակտիվորեն պաշտպանվելու (*Trutzwehr*), պարտավոր չէ սահմանափակվել սուսկ պասիվ պաշտպանությամբ (*Schutzwehr*) կամ այլ կերպ խուսափել ոտնձգությունից<sup>58</sup> (տես ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 2-րդ մասը. «Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ հակաիրավական ոտնձգությունից խուսափելու հնարավորությունից...»): **Չենք** կամ դանակ կիրառելուց առաջ պաշտպանվողը, որպես կանոն, պետք է սկզբում զգուշացնի այդ մասին, բայց միայն այն դեպքում, եթե դա կոնկրետ իրավիճակում հնարավոր է<sup>59</sup>: Զգուշացումն սկզբունքորեն անհրաժեշտ է, եթե ոտնձգողն ինքն անզեն է<sup>60</sup>: Եթե ակնհայտորեն թուլացել է մարդու ֆիզիկական ամբողջականության նկատմամբ ոտնձգությունը, և այն այժմ առաջին հերթին ուղղված է գույքի դեմ, ապա բոլոր դեպքերում, առանց նախապես զգուշացնելու վտանգավոր գործիքով անուղղակի դիտավորությամբ ոտնձգողին կյանքի համար վտանգավոր վնաս պատճառելն այլևս թույլատրելի չէ<sup>61</sup>:

**գ)** Ըստ գերիշխող կարծիքի՝ արդարացված չեն ամբողջովին ոչ պիտանի պաշտպա-

նական գործողությունները, քանի որ դրանք անհրաժեշտ չեն<sup>62</sup>:

**3.** Պաշտպանությունը պետք է նաև **պատշաճ** լինի: Դա այդպես չէ, եթե առկա է այն նախապայմաններից մեկը, որոնց դեպքում պաշտպանությունը ենթակա է որոշակի «սոցիալ-էթիկական» սահմանափակումների (գերիշխող կարծիք)<sup>63</sup>: Եթե անհրաժեշտության հատկանիշը վերաբերում է ոտնձգությունից պաշտպանվելու փաստացի հնարավորությանը, ապա սոցիալ-էթիկական սահմանափակումները վերաբերում են ոտնձգությանն արձագանքելու նորմատիվ պատշաճությանը: Անհրաժեշտ պաշտպանության սահմանափակումը սոցիալ-էթիկական պատճառներով ճանաչված է հետևյալ դեպքերում՝

- աննշան ոտնձգությունների (օրինակ՝ գիշերային անդորրը խանգարելը բարձր երգելով կամ մարդկանց բազմության մեջ հրմշտելով առաջ գնալը),
- իրավական բարիքների միջև ճշացող անհամապատասխանության (օրինակ՝ գողնով փախչող գողի վրա կրակելը. բոլոր դեպքերում ամեն ինչ կախված է կոնկրետ դեպքի հանգամանքներից),
- ակնհայտորեն առանց մեղքի կամ մոլորության ազդեցության տակ գործողների ոտնձգության,
- մոտիկ ազգականների ոտնձգությունների,
- անհրաժեշտ պաշտպանության մեղավոր սադրանքի (ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 7-րդ մաս):

ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 7-րդ մասն ըստ էության հակասում է նույն հոդվածի 1-ին մասին, ըստ որի՝ անհրաժեշտ պաշտպանության վիճակ առկա է քրեական օրենսգրքով արգելված

<sup>54</sup> BGH 13.9.2017 – 2 StR 188/17.

<sup>55</sup> BGHSt 27, 336 (337); BGH NStZ 1998, 508; 2015, 151 (152).

<sup>56</sup> BGH NStZ-RR 2007, 199 (200).

<sup>57</sup> Jakobs 12/32.

<sup>58</sup> BGH StV 1986, 15; Roxin ZStW 75, 541 ff.

<sup>59</sup> BGH JR 2012, 204 (206); BGH NStZ-RR 2013, 105 (106); BGH 25.10.2017 – 2 StR 118/16.

<sup>60</sup> BGH 7.12.2017 – 2 StR 252/17.

<sup>61</sup> BGH NStZ-RR 2004, 10 f.

<sup>62</sup> Մանրամասն տես Warda Jura 1990, 344 ff., 393 ff., քննադատաբար NK-Kindhäuser Rn. 90, պաշտպանական գործողության շրջանակում հրազենի կիրառման մասին տես Petersen JA 2017, 502 (504):

<sup>63</sup> BGHSt 39, 374 (378); Matt NStZ 1993, 271 (272); Schroth NJW 1984, 2562; Hassemer Bockelmann-FS 225 (228 ff.); Koch ZStW 104, 785 (819 f.).

հակահրավական ոտնձգության դեպքում: Անգամ ոտնձգողին սադրելու դեպքում նրա ոտնձգությունը հակահրավական է ու այդ պատճառով առաջացնում է անհրաժեշտ պաշտպանության վիճակ: Այլ հարց է, որ սոցիալ-էթիկական պատճառներով նման դեպքում պետք է սահմանափակել սադրողի պաշտպանական գործողությունը: Հետևաբար, սադրանքը ոչ թե անհրաժեշտ պաշտպանության վիճակի, այլ պաշտպանական գործողության խնդիր է: Ավելի պարզ՝ թեև սադրանքի դեպքում էլ է առկա անհրաժեշտ պաշտպանության վիճակ, բայց սադրողն սկզբունքորեն պաշտպանվելու իրավունք չունի, քանի որ ինքն է առաջացրել այդ վիճակը: Բացի դրանից, օրենսդիրը, ցավոք, չի տարբերակում *դիտավորյալ* սադրանքը սադրանքի մյուս ձևերից: Սադրանքի տարբեր ձևերը միևնույն վերաբերմունքի արժանացնելն արդարացված չէ<sup>64</sup>: ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 7-րդ մասի կարգավորումն արդարացի է թվում միայն *դիտավորյալ* սադրանքի դեպքում, երբ սադրողի նպատակն անհրաժեշտ պաշտպանության վիճակ առաջացնելն է դրա քողի տակ ոտնձգողին վնաս պատճառելու համար: Ոչ դիտավորյալ, բայց մեղավոր սադրանքի մյուս դեպքերի համար, երբ սադրողը թեև անհրաժեշտ պաշտպանության վիճակ առաջացնելու նպատակ չի հետապնդում, բայց պարտավոր էր գիտակցել իր գործողություններին ոտնձգողի ագրեսիվ արձագանքի հնարավորությունը, կիրառվում է այսպես կոչված «**երեք աստիճանի տեսությունը**», որը ոչ թե արգելում է պաշտպանվելը, այլ սահմանափակում է այն<sup>65</sup>:

Իբրև անհրաժեշտ պաշտպանության նորմատիվ սահմանափակման հիմքեր՝ այլնի թվում,

նշվում է՝ անհրաժեշտ պաշտպանության իրավունքից օգտվելը չպիտի լինի իրավունքի չարաշահում (գերիշխող կարծիք)<sup>66</sup>: Անհրաժեշտ պաշտպանության համար նույնպես որոշակի ծավալով գործում է համաչափության սկզբունքը,<sup>67</sup> որոշակի ոտնձգություններից պաշտպանվելիս առկա չէ իրավակարգի պահպանության շահ<sup>68</sup>:

#### IV. Անհրաժեշտ պաշտպանության սուբյեկտիվ կողմը

Անհրաժեշտ պաշտպանության սուբյեկտիվ կողմը կոչվում է «պաշտպան(վ)ելու կամք»: Այս պաշտպանվելու կամքի մանրամասները վիճելի են.

1. Մասամբ պահանջվում է, որ պաշտպանվողը գործի պաշտպանվելու մտադրությամբ, որը, սակայն, չպետք է պարտադիր լինի միակ շարժառիթը<sup>69</sup>: Այս մոտեցման օգտին խոսում է օրենքի բառացի տեքստը ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ. 1-ին մասում («պաշտպանելիս»):

2. Ըստ գիտության մեջ մեծամասնության կարծիքի՝ անհրաժեշտ պաշտպանության սուբյեկտիվ կողմի համար բավարար է անհրաժեշտ պաշտպանության վիճակի մասին իմացությունը և ոտնձգությունը վերացնելու գիտակցությամբ գործելը<sup>70</sup>: Փաստարկը՝ վարքի որակումը իբրև հակահրավական, չի կարող հիմնվել միայն շարժառիթների վրա<sup>71</sup>:

Սուբյեկտիվ կողմի առնչությամբ խիստ վիճելի է այն հարցը, թե արդյոք պաշտպանվելու կամքի բացակայությունը օբյեկտիվորեն առկա անհրաժեշտ պաշտպանության վիճակի պարագայում հանգեցնում է քրեական պատասխանատվության ավարտված հանցագործության, թե միայն հանցափորձի համար<sup>72</sup>:

<sup>64</sup> Այս մասին մանրամասն տե՛ս հանդեսի այս համարում տպագրված խնդիրը:

<sup>65</sup> Երեք աստիճանի տեսության մասին մանրամասն տե՛ս հանդեսի այս համարում տպագրված խնդիրը:

<sup>66</sup> BGHSt 24, 356; Roxin/Greco I § 15/56.

<sup>67</sup> Schroeder Maurach-FS 127 ff.

<sup>68</sup> Jescheck/Weigend § 32 III 3; Krause Kaufmann, H.-GS 673 (686).

<sup>69</sup> BGH NStZ 2007, 325; NJW 2013, 2133 (2135); NStZ 2016, 333; Fischer Rn. 25 f.; Rengier AT § 18/104.

<sup>70</sup> M/R-Engländer Rn. 63; Frisch Lackner-FS 113 (135 ff.); Frister 14/24 f.; Hruschka 437 f.; Kindhäuser, Gefährdung als Straftat, 1989, 114 f.; Meyer GA 2003, 807 ff.

<sup>71</sup> Kindhäuser/Hilgendorf, LPK-StGB, 2022, § 32 Rn. 38.

<sup>72</sup> Այդ վեճի վերաբերյալ առկա տեսությունների մասին մանրամասն տե՛ս, օրինակ, Rengier AT § 18 Rn. 103 ff.; Kühl AT § 6 Rn. 11 ff.

**ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական համագործակցության վարչության դատախազ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության ամբիոնի սպիրանտ

**ՀԱՆՁՆՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ, ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ԱՅԼ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ**

Քրեական դատավարության ոլորտում պետությունների միջազգային համագործակցության շրջանակներում կիրառվող արդյունավետ իրավական գործիքներից է էքստրադիցիայի (հանձնման) ինստիտուտը, որի միջոցով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ապահովվում է հանցանք կատարած անձի նկատմամբ պատասխանատվության և պատժի անխուսափելիության սկզբունքը:

Իրավաբանական գրականության ուսումնասիրությունից ակնհատ է, որ հանձնման (էքստրադիցիայի) ինստիտուտի ուսումնասիրության նկատմամբ մեծացել է հետաքրքրությունը թե՛ տեսական, թե՛ գործնական ոլորտում:

Միևնույն ժամանակ, չնայած հանձնման (էքստրադիցիայի) ինստիտուտի ուսումնասիրության բարձր մակարդակին, իրավաբանական գրականության մեջ և միջազգային հանրության կողմից հատկացված ուշադրությունը հանձնման ինստիտուտի իրավական հիմքի կարգավորմանը ոչ գիտության, ոչ օրենսդրության, ոչ էլ գործնական ոլորտում չի ձևավորվել միատեսակ մոտեցում քննարկվող ինստիտուտի կիրառման և իրավական բնույթի վերաբերյալ:

Քննարկվող ինստիտուտի հետ կապված խնդրահարույց հարցերից առաջինը վերաբերում է տերմինների հետ կապված անհստակությանը:

Առաջին հերթին անհրաժեշտ է հստակեց-

նել փոխանցում և հանձնում հասկացությունները, ինչը հնարավորություն կտա ճիշտ հասկանալու և տարբերակելու պետությունների միջազգային համագործակցության ոլորտում կիրառվող անձանց փոխանցման գործընթացը, որն իր բովանդակությամբ տարբերվում է, սակայն իրականացվող գործընթացի առումով նմանվում հանձնման ինստիտուտին:

Միանգամից հարկ է նշել, որ էքստրադիցիա և հանձնում տերմինները չեն առաջացնում լուրջ բանավեճի տեղիք և որպես կանոն տեսաբանների հիմնական մասը ընկալում է դրանք որպես նույնական: Չնայած որոշ դեպքերում՝ կան նաև այլ տեսակետներ<sup>1</sup>:

Իրավաբանական մեծ բառարանում առկա է հետևյալ սահմանումը՝ «հանցագործների հանձնում (էքստրադիցիա) – հանցագործի փոխանցումը այն պետության կողմից, որի տարածքում վերջինս գտնվում է այն պետությանը, որը ներկայացրել է միջնորդությունը՝ խնդրելով իրեն հանձնել հանցանք կատարած անձին, վերջինիս քրեական հետապնդման ենթարկելու կամ վերջինիս նկատմամբ ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու նպատակով<sup>2</sup>:

Միևնույն ժամանակ, նույն բառարանի 689 էջում առկա է մեկ այլ սահմանում՝ էքստրադիցիա՝ հանձնում մի պետության կողմից մյուսին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով<sup>3</sup>:

Ինչպես տեսնում ենք, հանձնման առաջին սահմանման մեջ խոսքը գնում է քրեական պա-

<sup>1</sup> Sնւ Բоманов А.К., Лысягин О.Б. Институт экстрадиции: понятие, концепции, практика // Право и политика. - № 3. - 2005. - С. 91-98.  
<sup>2</sup> Sնւ 3 Большой юридический словарь / Под ред. А.Я. Сухарева, В.Е. Крутских. - 2-е изд., перераб. и доп. - М.: ИН-ФРА-М, 2002. - с. 107.  
<sup>3</sup> Sնւ Большой юридический словарь / Под ред. А.Я. Сухарева, В.Е. Крутских. - 2-е изд., перераб. и доп. - М.: ИН-ФРА-М, 2002. - с. 689.

տասխանատվության ենթարկելու կամ ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու համար անձի փոխանցման մասին, իսկ երկրորդ դեպքում միայն քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով անձի հանձնման մասին:

Ռ.Մ. Վալենի կարծիքով՝ հանձնման տակ պետք է հասկանալ իրավական օգնության ակտ հիմնված միջազգային պայմանագրերի, սկզբունքների և համընդհանուր ճանաչում ստացած նորմերի վրա, որի բովանդակությունն է կազմում մի պետության կողմից (որի տարածքում անձը գտնվում է) մեղադրյալի կամ ամբաստանյալի հանձնում վերջինիս հանձնումը պահանջող պետությանը (որի տարածքում անձը կատարել է հանցանքը կամ որի քաղաքացին է) կամ պետությանը, որը տուժել է հանցանքից, վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու կամ ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու համար<sup>4</sup>:

Լ.Ն.Գալենսկայի կարծիքով՝ հանձնումը կարելի է բնորոշել, որպես միջազգային իրավունքի նորմերին համապատասխան հանցանք կատարած անձի հանձնում այլ պետությանը քրեական պատժի իրագործման նպատակով<sup>5</sup>:

Վ.Շ.Տաբալդիևան բնորոշում է այն, որպես մի պետության կողմից անձի փոխանցում մյուս պետությանը քրեական հետապնդման կամ դատավճռի իրագործման նպատակով<sup>6</sup>:

Ե.Վ. Կարասևան նշում է, որ անձի հանձնումը ոչ թե մի պետության կողմից մեկ այլ պետությանը անձի հանձնման գործընթաց է այլ պետության իրավասու մարմինների կողմից իրականացվող գործողությունների համակցություն՝ ուղղված անձի հարկադիր փոխանցման ապահովմանը մեկ այլ պետության իրավասու մարմիններին<sup>7</sup>:

Լ.Վ. Ինոգամովան իր՝ «Միջազգային քրեական իրավունք» աշխատության մեջ նշում է՝ հանձնումը հանցանք կատարած անձի փոխանցումն է հայցող պետությանը այն պետության կողմից, որի տարածքում վերջինս գտնվում է<sup>8</sup>:

Տ.Ն Մոսկալկովի կարծիքով հանձնման տակ հասկացվում է հանցանք կատարած անձի վերադարձը այն պետության կողմից, որի տարածքում վերջինս գտնվում է, այն պետությանը, որի տարածքում տվյալ անձը կատարել է հանցանքը, կամ որի քաղաքացին է նա վերջինիս նկատմամբ քննություն և արդարադատություն իրականացնելու նպատակով, ինչին նախորդում տվյալ անձի հետախուզումը, հայտնաբերումը և ձերբակալումը<sup>9</sup>:

Վ.Ս.Վոլժենկինան հանձնումը սահմանում է, որպես գործընթաց համաձայն որի՝ պետությունը, որի քրեական իրավասության կողմից հետապնդվում է անձը հայցում և ստանում է վերջինիս այն պետությունից, որում վերջինս թաքնվում էր, նպատակ հետապնդելով՝ քրեական պատասխանատվության ենթարկել վերջինիս կամ ապահովել դատավճռի կատարումը<sup>10</sup>:

Վերը ներկայացված, ինչպես նաև հանձնման հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեցող այլ սահմանումների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ բազմաթիվ հեղինակներ հանձնումը բնորոշում են փոխանցում հասկացության միջոցով, որն իր հերթին արտահայտում է այլ, հանձնումից իր իրավական բնույթով և բովանդակությամբ սկզբունքորեն տարբերվող ինքնուրույն և ձևավորված քրեական իրավունքի ոլորտում պետությունների միջազգային համագործակցության գործընթաց:

Ավելին, առանձին հեղինակներ հանձնմանը վերաբերող հարցեր քննարկելիս, նշում են,

<sup>4</sup> Տ՛իս Валеєв Р.М. Выдача преступников в современном международном праве (Некоторые вопросы теории и практики). – Казань, 1976. – с. 19-65.

<sup>5</sup> Տ՛իս 7 Галенская Л.Н. Международная борьба с преступностью. – М., 1972. – с. 122.

<sup>6</sup> Տ՛իս Табалдиева В.Ш. Международное сотрудничество в сфере уголовного судопроизводства: Учебное пособие. – М.: Издательство Московского психолого-социального института; Воронеж: Издательство НПО «МОДЭК», 2004. – с. 62.

<sup>7</sup> Տ՛իս Карасева Е.В. Расследование отдельных видов преступлений в сфере экономики и международное сотрудничество по уголовным делам. – М.: Московский психолого-социальный институт, 2005. – с. 83.

<sup>8</sup> Տ՛իս Иногамова-Хегай Л.В. Международное уголовное право. – СПб., 2003. – с. 130.

<sup>9</sup> Տ՛իս Уголовный процесс: Учебник для студентов вузов, обучающихся по специальности «Юриспруденция» / Под ред. В.П. Божьева. 4-е изд., перераб. и доп. – М.: Спарк, 2004. – с. 626.

<sup>10</sup> Տ՛իս Волженкина В.М. Нормы международного права в российском уголовном процессе. – СПб.: Издательство «Юридический центр Пресс»; Санкт-Петербургский юридический институт Генеральной прокуратуры РФ, 2001. – с. 183.

որ տվյալ տերմինն իր մեջ ներառում է, ոչ միայն հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու նպատակները, այլև պատժի կրումն այն պետությունում, որի քաղաքացին է վերջինս: Ինչպես արդարացիորեն նշում են այլ հեղինակներ, չնայած հանձնման և դատապարտյալների փոխանցման գործընթացների արտաքին նմանություններին՝ դրանց հիմքում ընկած են սկզբունքային տարբերություններ<sup>11</sup>:

Այդպիսի տարբերություններից մեկն, օրինակ, այն է, որ ի տարբերություն դատապարտյալների փոխանցման հանձնումը կիրառվում է նաև հանցանքի կատարման մեջ կասկածվող և մեղադրվող անձանց նկատմամբ, կամ օրինակ, եթե փոխանցման նախաձեռնող պետություն կարող է լինել, ինչպես դատավճիռ կայացրած, այնպես էլ այն ի կատար ածող պետությունը, ապա հանձնման դեպքում նախաձեռնող է հանդիսանում դատավճիռ կայացրած պետությունը, որը զրկված է այն ի կատար ածելու հնարավորությունից, քանի որ հանցանք կատարած անձը թաքնվում է այլ պետության տարածքում:

Տարբերություններից է նաև հանցանք կատարած անձի ցանկության հաշվի առնումը, որը որպես կանոն նշանակություն չունի հանձնման դեպքում (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), բայց որոշիչ է պատժի կրման նպատակով իր քաղաքացիության երկիր փոխանցելու համար և այլն:

Այուս հարցը, որին կցանկանայինք անդրադառնալ տվյալ աշխատության շրջանակներում հանձնման իրավական բնյութի պարզումն է:

Իրավաբանական գրականության մեջ մինչև այժմ գոյություն չունի միատեսակ մոտեցում, թե իրավունքի որ ճյուղին է պատկանում հանձնման ինստիտուտը՝ քրեական, քրեական դատավարության, միջազգային, վարչական, թե սահմանադրական: Հանձնման ինստիտու-

տի՝ իրավունքի ճյուղերից մեկին պատկանելու վերաբերյալ հեղինակների տեսակետները բաժանվում են հետևյալ խմբերի:

Հեղինակների առաջին խմբի կարծիքով հանձնման ինստիտուտը պատկանում է իրավունքի տարբեր ճյուղերին: Օրինակ՝ Մ.Գ. Շարգորոդսկիի կարծիքով քննարկվող ինստիտուտը միջազգային, պետական և քրեական իրավունքի խառնուրդ է, միաժամանակ նշելով՝ որ հանձնումը պետական ինքնիշխանություն իրականացնող պետության բարձրաստիճան մարմինների ակտ է և ոչ թե դատական կամ վարչական ակտ<sup>12</sup>:

Հեղինակների երկրորդ խումբը հանձնումը դիտում են որպես միջազգային իրավունքի ինքնուրույն ինստիտուտ, որը իր մեջ պարունակում է նյութական և դատավարական իրավունքի նորմեր:

Ա.Խ. Աբաշիձեն և Յու.Գ.Վասիլևը բնորոշելով հանձնման ինստիտուտը որպես համակարգային իրավաբանական ֆենոմեն, նշում են, որ այն միջազգային քրեական իրավունքի համակարգում դիտվում է դատավարական և զուտ նյութական նորմերի համատեքստում<sup>13</sup>: Ըստ որոշ հեղինակների՝ հանձնման ինստիտուտի որակական բաղադրիչներից է դրա բազմահամակարգային բնույթը, որն իր արտահայտությունն է գտնում նրանում, որ այն իր մեջ ներառում է միջազգային և ազգային իրավունքի նորմերը, ինչն էլ հնարավորություն է տալիս բնորոշելու այն որպես ինքնուրույն իրավական ինստիտուտ:

Հեղինակների երրորդ խմբի համար բնորոշ է հանձնման ինստիտուտի կամ նյութական, կամ դատավարական բնույթի շեշտադրումը: Մասնավորապես, Մ.Վ. Վոլժենկինան նշում է, որ հանձնման ինստիտուտի դատավարական բովանդակությունն է կազմում ընդհանուր և հատուկ դրա համար ձևավորված քրեադատավարական ընթացակարգերի համակցությունը<sup>14</sup>:

<sup>11</sup> Sեն Колибаб К.Е. Институт передачи осужденных для отбывания наказания в другие государства // Журнал российского права. - № 5/6. - 1999. - С. 90.

<sup>12</sup> Sեն Шаргородский М.Д. Уголовный закон. - М., 1948. - с. 290, 300.

<sup>13</sup> Sեն Абашидзе А.Х., Васильев Ю.Г. Институт экстрадиции в современном международном праве // Юрист-международник. - 2003. - № 3. - С. 14-16.

<sup>14</sup> Sեն Волженкина В.М. Выдача в российском уголовном процессе. - М.: ООО Издательство «Юрлитинформ», 2002. - с. 183.

Համանման տեսակետ է արտահայտել նաև Ռ.Մ. Վալեևը, վերջինիս կարծիքով՝ հանցանք կատարած անձանց հանձնմանը վերաբերող հարցերը պետք է քննարկել դատավարական իրավունքի ոլորտում<sup>15</sup>:

Այլ հեղինակների կարծիքով՝ դատավարական նորմերը ունեն էական նշանակություն հանձնման գործընթացի կարգավորման համար: Հանձնման ընթացքում իրականացվող մի շարքը գործողություններ (անձի ձերբակալում, որոշման բողոքարկում, կալանավորում և այլն) կրում են դատավարական բնույթ և կարգավորվում են դատավարական իրավունքի նորմերով: Սակայն այս հանգամանքը բավարար հիմք չէ հանձնման ինստիտուտը բացառապես քրեադատավարական իրավունքի համատեքստում դիտարկելու համար<sup>16</sup>:

Հանձնումը բարդ իրավաբանական գործընթաց է, որի գործնական կիրառումը առանց սահմանադրական, քրեական, քրեադատավարական իրավունքի նորմերի հնարավոր չէ:

Այդ պատճառով հարկ է նշել, որ հանձնման ինստիտուտը իր մեջ ներառում է նորմեր իրավունքի տարբեր ճյուղերից: ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է նյութաիրավական հիմքեր հանցանք կատարած և դատապարտված անձի հանձնման համար: Հանձնման ինստիտուտի նյութական հիմքերը, այսինքն՝ այն

ինչ նախորդում է հանձնմանը և հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության սահմանները, այսինքն՝ այն ինչ հաջորդում է հանձնմանը, պատկանում են քրեական իրավունքի ոլորտին:

Միևնույն ժամանակ, քրեադատավարական նորմերը, որոնք իրենցից ներկայացնում են կազմակերպչաբացակարգային բնույթի վարքագծի կանոններ, սահմանում են նյութական իրավունքի նորմերի իրացվելիության կարգը, ձևը և մեթոդները: Հետևաբար, հանձնման գործնական կիրառումը, ինչպես նաև համապատասխան պետությունների իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց համագործակցությունը չի կարող տեղի ունենալ քրեադատավարական իրավունքից դուրս:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ հանձնումը մի գործողություն չէ, այլ իրար հաջորդող դատավարական գործողություններից բաղկացած գործընթաց, որը կապված է հանձնման նախապատրաստման, բուն հանձնման և դրա հետևանքների հետ: Այդ պատճառով հանձնումը՝ որպես բարդ, դատավարական իրավունքի նորմերով հագեցած և ընթացակարգային բնույթի կանոններով ինստիտուտ հարկ է դիտարկել քրեադատավարական իրավունքի ոլորտում:



<sup>15</sup> Stiu Valeev P.M. Выдача преступников в современном международном праве (Некоторые вопросы теории и практики). – Казань, 1976. – с. 91.

<sup>16</sup> Stiu Сафаров Н.А. Экстрадиция в международном уголовном праве: проблемы теории и практики. – М.: Волтерс Клувер, 2005. – с. 19-20.



**ԶԱՐՈՒՇԻ ՊԱՊՈՅԱՆ**

ԵՊՀ, Իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս  
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան,  
«ԱՐԱՏՏԱ ՔԸՆՍԱԼԹԻՆԳ» սահմանափակ պատասխանատվության ընկերության իրավախորհրդատու

## **ԲԶԶԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԵՐՄ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿՆԵՐԻՆԵՐԸ**

Անլար տեխնոլոգիաների և շարժական սարքերի ի հայտ գալը, հսկայական փոփոխություններ են կատարել մեր կյանքում: Բջջային հեռախոսների վերջին տեխնոլոգիական առաջխաղացումները և «Իսելաջի» հեռախոսների զարգացումը հանգեցրել են բջջային հեռախոսի օգտագործման և կախվածության աճին: Այդ մասին էին վկայում նաև «Էրիքսոն» ընկերության գործադիր տնօրեն՝ Հանս Վեստերգրի կողմից 2010 թվականին կատարված կանխատեսումներն այն մասին, որ մինչև 2020 թվականը 50 միլիարդ սարք կմիացվի ցանցին՝ ներկայիս հինգ միլիարդի համեմատ<sup>1</sup>: Այն հաստատում է ավելի վաղ արված կանխատեսումը, որ մինչև 2020 թվականը բջջային հեռախոսները կլինեն թվային հաղորդակցության առաջնային սարքերը<sup>2</sup>: Չնայած փոքր չափսերին՝ սմարթֆոններն ի վիճակի են կատարել շատ առաջադրանքներ՝ ուղարկել անձնական հաղորդագրություններ, լուսանկարներ և տեսանյութեր նկարել, առցանց գնումներ և բանկային գործարքներ կատարել, սակայն բջջային սարքերն օգտագործվում են նաև հանցավոր նպատակներով, օրինակ, էլեկտրոնային փոստով խարդախություն, տեքստային հաղորդագրությունների միջոցով ոտնձգություններ կատարելը, ինչպես նաև ահաբեկչությունը և թմրանյութեր վաճառելը<sup>3</sup>:

Հեռախոսն այլևս մեզ ուղղակիորեն կապում է այլոց հետ, երբ մենք միջանձնային աշխարհից աստիճանաբար տեղափոխվում ենք թվայինի, արդյունքում ոչինչ մասնավոր չի մնում, ուստի սմարթֆոնում առկա առանձնահատկությունները տրամադրում են տեղեկատվության «Ոսկու հանք», որը կարող է՝ օգտակար լինել հանցագործությունների քննության համար: Բջջային հեռախոսները, ընդհանուր առմամբ, պատկանում են մեկ անձի, հետևաբար դրա վերլուծությունը կարող է բացահայտել բազմաթիվ անձնական տեղեկություններ: Իրավական միտքի կողմից ձևավորվել է տեսակետ, որ սմարթֆոններում գտնվող տեղեկատվության աղբյուրը կարող են լինել՝ տեքստային հաղորդագրությունները, զանգերի տեղեկամատյանները, հեռախոսահամարների ցուցակը, էլ.փոստի հաղորդագրությունները, զննարկչի պատմությունը, զրույցի տեղեկամատյանները և նույնիսկ GPS հետագծի կետերը<sup>4</sup>: Հետևաբար, բջջային սարքն այժմ հսկայական զգայուն տվյալների պահեստ է:

Ակներև է, որ սմարթֆոններում պահվում են տեղեկություններ, որոնք կարող են օգտագործվել իրավապահների կողմից՝ որպես հանցագործությունների բացահայտման արդյունավետ միջոցներ: Այս հանգամանքը, ինքնին հան-

<sup>1</sup> Տե՛ս Higginbotham S. Ericsson CEO Predicts 50 Billion Internet Connected Devices by 2020 2010. Available from: <https://gigaom.com/2010/04/14/ericsson-sees-the-internet-of-things-by-2020/>: (Դիտվել է 15.12.2021 թ.)  
<sup>2</sup> Տե՛ս Brodtkin J. Mobile phones to be primary Internet device by 2020, experts predict 2008. Available from: <http://www.networkworld.com/article/2271392/lan-wan/mobile-phones-to-be-primary-internet-device-by2020—experts-predict.html>(Դիտվել է 20.12.2021թ.):  
<sup>3</sup> Տե՛ս Ali A, Razak SA, Othman SH, Mohammed A, editors. Towards Adapting Metamodeling approach for the Mobile Forensics Investigation Domain. International Conference on Innovation in Science and Technology (IICIST); 2015; UniversitiTeknologi Malaysia, Kuala Lumpur, Malaysia:  
<sup>4</sup> Տե՛ս Alexios Mylonas, Vasilis Meletiadiis, Bill Tsoumas, Lilian Mitrou and Dimitris Gritzalis, “Smartphone Forensics: A Proactive Investigation Scheme for Evidence Acquisition.”, a chapter in Information Security and Privacy Research, էջ 249-260, Springer Berlin Heidelberg, 2012:

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 128 2022

գեցրել է բջջային սարքերի փորձաքննությունների էվոլյուցիայի, որը թվային դատական փորձաքննության ճյուղ է, և զբաղվում է բջջային սարքից տվյալների ստացմամբ<sup>5</sup>:

Հարկ է նկատել, որ բջջային սարքերի փորձաքննությունը թվային փորձաքննության այն տեսակն է, որը տարբերվում է համակարգչային փորձաքննությունից, քանի որ շարժական սարքերն ունեն ներկառուցված կապի համակարգ, որն օգտակար է գտնվելու վայրի հետ կապված տեղեկատվություն ստանալու համար<sup>6</sup>:

Այսպիսով՝ բջջային հեռախոսի փորձագիտական վերլուծությունն ընդունված մեթոդների միջոցով՝ բջջային հեռախոսից թվային ապացույցները վերականգնելու գիտությունն է: Բջջային սարքերի փորձաքննությունը գիտելիքների և պրակտիկայի բնագավառ է, որի նպատակն է բարձրորակ, փաստական, համապատասխան և վավերական ապացույցներ ձեռք բերել ու այդպիսով օժանդակել իրավապահ մարմիններին: Բջջային սարքերի փորձաքննությունն իրականացվում է հատուկ տեխնիկական միջոցներով, որոնք հնարավոր են դարձնում բջջային սարքից տվյալների առգրավումը, պահպանումը, որոնց վերլուծության արդյունքում ստացվում են ապացույցներ, որոնք կարող են հաջողությամբ օգտագործվել իրավապահ մարմինների կողմից հանցագործություններ բացահայտելու համար<sup>7</sup>: ՀՀ-ում ևս իրականացվում են բջջային սարքերից տվյալների ստացմանն ուղղված փորձաքննություններ<sup>8</sup>:

Այնուհանդերձ, թվային փորձագիտական հանրությունը կանգնած է մշտական մարտահրավերի առջև իրագել լինելու այն վերջին տեխնոլոգիաներին, որոնք կարող են օգտագործվել հետաքննության մեջ անհրաժեշտ բացահայտումներ կատարելու համար<sup>9</sup>: Այլ խոսքով՝ իրավապահ մարմինները կարող են մարտահ-

րավերների հանդիպել՝ սմարթֆոնում պահվող կարևոր տեղեկատվության և կենսական տվյալների կորստի հարցում: Սմարթֆոնների դատական փորձաքննությունը, որպես թվային փորձաքննությունների կարևոր ձև, դարձել է տեղեկատվական անվտանգության ոլորտում հետազոտությունների նոր ուղղություն:

Այս հոդվածում մենք փորձ կանենք ներկայացնել, թե ինչպես ուսումնասիրել և վերլուծել սմարթֆոններում առկա տվյալներն՝ օգտագործելով արդի տեխնոլոգիական մեթոդները և միջոցները: Մասնագիտական գրականության մեջ տարբեր հեղինակների տեսակետները վերլուծելով՝ կարող ենք հավաստել, որ փորձաքննության այս տեսակի խնդիրների վերահսկման համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել սմարտֆոնի հայտնաբերումից մինչև դրանում առկա տվյալների վերլուծության փուլերն՝ անհրաժեշտ ուշադրությամբ: Հոդվածի հաջորդող հատվածը կնվիրենք վերը նշված բոլոր հարցերին՝ ավելի մանրամասն անդրադարձ կատարելուն:

Տեղեկատվական անվտանգության եվրոպական գործակալության (ENISA), 2015 թվականի հրատարակած ուղեցույցում նշվում է, որ բջջային սարքերի փորձաքննությունը և ընդհանուր առմամբ թվային հետազոտությունները կարող են բաժանվել մի քանի փուլերի՝ բջջային սարքի առգրավում և տվյալների ձեռքբերում, քննություն և վերլուծություն, պատճառաբանություն և զեկուցում<sup>10</sup>: Այսպիսով՝ գիտական և փորձագիտական հանրությունն առանձնացնում են փորձաքննության իրականացման հետևյալ փուլերը՝ **առգրավում, պահպանում, ձեռքբերում, փորձաքննություն, ինչպես նաև վերլուծություն և ներկայացում**<sup>11</sup>:

Շարժական սարքի առգրավուման փուլը կարևոր նշանակություն ունի, քանի որ բջջային հեռախոսները հանդես են գալիս, որպես

<sup>5</sup> Տե՛ս H. Rohit, T. Bommisetty Forensics. A hands-on guide to mastering mobile forensics for the iOS, Android, and the Windows Phone platforms Second Edition 2016 p. 25:  
<sup>6</sup> Տե՛ս [https://www.tutorialspoint.com/python\\_digital\\_forensics/python\\_digital\\_mobile\\_device\\_forensics.htm](https://www.tutorialspoint.com/python_digital_forensics/python_digital_mobile_device_forensics.htm)  
<sup>7</sup> Տե՛ս «Mobile Threats Incident Handling» European Union Agency for Network and Information Security (ENISA), էջ 10, 2015:  
<sup>8</sup> Տե՛ս <http://www.nbe.am/>, «Փորձաքննությունների ազգային բյուրո» (Դիսվել է 25.11.2021թ.):  
<sup>9</sup> Տե՛ս <http://gcn.com/Articles/2014/06/16/forensics-technology-race.aspx?Page=2> [http://jackson, W., Can digital forensics keep up with Smartphone Tech\(Դիսվել է 10.12.2021թ.\):](http://jackson, W., Can digital forensics keep up with Smartphone Tech(Դիսվել է 10.12.2021թ.):)  
<sup>10</sup> Տե՛ս «Mobile Threats Incident Handling» European Union Agency for Network and Information Security (ENISA), էջ 15, 2015:  
<sup>11</sup> Տե՛ս W. Jansen and R Ayers, “Guidelines on Cell Phone Forensics,” National Institute of Standards and Technology NIST, Technology Administration, U.S. Department of Commerce, USA, Tech. Rep. NIST Special Publication 800-101, 2007:

մատնահետքերի և այլ կենսաբանական հետքերի ապացույցի լավ աղբյուրներ, ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է խուսափել այլ հետքաբանական տվյալների կորստից: Ակներև է, որ ապացույցների պահպանումը թվային փորձաքննության ոլորտում խիստ կարևոր է, քանի որ պահպանելով ապացույցների ստացման շղթայի ամբողջականությունը քննության ընթացքում, կարող ենք որոշել գործի դրական ելքը:

Թվային ապացույցները պահպանելու համար անհրաժեշտ է փաստաթղթավորել՝ սմարթֆոնի առգրավվումից մինչև դրանցից ստացված տվյալների ներկայացում, ինչպիսիք են՝ քննիչի անունը, առգրավվման ժամանակը և ամսաթիվը յուրաքանչյուր քայլի ընթացքում, ապացույցների տեղափոխման այլ մանրամասները: Ապացույցների պահպանման փուլում քննիչը պետք է պահպանի բջջային հեռախոս սարքն իր սկզբնական վիճակում: Սա նշանակում է, որ ոչ մի տվյալ չպետք է փոփոխության ենթարկվի հանցագործության վայրը պահպանության առնելուց հետո<sup>12</sup>: Անհրաժեշտ է նշել սարքի կարգավիճակը, անկախ նրանից անջատված է, թե միացված: Եթե այն միացված է, ապա անհրաժեշտ է ստուգել մարտկոցի կարգավիճակը, ցանցի կարգավիճակը: Հնարավոր է, որ հանցագործը կարող է հեռակա կերպով ջնջել տվյալները կամ որևէ նոր գործողություն կարող է ազդել առկա տվյալների մեջ փոփոխություններ մտցնելու հարցում: Մեծ Բրիտանիայի ոստիկանության գլխավոր սպաների ասոցիացիան (ACPO) մշակել է համակարգչային էլեկտրոնային ապացույցների համար ուղեցույց, որը պարունակում է այդպիսի ապացույցների վարման կանոններ:

Ուղեցույցում առաջարկվում է, որ բջջային հեռախոսը պետք է մեկուսացված լինի ցանցից՝ սարքը անջատելով կամ այն վահանով ապահով կոնտեյներով տեղադրելով, որպեսզի անցանկալի փոփոխություններ չլինեն, ինչը կարող է վտանգել կարևոր տեղեկատվությունը: Այսպիսով՝ առաջին քայլը պետք է լինի բջջա-

յին սարքը ցանցից մեկուսացնելը<sup>13</sup>: Տվյալների ձեռքբերման փուլը սկսվում է այն ժամանակ, երբ սարքը ստացված է փորձագիտական լաբորատորիա՝ պատշաճ պահպանումից, փաթեթավորումից և փոխադրումից հետո: Այս փուլում փորձագետի առաջադրանքն է ձեռք բերել բջջային հեռախոսից տվյալները: Կան մի քանի եղանակներ, որոնք կարելի է կիրառել գնահատելով առկա իրավիճակը: Փորձագետը կարող է հեռացնել SIM քարտը, անցնել «Ինքնաթիռ» ռեժիմին: Փորձագետները նշում են, որ գրեթե անհնար է համագործակցել բջջային սարքի հետ, առանց այն գործարկելու:

Բջջային սարքի փորձաքննության վերլուծության հիմնական դրդապատճառն այն է, որ անհրաժեշտ տվյալները հանվեն սարքից: Հետևաբար, արդյունավետ վերլուծության համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչպիսի տվյալներ են պահվում սարքում, որտեղ է այն պահվում, ինչպես է այն պահվում, և այն ֆայլերի համակարգերի մանրամասները, որոնց վրա պահվում են տվյալները: Այս գիտելիքը շատ կարևոր է փորձագետի համար՝ իրազեկ որոշում կայացնել, թե որտեղ պետք է փնտրել տվյալները և այն մեթոդները, որոնք կարող են օգտագործվել տվյալները հանելու համար:

Ըստ փորձագիտական հանրության՝ տվյալների ձեռքբերումը սմարտֆոններից իրականացվում է հետևյալ եղանակներով.

**1. Իբրև օգտագործող /ձեռքի/ տվյալների ձեռքբերում.** Այս տեսակի ձեռքբերման մեջ դատական փորձաքննությունը հավաքում է ապացույցները բջջային սարքից ձեռքով՝ այն օգտագործելով այնպես, ինչպես սովորական օգտագործողը<sup>14</sup>: Փորձաքննության այս եղանակը հազվադեպ է կիրառվում, քանի որ շատ շարժական սարքեր ունեն գաղտնաբառ կամ այլ անվտանգություն կոդ: Տվյալների կորստի մեծ հավանականություն է առկա այս մեթոդի կրառման դեպքում:

**2. Ֆիզիկական եղանակներով տվյալների ձեռքբերում.** Այս տեսակի ձեռքբերման դեպքում դատական փորձաքննությունը փորձում է

<sup>12</sup> Տե՛ս [http://ec.europa.eu/anti\\_fraud](http://ec.europa.eu/anti_fraud) “Guidelines on Digital Forensic Procedures for OLAF Staff” from 1 January 2014. (Դիտվել է 20.12.2021թ.):

<sup>13</sup> Տե՛ս A. Zareen and S. Baig, “Mobile Phone Forensics Challenges, Analysis and Tools Classification,” in 5th Int. Workshop on Systematic Approaches to Digital Forensic Engineering (SADFE.2010):

<sup>14</sup> Տե՛ս [https://ec.europa.eu/ /ecn/ecn\\_recommendation\\_\\_digital\\_evidence\\_en.pdf](https://ec.europa.eu/ /ecn/ecn_recommendation__digital_evidence_en.pdf) (Դիտվել է 30.12.2021թ.):

պատճենել բջջային սարքի ամբողջ ֆիզիկական պահեստը (Flash հիշողություն)<sup>15</sup>: Այս ձեռքբերումը քննիչին հնարավորություն է տալիս հայտնաբերել ջնջված ֆայլերն ու տվյալները՝ որոշ տեխնիկական գործիքների օգնությամբ:

**3. Տրամաբանական եղանակներով տվյալների ձեռքբերում.** Ապացույցների ստացման երեք տեսակներից տրամաբանականը դիտվում է որպես ամենաարագ, նվազագույնը ներխուժող, բայց առավել սահմանափակ: Այն ստեղծում է օգտագործողի համար մատչելի ֆայլերի պատճենները, ինչպիսիք են՝ հեռախոսագիրքը, զանգերը, հաղորդագրությունները, որոշ ծրագրի տվյալները և այլ տվյալներ, որոնք կարող եք ակնկալել «iTunes»-ից կամ «Android»-ի կրկնօրինակից:

**4. Ֆայլային համակարգի վերականգնման միջոցով տվյալների ձեռքբերում.** Տրամաբանական արդյունքը չի արտացոլում ջնջված ֆայլերում առկա տեղեկատվությունը: «iOS» և «Android» օպերացիոն համակարգերի դեպքում տվյալների բազաները «SQLite» ձևաչափով են: Երբ տվյալների բազան ջնջվում է, այն պարզապես նշվում է հիշողության մեջ և չի հանվում: Ֆայլային համակարգի ձեռքբերման դեպքում նույնիսկ այդ ջնջված տվյալների բազաները կարող են հանվել հիշողությունից:

**5. Կոպիտ միջոցներով տվյալների ձեռքբերում.** Տվյալների ձեռքբերման այս եղանակի դեպքում փորձագետը օգտագործում է՝ «փորձություն և սխալ» մեթոդը, որտեղ ճիշտ գաղտնաբառ ձեռք բերելու համար փոստային ծածկագրերի շարքը 0000-ից 9999-ին ուղարկվում է բջջային սարք: Կան որոշ տեխնիկական գործիքներ և «python» գրություններ, որոնք օգնում են մեզ բջջային սարքի անձնագրերը ձեռք բերել: Կողը կոտրելուց հետո, բջջային հեռախոսում առկա տվյալների ձեռքբերումը դառնում է հասանելի է<sup>16</sup>:

Հարկ է նկատել, որ Բջջային սարքերից տվյալների ստացումը կատարվում է տեխնիկական միջոցների գործադրմամբ, իսկ ստացված տվյալներն ունեն թվային բնույթ, այսինքն՝

**տեղեկատվություն և տվյալներ, որոնք պահվում, ստացվում կամ փոխանցվում են էլեկտրոնային սարքի միջոցով:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալը, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ<sup>17</sup>: Նույն հոդվածի 2-րդ մասում՝ որպես ապացույցի տեսակներ նշվում են՝ փորձագետի եզրակացությունը և իրեղեն ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները, այլ փաստաթղթերը:

Այս համատեքստում հարց է առաջանում, թե բջջային սարքերի փորձաքննության արդյունքում ստացված տվյալները ապացույցների, որ տեսակին են պատկանում: Ըստ քրեական դատավարության օրենսգրքի՝ դրանք փորձագիտական եզրակացություն չենք կարող դիտել, քանի որ, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի, փորձագետի եզրակացությունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատասխանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին: Այս պայմաններում փորձաքննություն իրականացվում է, առավելապես տվյալների բջջային սարքից արդյունահանման նպատակով, ուստի փորձագետի կողմից հատուկ գիտելիքների գործադրումը պայմանավորվում է տեխնիկական միջոցներ գործադրելու կարողությամբ, ուստի տրամաբանական եզրահանգման արդյունք չէ, արդյունքում փորձագետի եզրակացություն ա-

<sup>15</sup> Sten W., Ayers, R. (2007) Guidelines on Cell Phone Forensics, National Institute of Standards and Technology special publication 800-101, May 2007, <http://csrc.nist.gov/publications/nistpubs/800-101/SP800-101.pdf> (Դիտվել է 20.12.2021թ.):  
<sup>16</sup> Sten Willassen, S.Y. (2003) Forensics and the GSM mobile telephone system, International Journal of Digital Evidence, Spring 2003, Vol. 2, No. 1., pp:12-24  
<sup>17</sup> Sten ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ընդունվել է 01.07.1998թ. ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

պացույցի տեսակի մեջ բովանդակային իմաստով չի ընկալվում: Խնդիրն առավել բարդանում է, իրեղեն ապացույցների բովանդակության մեկնաբանման պարագայում, մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության 105-րդ հոդվածի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք **հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել, կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները եւ մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել:**

Անշուշտ, կարելի է բջջային սարքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այս հոդվածի տառացի մեկնաբանման արդյունքում համարել իրեղեն ապացույց, սակայն կարծում ենք, որ միջազգային իրավական միտքն արդարացիորեն գնացել է դեպի թվային ապացույցների՝ որպես ապացույցի նոր տեսակի ընդունման ճանապարհով: Քանի որ թվային ապացույցները կամ էլեկտրոնային ապացույցներն ունեն այլ իրավական բնութագիր, որում հստակ ընդգծվում է դրանց ձևավորման առանձնահատուկ բնույթն: Մասնավորապես, **թվային ապացույցներ են համարվում ցանկացած տեղեկատվություն, որը պահվում կամ էլեկտրոնային ճանապարհով փոխանցվում է**<sup>18</sup>: Ասվածի վկայություն է այն, որ վերջին մի քանի տարիների ընթացքում թվային ապացույցների օգտագործումը հազվադեպ հանդիպող դեպք է, ավելին՝ դատարանները թույլ են տալիս օգտագործել թվային ապացույցներ՝ էլեկտրոնային փոստերից ստացված տեղեկություններ, թվային լուսանկարներ, հաղորդագրությունների պատմություններ, աղյուսակներ, ինտերնետ դիտարկիչի պատմություններ, տվյալների բազաներ, համակարգչային հիշողության պարունակություն, ուստի ավելի քան անհոժեշտ է հատուկ իրավական կարգավորման ենթարկել

թվային ճանապարհով ստացված ապացույցները:

Թվային ապացույցների՝ որպես ապացույցի առանձին տեսակի նախատեսումը հնարավորություն կտա խուսափել բջջային սարքերի փորձաքննության արդյունքում ստացված ապացույցների թույլատրելիության, արժանահավատության և վերաբերելիության հետ կապված բարդությունների առաջացումից: Ի լրումն արտահայտված մտահոգության նշենք, որ ապացույցի այս տեսակի վերաբերյալ անդրադարձ չկա նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում, ինչը մեր գնահատմամբ ժամանակավրեպ կարգավորում է, քանի որ իրավական միտքը և պրակտիկան վաղուց ընդունում են թվային ճանապարհով ստացված ապացույցների առանձին գոյությունը: Ուստի գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է կատարել լրացում՝ որպես ապացույցի տեսակ նշելով «Թվային ապացույցները», այն է՝ **տեղեկատվություն և տվյալներ, որոնք պահվում, ստացվում կամ փոխանցվում են էլեկտրոնային սարքի միջոցով:**

Անդրադառնալով բջջային սարքից ստացված տվյալների վերլուծությանը՝ պետք է նկատենք, որ որպես ստանդարտ գործընթաց, վերլուծության գործիքները պետք վերականգնեն բջջային հեռախոսի հետևյալը տվյալները, մասնավորապես:

Ինտեգրացված միկրոշրջանի ID (ICCID), յուրաքանչյուր SIM քարտ միջազգայնորեն նույնացվում է իր «ICCID»-ի միջոցով: Այս 18 կամ 19 թվանշանային համարը պահվում է SIM-ում: Այս համարի նույնականացման միջոցով փորձագետը պարզում է, թե որտեղից է միջազգային SIM քարտը:

1. Բջջային բաժանորդների միջազգային ինքնություն (IMSI), այս համարը նույնացնում է անհատ օպերատորի ցանցը, որի վրա գործում է SIM քարտը:

2. Բջջային երկրի ծածկագիր (MCC), այս եռանիշ համարը օգտագործվում է նշելու, թե որտեղից է եղել SIM քարտը: Այս կոդերը նույնպես անհրաժեշտ է հավաքել բջջային հեռա-

<sup>18</sup> Stéu Guidelines of the Committee of Ministers of the Council of Europe on electronic evidence (Council of Europe Committee of Ministers website) (Դիտվել է 13.12.2021թ.)



խոսից միջազգային հեռախոսազանգեր կատարելիս:

3. Բջջային ցանցի ծածկագիր (MNC), այս ծածկագիրը օգտագործվում է վերը նշված «MCC»-ի հետ համատեղ՝ ցանցի մատակարարին նույնականացնելու համար, որին պատկանում է SIM քարտը, սա 15 նիշանոց թիվ է, որը եզակիորեն նույնացնում է բաժանորդագրությունը կամ «UTMS», կամ «GSM» ցանցում:

4. Կրճատված համարակալման համարներ (ADN), սա այն թվերի ցուցակն է, որը «SIM» քարտի օգտագործողը պահել է, որպեսզի համարները հեշտությամբ կիրառվեն: Սա պարզապես օգտվողի կոնտակտներն են: Այս թվերը նայելուց հետո վերլուծաբանը կարողանում է տեսնել, թե ով է օգտատերը, կապի մանրամասները, ինչպես նաև այդ համարներին մուտքային և ելքային զանգերը: «SIM»-ի կողմից կատարված կամ ստացված ցանկացած զանգի ժամանակն ու ամսաթիվը նույնպես կարող են վերականգնվել:

5. Կարճ հաղորդագրությունների ծառայություններ (SMS), ավելի հաճախ հայտնի են որպես տեքստային հաղորդագրություններ: Դրանք կարճ հաղորդագրություններ են, որոնք օգտագործողը կարող է ուղարկել մեկ այլ օգտվողի: Նայելով դրանց՝ փորձագետը կարողանում է ոչ միայն տեսնել, թե ում հետ էր շփվում օգտագործողը, այլև կարդա նրանց կողմից ուղարկված և ստացված հաղորդագրությունները:

Հաղորդագրությունն ուղարկելու ժամանակը և ամսաթիվը նույնպես պահվում են «SIM»-ում՝ ցանկացած ջնջված հաղորդագրության մեջ: SIM քարտը կարդացվում է խելացի քարտի ընթերցողի միջոցով, և քանի որ ֆայլերը հնարավոր է կարդալ անմիջապես խելացի քարտի գործառնական համակարգից, հնարավոր է առբերել ջնջված տեղեկատվությունը: Երբ հաղորդագրությունը ջնջվում է «SIM»-ից, կարգավիճակի բայթը սահմանված է 0: Ջնջված տեքստային հաղորդագրությունները կարող են վերականգնվել: Վերականգնումը կատարվում

է պահված հաղորդագրության 2-176 բայթը մեկնաբանելով<sup>19</sup>:

6. Բջջային փորձագիտական տեխնոլոգիաները լայնորեն օգտագործում են բջջային օպերատորների կողմից մշակված և տրամադրված տվյալները: Սա կարող է ներառել բիլինգի և զանգի տվյալների գրառումները (CDR), բաժանորդի տվյալները, սակագները և ծառայությունների կազմաձևերը, «IP» տրաֆիկի գրառումները, ռոումինգի տվյալներ, ծայնային փոստի ծայնագրություններ, բջջային սարքի տեղաբաշխման և ծառայությունների վերաբերյալ հատուկ տեղեկությունները<sup>20</sup>:

Ներքոշարադրյալի լույսի ներքո, հարկ է բջջային սարքերի փորձաքննության արդյունքում, անձի վերաբերյալ ահռելի քանակությամբ անձնական տվյալների հավաքագրման փաստին, կարծում ենք այստեղ ևս առկա է խնդիր, քանի որ, ըստ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ հետաքննության մարմինը մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով կատարում է դեպքի վայրի գննություն, հետազոտման համար վերցնում է նմուշներ և նշանակում փորձաքննություն: Կարծում ենք, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բջջային սարքը անձի անձնական օգտագործման գույքն է, և ակնհայտ է, որ պարունակում է անձի ՀՀ սահմանադրության և միջազգային կոնվեցիաներով հատուկ պաշտպանության ներքո գտնվող անձնական և մասնավոր կյանքի իրավունքի մաս կազմող տեղեկություններ, իսկ դրանց պաշտպանության համար նախատեսված են իրավական երաշխիքներ, ուստի գտնում ենք, որ փորձաքննության այս տեսակն արդարացված չէ կիրառել չհարուցված քրեական գործի շրջանակներում, հիմք ընդունելով, այն հանգամանքը, որ այն էականորեն միջամտում է անձի անձնական և մասնավոր կյանքի իրավունքին: Բացի այդ նշենք, որ բջջային սարքում առկա տեղեկություններն՝ իրենց անձնական և մասնավոր կյանքի իրավունքի մաս կազմող տեղեկություններ պարու-

<sup>19</sup> Stū Hylton, H, (2007) What Your Cell Knows About You, Time Magazine, August 15th 2007, [http://www.time.com/time/health/article/0,8599,1653267,00.html?xid=rss-health\(Դիտվել է 03.12.2021թ.\)](http://www.time.com/time/health/article/0,8599,1653267,00.html?xid=rss-health(Դիտվել է 03.12.2021թ.));

<sup>20</sup> Stū Grater, V., Naccache, D., Znaty, D (2006) Law Enforcement, Forensics and Mobile Communications. PerCom Workshop, Pisa - Italy, 13-17 March 2006, pp: 256-260:



նակելու ուժով ենթակա են բացահայման, միայն մարդու իրավունքերի և հիմնարար ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիքների առկայության դեպքում ինչպիսին է՝ անկախ դատական իշխանության կողմից իրականացվող վերահսկողությունը, սակայն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում նման կարգավորում առկա չէ, ինչն էական վնաս կարող է պատճառել ժողովրդավարական և իրավական պետության մեջ ապրող անհատին: Հարկ ենք համարում նկատել նաև, որ բջջային սարքերի դատական փորձաքննության դատական վերահսկողության վերաբերյալ դրույթ չի նախատեսվել նաև Նոր քրեական դատավարության օրենսգրքում:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք հավաստել, որ բջջային սարքերի դատական փորձաքննությունը ներառում է բջջային հեռախոսների տեխնիկական զննման և այդ սարքերից տվյալների որոնման գործընթաց: Քրեադատավարական ինստիտուտի իրավական հիմքերի կատարելագործման առումով, գործող

քրեադատավարական օրենսդրության մեջ խնդիրներ են առկա: Մասնավորապես, թվային ապացույցները, որպես ապացույցի տեսակ առանձին նախատեսված չեն, որի արդյունքում կարող են խնդիրներ առաջանալ դրանց թուլատրելիության, արժանահավատության հետ, որի իրավական մեխանիզմները գործող քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում: Հարկ է նկատել, որ դատական փորձաքննության այս տեսակն առավելապես վտանգներ է պարունակում անձի անձնական և մասնավոր կյանքի իրավունքի նկատմամբ ներգործության առումով, ինչը ևս խնդրահարույց է ՀՀ քրեական արդարատության ժողովարդայնացման ճանապարհին, քանի որ փորձաքննության անցկացումն անմիջականորեն ենթադրում է առերեսվել անձի անձնական տվյալներին, միևնույն ժամանակ քրեական դատավարության մեջ նախատեսված չեն այդ գործընթացում անձի իրական պաշտպանության գործուն մեխանիզմները:



**ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Խոսելով դատական փորձաքննությունների մասին՝ կարծում ենք, որ այն անհրաժեշտ է տարբաժանել ընդհանրապես իրականացվող փորձաքննություններից: Պարզ է, որ դրանք լինելով ավելի լայն հասկացություն՝ նույնպես գիտական հետազոտություն են, որի ընթացքում, օգտագործելով հատուկ մասնագիտական գիտելիքներ, լուծվում են առաջադրված այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են, օրինակ՝ ճարտարապետական նախագծերի, բնապահպանության, օդի, ջրի աղտոտության վերաբերյալ և բազմաթիվ այլ կարգի (կամ տեսակի) փորձաքննությունները, որոնք, սակայն դատական չեն և չեն կարգավորվում դատավարական օրենսդրությամբ:

Առկա տեսակետներից մեկի համաձայն՝ դատական փորձաքննությունն ընդհանրապես փորձաքննությունից տարբերվում է մի շարք առանձնահատկություններով՝

1) Այն նշանակվում և կատարվում է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հատուկ պահանջներին համապատասխան,

2) Դատական փորձագետի եզրակացությունը, որպես ապացույցի աղբյուր, ստուգվում, գնահատվում և օգտագործվում է արդարադատության իրականացման բնագավառում, այդ իսկ պատճառով ունի հատուկ կարգավիճակ:<sup>1</sup>

Դոկտորինալ և նորմատիվ իրավական տարբեր մեկնաբանություններում, փորձաքննությունների վերաբերյալ առկա ընդհանուր ընկալումները ձևավորվում են հետևյալ հատկանիշների շուրջ՝

ա) փորձաքննությունը՝ հետազոտություն է, բ) փորձաքննության կատարումը (այն իրականացնող սուբյեկտի մոտ) պահանջում է որևէ հատուկ իրավասությունների առկայություն,

գ) փորձաքննությունն անհրաժեշտ է որևէ էական հարցի պարզաբանման համար (որպես՝ իրավաբանական նշանակություն ունեցող հարցի լուծման փարբերակ),

դ) փորձաքննությունն իրականացվում է իրավական նորմերով կարգավորվող՝ որոշակի ընթացակարգերի շրջանակներում:<sup>2</sup>

Փորձագետի եզրակացության գնահատումը բաղկացած է միմյանց հաջորդող հետևյալ փուլերից, մասնավորապես՝

1) Իրավասու է արդյոք փորձագետը, օրենքով սահմանված կարգով, իր առջև դրված խնդիրները լուծելու, և նա դուրս չի եկել արդյոք իրեն վերապահված իրավասությունների շրջանակից: Այսինքն՝ փորձագիտական եզրակացության գնահատման համար, անհրաժեշտ է, նախ և առաջ, համոզվել փորձագետի՝ պատշաճ իրավասության մեջ: Վերջինիս իրավասության, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան փորձագետի ընտրության հարցը, լուծվում են միաժամանակ՝ քննիչի կամ դատարանի կողմից փորձագետի ընտրությանը զուգահեռ: Դատափորձագիտական հաստատություններում այն իրականացվում է հաստատության ղեկավարի կողմից:

2) Փորձաքննությունն արդյոք չի իրակա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 128 2022

<sup>1</sup> Տե՛ս Փորձաքննությունների արդի վիճակը Հայաստանում – Եր.: Հեղինակային իրատարակություն, 2005. էջ 64-65:  
<sup>2</sup> Տե՛ս Концептуальные основы современной криминалистики: теория и практика: материалы междунар. науч.-практ. конф., посвящ. 95-летию со дня рождения заслуж. деятеля науки Респ. Беларусь д-ра юрид. наук, проф. А. В. Дулова, Минск, 25 окт. 2019 г. / Белорус. гос. ун-т ; редкол.: В. Б. Шабанов (отв. ред.) [и др.]. – Минск: БГУ, 2019, էջ 164: <https://law.bsu.by/pub/8/12436-2.pdf>

նացվել մի անձի կողմից, որի գործողությունները՝ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ (*այսուհետք՝ ՀՀ ՔԴՕ*) սահմանված հիմքերով, ենթակա են բացարկման (ՀՀ ՔԴՕ 97-րդ հոդված):

3) Փորձաքննության նշանակման և իրականացման ընթացքում արդյո՞ք պահպանվել են քրեական դատավարության պահանջները (ՀՀ ՔԴՕ 243-ից 252-րդ հոդվածներ):

4) Համեմատական հետազոտության, նմուշների ստացման, արդյունքների արձանագրման, ինչպես նաև դատավարության մասնակիցների իրավունքների պահպանման ընթացքում արդյո՞ք թույլ չեն տրվել քրեադատավարական կարգի խախտումներ (ՀՀ ՔԴՕ 29-րդ, 114-րդ, 121-րդ, 218-րդ, 219-րդ, 247-րդ, 256-րդ հոդվածներ):

5) Ամբողջությամբ պահպանված են արդյո՞ք փորձագետի եզրակացությանը ներկայացվող դատավարական բոլոր պահանջները (ՀՀ ՔԴՕ 250-րդ հոդված): Նշված պահանջներից որևէ մեկի բացակայությունը դժվարեցնում կամ անհնարին է դարձնում փորձագետի եզրակացության գնահատումը:

6) Առկա են արդյո՞ք նոր երևան եկած հանգամանքներով փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելու մասին վկայող, դատական ակտերի վերանայման հիմքեր (ՀՀ ՔԴՕ 426<sup>3</sup>-րդ հոդված):

Եթե փորձագետը հրաժարվում է իրեն առաջադրված հարցերին կամ դրանց մի մասին պատասխանելուց, միաժամանակ հիմնավորելով դրա պատճառները (*դրանց հիմքերը, համապատասխան իրավակարգավորումների առկայության պարագայում, պեղք է լինեն օրենքով սահմանված*), ապա վարույթն իրականացնող մարմինը, ուսումնասիրելով տվյալ հարցը, նույնպես կարող է այն գնահատել որպես հիմնավոր: Տվյալ դեպքում քննիչը կամ դատարանը, կարող են՝

ա) հրաժարվել նշանակված փորձաքննության կատարումից, բ) վերաձևակերպել փորձագետին առաջադրված հարցերը, գ) փորձաքննության կատարումը հանձնարարել մեկ այլ փորձագետի (կամ դատափորձագիտական հաստատությանը), և դ) ներկայացնել փորձաքննության կատարման համար անհրաժեշտ այլ լրացուցիչ նյութեր:

Ընդհանուր առմամբ, փորձագետն իրավասու է հրաժարվել փորձաքննություն կատարելուց, եթե՝

- ա) չի պահպանվել փորձաքննության կատարման այն դատավարական ընթացակարգերը, որոնց պայմաններում հնարավոր չէ իրականացնել լիազոր պետական մարմնի կամ սուբյեկտի նշանակված փորձաքննությունը,
- բ) հետազոտության ներկայացված օբյեկտները (այդ թվում՝ համեմատական հետազոտության նմուշները) պիտանի չեն, կամ բավարար, հետազոտություն իրականացնելու համար,
- գ) չի պահպանվել փորձաքննությանը տրամադրվող նյութերի ներկայացման դատավարական կարգը,
- դ) փորձագետին առաջադրված հարցերը դուրս են վերջինիս՝ հատուկ գիտելիքների և հմտությունների շրջանակներից, կամ՝ ներկայացված նյութերը, բավարար չեն այդ հարցերին պատասխանելու համար,
- ե) առաջադրված հարցերին պատասխանելու համար չեն պահանջվում հատուկ մասնագիտական գիտելիքներ,
- զ) տվյալ տեսակի փորձաքննությունն այդ հաստատությունում չի իրականացվում,
- է) փորձագետը չունի համապատասխան մասնագիտական որակավորում, մասնագիտական փորձ կամ պատրաստվածություն,
- ը) փորձագիտական հաստատությունը չունի համապատասխան տեխնիկական հագեցվածություն,
- թ) փորձագետը՝ տվյալ փորձաքննության կատարման առանձնահատկություններով պայմանավորված, ունի հիմնավոր բժշկական (կյանքի և առողջության համար ոչ համատեղելի) հակացուցումներ, ինչպես նաև՝ այլ հարգելի պատճառներ,
- ժ) չի բավարարվել փորձագետի ներկայացված միջնորդությունը՝ փորձաքննության կատարման համար անհրաժեշտ (լրացուցիչ) նյութեր կամ օբյեկտներ տրամադրելու վերաբերյալ և այլն: Փորձագետի համար, որպես եզրակացություն

տալուց հրաժարվելու հիմնավոր պատճառ, կարող են հանդիսանալ նաև փորձաքննությանը ներկայացված նյութերի՝ անորակ կամ անբավարար լինելը: Այդ իսկ պատճառով, փորձագետները, կատեգորիկ փոխարեն, երբեմն տալիս են հավանական եզրակացություններ, ինչը կտրուկ նվազեցնում է վերջիններիս ապացուցողական նշանակությունը:<sup>3</sup>

Բոլոր այն դեպքերում, երբ փորձագետը հարգելի պատճառով է հրաժարվում կամ խուսափում իր պարտականությունները կատարելուց՝ նրա պատասխանատվության մասին խոսք լինել չի կարող: Այստեղ հարգելի պատճառ կարող է լինել փորձագետի անձեռնհաս լինելը, նրան ներկայացված նյութերի անբավարարությունը կամ պակասավորությունը, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու փաստը, մերձավորների ծանր հիվանդությունը կամ նրանց մահը և այլ հանգամանքներ:<sup>4</sup>

Փորձագետը փորձաքննություն կատարելու համար ստացված նյութերը ուսումնասիրելու կամ փորձագիտական հետազոտության ընթացքում, կարող է ներկայացնել **միջնորդություն**.<sup>5</sup>

1) քրեական վարույթն իրականացնող մարմնից, համեմատական հետազոտման և եզրակացություն տալու համար անհրաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր պահանջելու վերաբերյալ,

2) ստանալու քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությունը՝ եզրակացություն տալու համար անհրաժեշտ նյութերին ծանոթանալու և գործի նյութերից դուրս անհրաժեշտ տեղեկություններ գրելու, իր պարտականությունները պատշաճ կատարելու համար կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկաներին հարցեր տալու, ինչպես նաև փորձաքննության առարկային վերաբերող նյութերին ծանոթանալու և դրանցից դուրս անհրաժեշտ տեղեկություններ գրելու վերաբերյալ,

3) մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին, որքանով դրանք վերաբերում են փորձաքննության առարկային և անհրաժեշտ են եզրակացություն տալու համար,

4) կազմակերպչական բնույթի գործողությունների իրականացման, ինչպես նաև փորձաքննության կատարումը պատշաճ կազմակերպելու նպատակով՝ ստանալու անհրաժեշտ պարզաբանումներ առաջադրված հարցերի վերաբերյալ և այլն:

Փորձագետն, իր գործառույթներն իրականացնելիս, պետք է միանշանակ ձգտի, որպեսզի կատարված հետազոտության արդյունքները կոնկրետ դատաքննչական մարմինների համար լինեն՝ հնարավորինս ընկալելի, ամբողջական և հասանելի:

Բացառիկ այն դեպքերում, երբ փորձագետն, որևէ օբյեկտի կամ հիմնավոր պարզաբանությանը, անհրաժեշտ է համարում վերաձևակերպելու (վերաշարադրելու) իրեն առաջադրած հարցերը, ապա վարույթն իրականացնող մարմինը, պետք է ուշադրություն դարձնի հատկապես վերջինիս կողմից իրականացված այն փոփոխություններին, որոնք կատարված հետազոտությունների իմաստով, ունեցել են բովանդակային նշանակություն: Առկա է հավանականություն, որ այդպիսի փոփոխությունները, կարող են ձևափոխած լինել ոչ միայն փորձաքննությանն առաջադրված հարցերի բովանդակությունը, այլև՝ տրամաբանական կառուցվածքը: Մասնավորապես՝ պետք է պարզել, թե այդպիսի փոփոխությունները, գիտական կամ խմբագրական տեսանկյունից, որքանով են եղել արդարացված կամ հիմնավոր: Այն դեպքերում, երբ հիմնավորվում է փորձագետի կողմից իրեն առաջադրված հարցերի շրջանակներից անհիմն կերպով դուրս գալու հանգամանքը, ապա տվյալ պարագայում, կարող է անհրաժեշտություն առաջանալ նաև որոշելու կատարված փորձագիտական հետա-

<sup>3</sup> Տեն Ищенко Е.П. Криминалистика: Курс лекций. — М.: Юридическая фирма «КОНТРАКТ»; АСТ-МОСКВА, 2007, էջ 277: file:///C:/Users/TEST/Downloads/002588707.pdf

<sup>4</sup> Տեն Թովմասյան Ա. Թ. Սովետական քրեական իրավունք: Ուս. ձեռնարկ իրավաբան. ֆակ. համար.: Հատուկ մաս, չորրորդ հատոր, Երևանի համալս. հրատարակչություն (խմբ.՝ Մ. Ի. Ուզունյան): Երևան, 1983թ., էջ 229:

<sup>5</sup> ՀՀ ՔԴՕ 6-րդ հոդվածի (Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները) 34-րդ կետի համաձայն՝ **միջնորդություն** է համարվում կողմի կամ դիմողի խնդրանքը՝ ուղղված քրեական վարույթն իրականացնող մարմնին:

գոտությունների իրավաչափության հարցը՝ համապատասխան արդյունքների ստացման թույլատրելիության և վերաբերելիության տեսանկյունից:

Դատական փորձաքննության արդյունավետությունը շատ դեպքերում կախված է լինում նաև փորձաքննությանը ներկայացված նյութերի որակից և ամբողջականությունից: Դրանց թվին են դասվում՝

- ա) դեպքի վայրի զննության արձանագրությունները, լուսանկարչական հավելվածները, գծագրերն ու սխեմաները,
- բ) դեպքին վերաբերող տվյալները՝ ամսաթիվը, հայտնաբերման տեղը, ժամանակը, եղանակային պայմանները,
- գ) օբյեկտի բնութագրիչ հատկանիշները,
- դ) տվյալներ այն իրադարձությունների վերաբերյալ, որոնց նախորդել են քննչական գործողությունները,
- ե) տվյալներ օբյեկտների այն հատկանիշների մասին, որի արդյունքում դրանք հայտնաբերվել են, հայտնաբերման պայմանները և այլն:

Փորձագետը, փորձաքննության կատարմանը ձեռնամուխ է լինում համապատասխան գրավոր հանձնարարության առկայության դեպքում՝ մուտք եղած բոլոր նյութերը ստանալուց հետո միայն: Ստացված նյութերը ուսումնասիրելու ընթացքում, եթե վերջինս հայտնաբերում է, որ դրանցում առկա են որոշակի անհամապատասխանություններ, ապա նա պարտավոր է անհապաղ դադարեցնել փորձաքննության կատարման ընթացքը՝ դրա մասին տեղեկացնելով՝ ըստ ենթակայության:

Այն դեպքում, երբ կրկնակի փորձաքննությունն իրականացնող փորձագետը, հանգելով բացասական եզրահանգման, մերժում է առաջնային փորձաքննության արդյունքները, ապա ենթադրվում է, որ երկուստեք փորձաքննություններն էլ պետք է գնահատվեն՝ ըստ իրենց հիմնավորվածության և համակցության: Պետք է առանձնահատուկ քննության առարկա դարձնել հիշյալ փորձաքննությունների հետազոտական մասերում առկա այն վերլուծությունները, որոնց հիման վրա ի հայտ են եկել կոնկրետ

տարբերությունները՝ իրենց բնութագրական առանձնահատկություններով հանդերձ: Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել հատկապես այն մեթոդիկաների հիմնավորվածությանը, որոնք, իրենց կիրառությունը գտնելով համապատասխան հետազոտություններում, ապահովել են որոշակի արդյունք: Փորձագետն, անկախ ամեն ինչից, իրավունք չունի քննիչի կամ դատարանի փոխարեն, սուբյեկտիվ կամ իրավական բնույթ կրող որևէ սխալ հիմնավորումներով (պատճառաբանությամբ), տալ անհիմն գնահատականներ՝ առաջնային փորձաքննության կատարման փաստական տվյալների ապացուցողական նշանակության վերաբերյալ: Հատկապես չպետք է մոռանալ, որ նախաքննության ընթացքում, փորձագետի եզրակացության գնահատումն, իր ողջ ծավալով, իրականացնում է նաև դատարանը՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես է քննիչն այն հետազոտել կամ գնահատել նախկինում: Ընդ որում, դատարանի նախաձեռնությամբ, փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով՝ ելնելով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից (*տես՝ Ռազմիկ Սարգսյանը և Լիդա Սևոյանն ընդդեմ Ռաֆիկ Հախվերդյանի՝ առուվաճառքի պայմանագիրը լուծելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի թիվ 3-259 (ՎԴ) որոշումը*):<sup>6</sup>

Դատաքննչական և փորձագիտական պրակտիկայի ընդհանրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փորձագիտական եզրակացության մեջ, որպես հիմնական հետաքրքրություն ներկայացնող հանգամանքներ, հանդես են գալիս փորձագիտական եզրակացության և գործով ձեռք բերված այլ ապացույցների միջև առկա համապատասխանության, ինչպես նաև եզրակացության հետևությունների լրիվության ստուգմանն ուղղված գնահատողական հիմնավոր արդյունքի ձևավորման, կարևորագույն խնդիրները: Դատարանը, ըստ էության, ի վիճակի չէ գնահատելու փորձագետի եզրակացության հետևությունները:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 128 2022

<sup>6</sup> Մանրամասը տես ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. ապրիլի 1-ի թիվ ԵԿԴ/3494/02/09 քաղաքացիական գործով որոշման 4-րդ կետը: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=68294>

րի ո՛չ գիտական հիմնավորվածության, ո՛չ դրանում օգտագործված կամ ընտրված մեթոդիկաների կիրառման ճշտագրության, և ո՛չ էլ դրանց օգտագործման՝ համապատասխանության հարցը: Ենթադրվում է, որ քննիչը, դատախազը կամ դատավորը, որպեսզի կարողանան ճիշտ կերպով ձևավորել համարժեք իրավական գնահատական, անհրաժեշտ է, որ նրանք ընդհանուր պատկերացումներ կազմեն այն գիտելիքների մասին, որոնց տիրապետում է փորձագետը՝ իր մասնագիտական գործունեության բերումով: Նույնիսկ փորձագիտական մեթոդիկայի գիտական հիմնավորվածության, կամ կիրառման օրինաչափության գնահատմանը վերաբերող հարցը, դժվար է պատկերացնել առանց փորձագետի եզրակացության, քանզի քննիչը կամ դատավորը, համապատասխան ոլորտի մասնագետներ չեն: Այդ իսկ նպատակով, քննիչը կամ դատավորը, հատուկ գիտելիքների վերաբերյալ, որոշակի պատկերացումներ կարող են ստանալ գոյություն ունեցող տեղեկատու նյութերն ու մեթոդական գրականությունը ուսումնասիրելու, կամ փորձագետի կարծիքը հաշվի առնելու արդյունքում: Այլ կերպ ասած՝ որոշ հարցեր կարելի է պարզաբանել ինչպես փորձագետին, այնպես էլ՝ համապատասխան ոլորտի այլ մասնագետներին, հարցաքննելու միջոցով: Ինչ վերաբերում է մասնագիտական բնույթի խորհուրդներին՝ դրանք կարելի է ստանալ նաև ոչ դատավարական ձևով:

Այսպիսով փորձագիտական եզրակացության գնահատման համար կարևոր նշանակություն է տրվում նաև վարույթն իրականացնող մարմնի՝ հատուկ գիտելիքների տիրապետման խնդրին, որը փորձագիտական հետազոտության արդյունքների ճիշտ ընկալման, դրա գիտական հիմնավորվածությանը վերաբերող որոշակի պատկերացումների կազմման, ինչպես նաև համապատասխան իրավական գնահատականի ձևավորման, կարևոր նախապայմանն է:

Անկախ այն ամենից, թե փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածությունը, հուսալիությունն ու արժանահավատու-

թյունը, ինչպիսի դատավարական գնահատական կամ ամրագրում կստանան, կարծում ենք, որ դրա ստուգման, ինչպես նաև արժանահավատության բարձրացմանն ուղղված առավել արդյունավետ եղանակներից մեկը՝ «մրցակցային դաշտի», իսկ առավել կոնկրետ՝ **մրցակցային հարաբերությունների**, ձևավորումն է դատափորձագիտական ոլորտում: Հարկ է նշել, որ մրցակցությունը՝ լինելով արդարադատության գերակա շահերից բխող կարևորագույն դատավարական սկզբունք, առավելապես ունի հիմնարար նշանակություն: Ինչպես նշված է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից մեկում. «արդար դատաքննության հիմնարար իրավունքի ապահովման անկունաքարը, ի թիվս քրեական դատավարության այլ կարևորագույն սկզբունքների, մրցակցության սկզբունքն է»:<sup>7</sup>

Ելնելով վերոնշված սկզբունքի առանցքային նշանակությունից՝ կարծում ենք, որ ՀՀ-ում դատափորձագիտական գործունեության ոլորտի ընդհանուր կանոնակարգման ու զարգացման համար, անհրաժեշտ է առաջիկայում նախաձեռնել ՀՀ-ում դատափորձագիտական գործունեության ոլորտը կարգավորող, համապատասխան օրենսդրության մշակման, իսկ այնուհետև ընդունման հարցը: Բացի դրանից, սույն օրենսդրական նախաձեռնության շրջանակներում՝ առաջարկվում է հետագայում դիտարկել հավատարմագրային պարտադիր ընթացակարգերով երաշխավորված ու միասնական գիտամեթոդական բազայի վրա հիմնված, որակապես նոր, առավել արդիական, մրցունակ և գիտատեխնիկական բարձր հագեցվածությամբ օժտված, այլընտրանքային (օրինակ՝ ոչ պետական) դատափորձագիտական հաստատությունների ստեղծման հնարավորության հարցը: Այլ կերպ ասած՝ դատափորձագիտական գործունեության ոլորտում, ակնկալվում է իրականացնել այնպիսի փոփոխություններ, որոնք ըստ էության կապահովեն կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների զարգացումը՝ նպաստելով ինչպես մեղադրանքի և պաշտպանության կողմերի ռեալ մրցակցությանն ու իրավահավասարությանը,

<sup>7</sup> Տե՛ս Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 13-րդ կետը: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=77187>



այնպես էլ՝ այլընտրանքային դատափորձագիտական հաստատությունների ձևավորմանը: Սույն համատեքստում, հատկապես կարևորում ենք ՀՀ նոր ՔԴՕ կարգավորումներով նախատեսված՝ «փորձագետի կարծիք»-ի (ՀՀ նոր ՔԴՕ 92-րդ հոդված), որպես փորձագիտական հատուկ գիտելիքների օգտագործման արդյունքում ձևավորված, քրեադատավարական ապացույցի նոր (այլընտրանքային) տեսակի հետազա կիրարկման հանգամանքը: Ենթադրվում է, որ այն, դատական պրակտիկայի հետազա զարգացման, ինչպես նաև նախադեպային մի շարք կարևոր որոշումների կայացման հարցում, կարող է էական առաջընթաց ապահովել դատափորձագիտական ապացույցների գնահատմանն ուղղված՝ առավել նոր,

մրցակցային և որոշիչ մոտեցումներ ձևավորման համար:

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշյալ հարցերի շուրջ ծավալած քննարկումներն ու առաջարկությունները, կարծում ենք, որ դատափորձագիտական գործունեությանը վերաբերող համապատասխան օրենսդրության ընդունումն ու հիշյալ բնագավառում ռեալ մրցակցային հարաբերությունների ստեղծումը, կարող են շրջադարձային նշանակություն ունենալ՝ դատափորձագիտական ռոլրտի ընդհանուր կայացման ու կանոնակարգման, փորձագիտական հետազոտությունների նկատմամբ առկա օբյեկտիվ վստահության ամրապնդման և փորձագիտական եզրակացությունների ապացուցողական նշանակության բարձրացման համար:



**ԶԱՎԵՆ ՍՄԲԱՏՅԱՆ**

ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎԱԶՎՓՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ**

Օրինականության սկզբունքը նախատեսում է, որ կառավարչական մարմինները, ինչպես նաև դրանց շահերը ներկայացնող պաշտոնատար անձինք, իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են համապատասխան նորմատիվ իրավական ակտով:

Հենց այս հայեցակարգի համատեքստում անդրադառնալով վարչական ակտի նյութական իրավաչափության ինստիտուտին և դրա առանցքային տարր հանդիսացող վարչական ակտի հիմնավորվածության ինստիտուտին հարկ է արձանագրել, որ վարչական ակտի նյութական իրավաչափությունը, վարչական ակտի օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունենալու կարևոր նախապայմանն է, ընդ որում՝ նյութական իրավաչափության խաթարումը, որպես այդպիսին, բոլոր դեպքերում հանգեցնում է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելուն:

Նշյալ իրողությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց շարքում առանցքային դերակատարում ունի դրանց էական բնույթ ունենալու հանգամանքը, այսինքն՝ դրանց առնչությունը մարդու հիմնարար իրավունքներին: Ավելին՝ տվյալ հարցի համատեքստում կարևոր է քննարկվող վարչական ակտի ձևը, քանզի տարբեր ձևի վարչական ակտերի համար տարբեր են համարվում նյութական իրավաչափության տարրերը:

Հարկ է նշել, որ վարչական ակտերի շարքում ամենաընդհանրական դերակատարումն ունի գրավոր վարչական ակտը, քանի որ գրավոր վարչական ակտին ներկայացվող օրենսդրական պահանջները ներառում են նաև վարչական ակտի մյուս տեսակների համար նախատեսված օրենսդրական վավերապայմանները, իսկ տեսակների մեջ դրանց իրավաչափությանը ներկայացվող պահանջները պայմանավորված են դրանց տեսակային առանձնահատկություններով:

Կարևոր ենք համարում արձանագրել, որ վարչական ակտի հիմնավորվածությունն իրենից ենթադրում է վարչական ակտի բավականաչափ պատճառաբանված լինելը: Այլ կերպ ասած՝ եթե վարչական ակտով անձի վրա դրվել է որոշակի պարտավորություն, ապա այն պետք է պարունակի համապարփակ պատճառաբանություններ այն մասին, թե որքանով է իրավաչափ կոնկրետ պարտավորությունը կոնկրետ անձի վրա դնելու գործողությունը, իսկ որոշակի իրավունքով օժտելու պարագայում վարչական ակտը պետք է պարունակի համապարփակ պատճառաբանություններ այն մասին, թե որքանով է իրավաչափ կոնկրետ անձին որոշակի իրավունքով օժտելու գործողությունը: Իհարկե, բարենպաստ վարչական ակտի պարագայում գործում են որոշակի առանձնահատկությունները, քանի որ իր հասցեատիրոջ համար այն ունի դրական ազդեցություն, ուստի բացակայում է դրա պատճառաբանական մասի մանրամասն շարադրման իրավական ազդեցությունը: Ասվածի համատեքստում վիճելի է մնում խնդիրը երկակի ազդեցությամբ վարչական ակտերի մասով, քանի որ դրա հասցեատիրոջ համար վարչական ակտն ունենալով բարենպաստ ազդեցությունը կարող է մեկ այլ անձի համար ունենալ միջամտող ազդեցությունը:

Վարչական ակտի հիմնավորվածությունն ինքնին կարող է ազդել վարչական ակտի նյութական իրավաչափության վրա, եթե կոնկրետ դեպքում գործ ունենք միջամտող վարչական ակտի հետ, քանի որ դրանով բացասական բնույթի ազդեցություն է գործադրվում անձի նկատմամբ, իսկ բարենպաստ վարչական ակտի պարագայում անձն ակնկալում է ստանալ արդյունքը և ոչ արդյունքին հասնելու ուղիները: Այսինքն՝ ընդունված բարենպաստ վարչական ակտը դրա հասցեատիրոջ համար ըստ էության ունի բարելավող ազդեցություն, որպի-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 128, 2022

սի պայմաններում դրա այս կամ այն ասպեկտում թերի պատճառաբանված լինելը չի կարող խաթարել անձի հասցեատիրոջ իրավունքները:

Անդրադառնալով վարչական ակտի հիմնավորվածության հարցին՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտը հիմնավորելու՝ վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարչական վարույթի մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:<sup>1</sup>

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը համարել է, որ օրենսդրի կողմից վարչական ակտի հիմնավորում պարունակելու պահանջն ինքնանպատակ չէ, այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց, ովքեր համաձայն չեն ընդունված վարչական ակտի հետ, վարչական բողոք կամ դատարան հայց ներկայացնելով, գործնականում իրացնել իրենց արդյունավետ իրավական պաշտպանության և դատարան դիմելու հիմնարար իրավունքները: Միաժամանակ վարչական մարմնի կողմից ընդունված հիմնավորված վարչական ակտը գործնականում իրական հնարավորություն է տալիս վարչական բողոքը քննարկող վարչական մարմնին կամ դատարանին պարզելու այն փաստական և իրավական հիմքերը, որոնք վարչական ակտն ընդունած վարչական մարմինը դրել է իր որոշման հիմքում:<sup>2</sup>

Հիմնավորվածության պահանջի պահպանումն իրավակիրառ ակտերի գործողության կարևոր նախապայմաններից մեկն է. այդ վավերապայմանի պահպանմամբ վարչական ակտերի կայացումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն վարչական իրավակիրառ գործունեության դատական, այլ նաև դատական գործունեության շրջանակներում:

Նշյալ հիմնահարցերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ ժամանա-

կակից իրավաբանական գիտության մեջ ամփոփվել են իրավակիրառ գործունեության հիմնավորվածության և, ընդհանուր առմամբ, վարչական իրավակիրառ գործունեության ընկալման տարբեր մոտեցումներ, մասնավորապես, վարչական ակտերի օրինականության և հիմնավորվածության սկզբունքների պահպանման առնչությամբ կառուցակարգերը:

Նախ՝ հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ իրավունքի ընդհանուր տեսությունում իրավակիրառ գործունեության հիմնավորվածությունը և օրինականությունը դիտարկվում են որպես ինքնուրույն վավերապայմաններ: Ընդ որում, վարչական ակտի հիմնավորվածության պահանջի տրամաբանությունը բխում է այն մոտեցումից, որ վարչական վարույթի ընթացքում իրավակիրառ մարմինը պարտավոր է մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրել գործի բոլոր փաստական հանգամանքները և հիմնավորել ընդունվող վարչական ակտը՝ դրանում պարունակվող եզրակացությունների հիմքում դնելով հավաքագրված ապացույցները:

Այլ կերպ ասած՝ «հիմնավորվածություն» եզրույթը որպես այդպիսին իրենից ենթադրում է վարչական մարմնի համապատասխան ապացույցները հետազոտելու հիման վրա ներքին համոզմունք ձևավորելու միջոց:

Հայտնի գիտնական Դ. Մ. Չեչոտը նշել է, որ վարչական մարմնի որոշումների հիմնավորվածությունը կապում են դրանց ամբողջական և արժանահավատ սահմանումը և դրա հիման վրա կատարած եզրահանգումները գործի փաստական հանգամանքների հետ, իսկ նշված վարչական ակտի օրինականությունը որոշում է նյութական և դատավարական նորմերի ճիշտ կիրառմամբ: Ակտի օրինականության ստուգման ցանկացած դեպք չի կարող տեղի ունենալ առանց ստուգելու տվյալ գործի փաստերը, քանի որ վարչական մարմինը պետք է նախ բազմակողմանի ուսումնասիրի գործի փաստական հանգամանքները:<sup>3</sup>

<sup>1</sup> Տե՛ս Գիթա Հեյդարիմարանջեհն ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս «Ինեկորանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը:

<sup>3</sup> Чечот Д. М. Избранные труды по гражданскому процессу / сост.: Е. Ю. Новиков ; сост., предисл. и коммент.: А. А. Ференс-Сороцкий. СПб.: Изд. дом С.-Петербург. гос. ун-та, 2005.. С 380 б 526.

Ըստ իրավագետ Պ. Ե. Նեդբայլոյի՝ օրինականությունը և հիմնավորվածությունը ձևավորում են միասնական պահանջ իրավակիրառ գործունեության համար: Իրավագետի կարծիքով՝ հիմնավորվածությունը ներկայացնում է իրավունքի կիրառումն իրավունքի նորմերի հիման վրա հաստատված և ապացուցված փաստերով:

Որոշ իրավագետ գիտնականներ սահմանագատում են իրավակիրառ ակտերի «հիմնավորվածություն» և «պատճառաբանվածություն», կամ այլ կերպ ասած «մոտիվացիա» հասկացությունները: Օրինակ՝ իրավագետ Ն. Ն. Վոպլենկոյի պնդմամբ՝ ակտը համարվում է հիմնավորված, եթե ակտը կայացրած պաշտոնատար անձի եզրակացությունները հիմնված են օբյեկտիվ իրականության վրա, որը հաստատվել է գործի առանձնահատուկ հանգամանքների ուսումնասիրությամբ: «Մոտիվացիան» գրեթե նույնն է իրավակիրառ ակտն արտահայտվում է դրանում իրավական փաստարկ, համոզվածություն, ուրվագծելով:<sup>4</sup>

Ն. Ի. Տկաչևը կարծում է, որ ակտի կայացման անհրաժեշտությունը, որպես ընթացակարգային կատեգորիա, կարելի է դիտարկել իբրև իր հիմնավորվածության արտահայտում, որն իրենում ներառում է ակտը կայացրած սուբյեկտի ներքին համոզմունքը վարչական վարույթի հարուցման գործընթացից մինչև վարչական ակտի կայացումը:<sup>5</sup>

Միևնույն ժամանակ, վարչահրավական գիտության ներկայացուցիչները կիսում են իրավունքի տեսության և պրակտիկայում ձևավորված մոտեցումներն իրավակիրառ գործունեության հիմնավորվածության վերաբերյալ:

Այսպես՝ Ա. Պ. Կորենևը նշում էր, որ պետական կառավարման մարմինների իրավակիրառ գործունեության հիմնավորվածության պահանջը նրանց կողմից վարչական իրավունքի նորմերի կիրառումն է հավաստի տեղեկատվության հիման վրա, գործի փաստերի, հանգամանքների բազմակողմանի ստուգումից հետո:

Միաժամանակ գիտնականը շեշտել է, որ հիմնավորվածության պահանջը օրինականության հետ սերտորեն կապված է, և այդ կապը դրսևորվում է նրանում, որ այն փաստերի ամբողջական և համակողմանի քննությունը, որոնց հիման վրա կայացվում է վարչական ակտը, պարտադիր է օրինականության պահանջի լույսի ներքո: Վարչական ակտն իրավաչափ է, եթե այն հիմնավորված է, չհիմնավորված ակտն ինքնին ոչ իրավաչափ է:<sup>6</sup>

Յու. Պ. Սալավյովի տեսանկյունից վարչական մարմնի հայեցողական լիազորությունների կիրառմամբ կայացված որոշման հիմնավորման բացակայությունը պետք է դիտարկվի որպես օրինականության խախտում:<sup>7</sup>

Ն. Գ. Սալիշևան նշել է, որ վարչական գործով որոշումը (վարչական ակտը) պետք է մանրակրկիտ հիմնավորված լինի փաստական հանգամանքների տեսանկյունից՝ անհրաժեշտ ապացույցների օգտագործման միջոցով և արտացոլի օբյեկտիվ ճշմարտությունը:<sup>8</sup>

Վ. Սիրինկոյի կարծիքով՝ վարչական մարմինների անհատական ակտերի հիմնավորվածությունը նշանակում է, մի կողմից, մինչև դրանց հրապարակման (ընդունման) հիմքերի հավաքագրումը, իսկ մյուս կողմից՝ նման հիմքերի առկայության արտացոլումն այդ ակտերում:<sup>9</sup>

Ընդհանրացնելով իրավակիրառ գործունեության հիմնավորվածության վերաբերյալ բերված դատողություններն ընդհանուր առմամբ և վարչական իրավակիրառ գործունեության կտրվածքով՝ կարելի է արձանագրել, որ իրավակիրառ գործունեության հիմնավորվածության պահանջը իրավաբանական գիտության մեջ, նախ և առաջ, առանձնացվում է

<sup>4</sup> Вопленко Н. Н. Теоретические проблемы режима законности в применении норм социалистического права: дис. ... д-ра юрид. наук. Волгоград, 1983.. С 269.

<sup>5</sup> Ткачев Н. И. Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам / ред. И. М. Зайцев. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1987.. С 27.

<sup>6</sup> Коренев А. П. Нормы административного права и их применение. М.: Юрид. лит., 1978. С 66-67.

<sup>7</sup> Соловей Ю. П. Усмотрение в административной деятельности советской милиции: дис. ... канд. юрид. наук. М., 1982. С 165-166.

<sup>8</sup> Салищева Н. Г. Избранное. М.: РАП, 2011.. С 98-99.

<sup>9</sup> Сиринько В. А. Правоприменительная деятельность органов исполнительной власти: современные проблемы эффективности и совершенствования законодательства: дис. ... канд. юрид. наук. Воронеж, 2004. С 49.

վարչական ակտի օրինականության պահանջից, բայց դրա հետ մեկտեղ կիրառվում է դրա հետ համակարգային կապի մեջ, և, հաջորդիվ, առկա է իրավակիրառ մարմնի կողմից թույլատրվող իրավակիրառ իրավիճակի (իրավաբանական գործի) բոլոր փաստական հանգամանքների հաստատման և ընդունվող իրավակիրառ որոշման հիմնավորման անհրաժեշտություն՝ այն հանգամանքների վկայակոչմամբ, որոնց առկայությունն ամրագրված է համապատասխան ասպացույցներով:

Որոշ ասպեկտներում չհամաձայնվելով վերը նշված իրավագետ գիտնականների դիրքորոշումների հետ իրավակիրառ գործունեության, այդ թվում՝ վարչական իրավակիրառ գործունեության մասով՝ սույն հոդվածում հարկ ենք համարում ընդգծել այդ հարցերի ըմբռնման և լուծման համատեքստում հետևյալ մոտեցումները.

1. Մեր պնդմամբ, ոչ այդքան հիմնավորված է ներկայացվում իրավաբանական գիտության և պրակտիկայում ձևավորված կայուն կարծիքը, որի համաձայն՝ իրավակիրառ գործունեության, մասնավորապես, վարչական ակտերի հիմնավորվածությունը հանգում է դրանց հրապարակման (ընդունման) հիմնավորման և իրավունքի նորմի կիրառման ընթացքում հաստատված փաստերով կատարման անհրաժեշտությանը: Այլ կերպ ասած՝ իրավակիրառման հիմնավորվածությունը դիտարկվում է միայն նրա փաստական կողմից, այսինքն՝ որոշակի փաստերի հաստատման կողմից, որոնք նշանակություն ունեն առաջացող կենսական իրավիճակների «de jure» լուծման համար:

2. Այնուհետև, պատճառաբանվածության մասով կասկած է հարուցում նաև իրավագետների մոտեցումն այն մասին, որ իրավակիրառ գործունեության հիմնավորվածության պահանջն անհրաժեշտ է առանձնացնել դրա օրինականության պահանջից:

Օրինականության և հիմնավորվածության սահմանազատման չափանիշները բավական հստակ նշված են Գ. Օ. Բելանովայի առենախոսության մեջ, որտեղ իրավագետն արտահայտում է դիրքորոշումն այն մասին, որ իրա-

վակիրառ ակտերի օրինականությունն իրավունքի նորմերին վարչական ակտի համապատասխանությունն է, իսկ հիմնավորվածությունը՝ դրանցում պարունակվող եզրակացությունների համապատասխանությունը գործի փաստական հանգամանքներին, իրավաբանական փաստերի որակավորումը և գործի ըստ էության լուծումն է: Նրա կարծիքով՝ օրինականությունը բնութագրում է իրավակիրառ ակտի ճիշտ լինելը և ըստ ձևի, և ըստ էության, իսկ հիմնավորվածությունը՝ միայն ըստ էության:<sup>10</sup>

Կիսելով վերը նշված տեսակետը՝ իրավակիրառ ակտերի օրինականության և հիմնավորվածության պահանջների միասնականության մասին, կարծում ենք, որ իրավակիրառ գործողությունների և ակտերի հիմնավորվածության պահանջը դրանց օրինականության պահանջի բաղկացուցիչ մասն է:

Փաստական և (կամ) իրավաբանական կողմից չհիմնավորված իրավակիրառ գործողությունը կամ իրավակիրառ ակտերը չեն կարող ճանաչվել իրավաչափ: Որպես օրինակ, կարելի է օրինական ճանաչել վարչական ակտը (իրաման, որոշում, կարգադրություն և այլն), որը պարունակում է վարչական գործի փաստական հանգամանքների նկարագրությունը, այդ գործի վերաբերյալ վերջնական եզրահանգումը, սակայն չի հիմնավորում այդ փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմերի կիրառումը, որոնց հղում է արվել (ընդունվել) տվյալ վարչական ակտով:

Իրավակիրառ գործունեության՝ որպես դրա օրինականության բաղադրիչներից մեկի հիմնավորվածության ըմբռնումը պայմանավորված է նաև վարչական իրավակիրառ գործունեությունը կարգավորող և դրա օրինականության գնահատման չափանիշներ սահմանող օրենսդրության նորմերի վերլուծությամբ:

Ակնհայտ է, որ հրապարակվող (ընդունվող) վարչական ակտերի նման փաստական և իրավաբանական հիմնավորման անհրաժեշտությունը դիտվում է որպես համապատասխան վարչական իրավակիրառ գործունեության օրինականության պահանջ:

<sup>10</sup> Беланова Г. О. Понятие юридической справедливости как основания правоприменительного акта: дис. ... канд. юрид. наук. Ставрополь, 2003. С 107-110

Վարչական գործերով դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք դեպքերում դատարանն ոչ իրավաչափ է ճանաչում վարչական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերը՝ դրանց մեջ ընդունված որոշման իրավական հիմնավորման բացակայության պատճառով: Այստեղից բխում է այն հետևությունը, որ վարչական ակտերի հիմնավորվածությունը դատական պրակտիկայում դիտարկվում է որպես վարչական ակտի օրինականության բաղկացուցիչ տարրերից մեկը:

3. Պետք է հստակ տարանջատել «վարչական ակտի հիմնավորվածությունը» և «վարչական ակտի պատճառաբանվածությունը» իրավական կատեգորիաները: Նման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ գործող վարչական օրենսդրության մեջ կարելի է նկատել այդ երկու հասկացությունների կիրառումը:

Իր հերթին՝ մեր կարծիքով՝ վարչական ակտի «մոտիվացիա» կամ այլ կերպ ասած «պատճառաբանվածություն» և «հիմնավորվածություն» հասկացությունները հարաբերակցվում են հետևյալ կերպ.

Այսպես՝ առաջին եզրույթը սովորաբար բնութագրում է իրավակիրառողի մտավոր գործընթացի ընթացքը, նրա դատողությունների տրամաբանությունը, որն, ի վերջո, հանգեցնում է այս կամ այն որոշման հիմնավորմանը և ընդունմանը: Իսկ «հիմնավորվածություն» հասկացության պարագայում նշվում է տվյալ մտավոր գործընթացի արդյունքը, թույլատրվող իրավաբանորեն փաստացի իրավիճակի փաստական հանգամանքների սահմանմանը՝ այդ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավունքի նորմերին հղում կատերելու միջոցով:

Մեր գնահատմամբ վարչական ակտի հիմնավորվածությունը վարչական ակտը կայացնող իրավասու պաշտոնատար անձի մտավոր գործընթացի արդյունքը թույլատրող փաստական հանգամանքների և այդ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառման ենթակա իրավունքի նորմերին միջև կապի հաստատումն է:

Բացի այդ, վարչական ակտի ընդունման հիմքերը, փաստերը և դրանց նկատմամբ կիրառված իրավական նորմերն են, որոնց առկայությունն ընդհանուր առմամբ իրավունք է տալիս ակտի հրապարակման (ընդունման) համար: Իսկ վարչական ակտի հրապարակման (ընդունման) կամ վարչական գործողության կատարման շարժառիթները պաշտոնատար անձի դատողություններն են և դրանցից բխող հետևությունները, որոնք թույլ են տալիս պարզել նման փաստերի և դրանց նկատմամբ կիրառվող իրավունքի նորմերի, այսինքն՝ համապատասխան ակտի հրապարակման (ընդունման) համար փաստական և իրավաբանական հիմքերի առկայությունը:

Այսպիսով՝ վարչական իրավակիրառ գործունեության մոտիվացվածությունը պետք է դիտարկել որպես դրա հիմնավորվածության սուբյեկտիվ կողմ, այլ կերպ ասած՝ որպես այս կամ այն վարչական ակտի հրապարակման (ընդունման) փաստական և իրավաբանական հիմնավորման մտավոր գործընթաց:

Ամփոփելով վերոնշյալը՝ նպատակահարմար ենք գնում նշել այն, որ վարչական ակտը պետք է լինի մշտապես պատճառաբանված, ընդ որում, վարչական մարմինների վարչական ակտերի բովանդակության վերլուծությունից երևում է, որ այդ ակտերի պատճառաբանական մասում շարադրվում են որպես գործով սահմանված՝ իրավունքի նորմերի կիրառման ենթակա փաստական հանգամանքների վերլուծության գնահատման տրամաբանություն, ինչպես նաև ընդունվող իրավակիրառ իրավունքի փաստական և իրավաբանական հիմքերի վերաբերյալ ամփոփիչ եզրակացություններ, լուծումներ:

Հաշվի առնելով վերը շարադրված մոտեցումը՝ վարչական իրավակիրառ գործունեության օրինականության պահանջն անհրաժեշտ է ճանաչել որպես դրա մոտիվացված հիմնավորվածություն: Այլ կերպ ասած՝ վարչական մարմնի, նրա պաշտոնատար անձի կողմից պետք է հիմնավորվեն վարչական ակտի կատարման կամ ընդունման (ընդունման) փաստական և իրավաբանական հիմքերը:

Այսպիսով՝ վարչական իրավակիրառ գործունեության հիմնավորման ներքո պետք է հասկանալ դրա օրինականության պահանջներից մեկը, որը կայանում է վարչական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ի-



րենց կողմից կատարվող վարչական իրավակիրառ գործողությունների փաստապես (ապացուցողական) և իրավաբանորեն (նորմատիվ-իրավական) պատճառաբանությամբ հիմնավորվածության պարտադիր լինելու մեջ, որոնք հրապարակվում (ընդունվում) են իրենց կողմից առաջացող վարչական իրավակիրառ իրավիճակների (վարչական գործերի) լուծման ընթացքում: Իսկ վարչական իրավակիրառ գործունեության հիմնավորվածությունը հանդես է գալիս դրա օրինականության պահանջի անհրաժեշտ պայման, և չպետք է անջատվի դրանից:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. ՀՀ Սահմանադրությունը ընդունված 05.07.1995 թվականին, փոփոխված 2015 թվականին:
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք ընդունված 18.02.2004 թվականին:
3. Чечот Д. М. Избранные труды по гражданскому процессу / сост.: Е. Ю. Новиков; сост., предисл. и коммент.: А. А. Ференс-Сороцкий. СПб.: Изд. дом С.-Петербур. гос. ун-та, 2005. 616 с.
4. Вопленко Н. Н. Теоретические проблемы режима законности в применении норм со-

- циалистического права: дис. ...д-ра юрид. наук. Волгоград, 1983. 408 с.
5. Ткачев Н. И. Законность и обоснованность судебных постановлений по гражданским делам / ред. И. М. Зайцев. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1987. 110 р.
6. Коренев А. П. Нормы административного права и их применение. М.: Юрид. лит., 1978. 141 с.
7. Соловей Ю. П. Усмотрение в административной деятельности советской милиции: дис. ... канд. юрид. наук. М., 1982. 229 с.
8. Салищева Н. Г. Избранное. М.: РАП, 2011. 568 с..
9. Сиринько В. А. Правоприменительная деятельность органов исполнительной власти: современные проблемы эффективности и совершенствования законодательства: дис. ... канд. юрид. наук. Воронеж, 2004. 238 с.
10. Беланова Г. О. Понятие юридической справедливости как основания правоприменительного акта: дис. канд. юрид. наук. Ставрополь, 2003. 192 с.
11. ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականին թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով կայացված որոշում:
12. ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականին թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով կայացված որոշում:



**ԳԵՎՈՐԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ**

Արդարադատության ակադեմիայի ռեկտորի խորհրդական,  
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՊՈՌՆԿՈՒԹՅԱՄԲ ՉԲԱՂՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ներածություն**

Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերով վարույթում երբեմն խնդիրներ են առաջանում վարույթը բացառող հանգամանքները և ապացույցները գնահատելու, վարույթի ապահովման միջոցները կիրառելու, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ գործը քննելու, քննության տեղն ու ժամկետը որոշելու, վարության փաստաթղթեր կազմելու և այլ հարցերը կարգավորող համապատասխան նորմերը կիրառելիս: Սույն հետազոտության արդյունքները վերը թվարկված խնդիրների լուծման ուղենիշ կծառայեն:

**1. Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթի բնութագիրը, վարույթը բացառող հանգամանքները, վարույթին մասնակցող անձինք**

**1.1. Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթի բնութագիրը**

Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթը վարչական իրավունքի համապատասխան նորմերով կարգավորված գործունեություն է, որն իրականացվում է իրավասու վարչական մարմնի՝ ոստիկանության կողմից, օրենքով սահմանված ժամկետներում ու որոշակի վարչական-ընթացակարգային ձևի շրջանակներում՝ նպատակ է ունենալով լուծել պոռնկությամբ զբաղվելու փաստով հարուցված գործը՝ վարչական ակտի ընդունման և կատարման միջոցով:

Պոռնկությամբ զբաղվելու փաստով հարուցված վարույթի խնդիրներն են.

1. Ժամանակին, բազմակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզել գործի հանգամանքները:

Գործի հանգամանքների ժամանակին պարզում նշանակում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանում:

Գործի հանգամանքների հետազոտման բազմակողմանիությունը և լրիվությունն ենթադրում է գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների պարզում<sup>1</sup>:

Օբյեկտիվությունը նշանակում է, որ վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է անկողմնակալորեն պարզել գործի հանգամանքները:

2. Լուծել գործն օրենքին ճիշտ համապատասխան:

Այստեղ խոսքը վարույթի հիմնարար սկզբունքներից մեկի՝ օրինականության սկզբունքի մասին է:

3. Ապահովել ընդունված որոշման կատարումը:

Վարույթը նպատակաուղղված է վարչական ակտի ընդունմանը: Սակայն միայն ակտի ընդունումը բավարար չէ: Վարույթն ամբողջական կարելի է համարել, երբ ապահովվել է վարչական ակտի կատարումը:

4. Բացահայտել պոռնկությամբ զբաղվելու պատճառներն ու պայմանները, կանխարգելել իրավախախտումները:

Վարույթում կարևոր է դրա կանխարգելիչ խնդիրը, որն ուղղված է վարչական իրավախախտումների պատճառների ու պայմանների բացահայտմանը: Հայտնի է, որ պատճառը վարչական իրավախախտումը ծնող գործոնն է, իսկ պայմանը՝ զանցանքի կատարմանը նպաստող

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 128, 2022

<sup>1</sup> Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերով ապացուցման խնդիրներին անդրադարձ է կատարվել հետևյալ աշխատությունում՝ Իսրայելյան Գ., Ապացույցները և ապացուցման ենթակա հանգամանքները պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերով //Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 2 (6), 2021, էջեր 59-63:

գործոնը: Վարույթ իրականացնող մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է հայտնաբերել իրավախախտման պատճառներն ու պայմանները, իր իրավասության սահմաններում, հնարավորության դեպքում վերացնել դրանք:

**1.2. Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանքները**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 247-րդ հոդվածը նախատեսում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանքները, այլ կերպ՝ այն հիմքերը, որոնք առկայության պարագայում վարույթ չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման: Նշված հոդվածում թվարկված հանգամանքներից պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթի բացառման հիմք կարող են հանդիսանալ հետևյալները.

ա) բացակայում է վարչական իրավախախտման դեպքը, այն է՝ պոռնկությամբ զբաղվելու փաստը,

բ) վարչական իրավախախտում կատարելու պահին չի լրացել անձի տասնվեց տարին, այսինքն՝ բացակայում է իրավախախտման սուբյեկտը,

գ) ընդունվել է համաներման մասին օրենք, որը վերացնում է վարչական տույժի կիրառումը,

դ) լրացել են վարչական տույժ նշանակելու՝ օրենքով սահմանված ժամկետները (Օրենսգրքի 37-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ քննարկվող զանցանքի համար վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում),

ե) առկա է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարճելու մասին չբեկանված որոշում, նույն փաստի վերաբերյալ վարչական տույժ նշանակելու մասին որոշում,

զ) մահացել է այն անձը, ում նկատմամբ սկսվել է գործի վարույթը:

Ակնհայտ է, որ վերը նշված հոդվածում թվարկված մյուս հանգամանքների առկայությունը կամ հավանական չէ (օրինակ՝ արարքի կատարման պահին անձը գտնվել է անմեղուակ վիճակում, ուժը կորցրել է վարչական պատասխանատվություն սահմանող նորմատիվ իրավական ակտը) կամ հնարավոր չէ (օրինակ՝ բացակայում է արարքի կազմը, արարքը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, փաստով առկա է քրեական գործ):

1.3. Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթին մասնակցող անձինք

Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթին կարող են մասնակցել ստորև թվարկված անձինք.

1. Վարչական պատասխանատվության ենթարկվողը

Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների վերլուծությունից բխում է, որ պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվողի ներկայությամբ, իսկ եթե նա ծանուցվել է քննության տեղի և ժամանակի մասին և միջնորդություն չի հարուցել քննությունը հետաձգելու մասին՝ նրա բացակայությամբ: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործի վարույթում պարտադիր չի համարում վարչական պատասխանատվության ենթարկվողի ներկայությունը:

Վարչական պատասխանատվության ենթարկվողն իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, տալու բացատրություններ, հարուցելու միջնորդություններ, օգտվելու փաստաբանի ծառայություններից, թարգմանչի ծառայություններից: Վարչական պատասխանատվության ենթարկվող անձն ունի նաև այլ իրավունքներ և կրում է համապատասխան պարտականություններ:

2. Օրինական ներկայացուցիչները

Օրինական ներկայացուցիչներ են ծնողները, որդեգրողները, խնամակալները, հոգաբարձուները, ովքեր ներկայացնում են 16-18 տարեկան անչափահաս վարչական պատասխանատվության ենթարկվողի շահերը:

3. Փաստաբանը

Փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավասու անձը իրավիրվում է վարչական պատասխանատվություն ենթարկվող անձին իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար: Փաստաբանը պաշտպանում է նրա շահերը, գործում վստահորդի դիրքորոշմանը համապատասխան:

Փաստաբանն իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, հարուցելու միջնորդություններ, գանգատարկելու գործով որոշումն իրեն հրավիրած անձի հանձնարարությամբ և անունից: Փաստաբանը պարտավոր է իրավաբանական օգնություն ցուցաբերելիս ճշտորեն պահպանել գործող օրենսդրության պահանջները, օգտագործել օրենքով չարգելված բոլոր միջոցներն իրեն իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար դիմած անձի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս:

**4. Վկան**

Վկան այն անձն է, ում հայտնի են կամ կարող են հայտնի լինել գործով պարզաբանման ենթակա հանգամանքները: Վկան պարտավոր է նշված ժամանակ ներկայանալ իրավասու մարմնի կանչով, տալ ճիշտ ցուցմունքներ գործի՝ իրեն հայտնի հանգամանքների մասին և պատասխանել առաջադրված հարցերին:

**5. Թարգմանիչը**

Թարգմանիչն այն անձն է, ում մասնագիտական լեզվաբանական գիտելիքներն անհրաժեշտ են վարույթի ընթացքում թարգմանություններ կատարելու համար: Նա պարտավոր է ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի կանչով և լրիվ ու ճիշտ կատարել իրեն հանձնարարված թարգմանությունը:

**2. Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթի ապահովման միջոցները**

Վարչական իրավախախտումը կանխելու (եթե սպառվել են ներգործության այլ միջոցները), իրավախախտի անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու (եթե տեղում դա հնարավոր չէ), գործերի ճիշտ և ժամանակին քննությունը և որոշումների կատարումն ապահովելու նպատակով կիրառվող են վարույթի ապահովման հետևյալ միջոցները.

**2.1. Վարչական ձերբակալում**

Վարչական ձերբակալմանն առնչվող հարաբերությունները կարգավորված են Օրենսգրքի 260-262-րդ հոդվածներով:

Վարչական ձերբակալումն անձի ազատության կարճաժամկետ սահմանափակումն է: Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերով վարչական ձերբակալում կատարելու իրա-

վասու է ուստիկանությունը: Վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավելի, քան 3 ժամ: Վարչական ձերբակալման ժամկետը հաշվվում է արձանագրություն կազմելու համար խախտողին բերելու պահից:

Ձերբակալման մասին կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում է այն կազմելու օրը, ամիսը, տարին, տեղը, կազմողի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը, ձերբակալվածի տվյալները, ձերբակալման տեղը, ժամանակը և հիմքը: Արձանագրությունը ստորագրում են կազմողը և ձերբակալվածը: Վերջինիս՝ ստորագրելուց հրաժարվելու դեպքում նշում է արվում արձանագրության մեջ:

Ուստիկանության կողմից վարչական կարգով ձերբակալված անձինք պահվում են ուստիկանության տարածքային մարմնի հերթապահ մասում՝ վարչական կարգով ձերբակալվածների համար առանձնացված վայրերում (խցերում):

**2.2. Ջննությունը**

Ջննության կապակցությամբ ծավալվող հարաբերությունները կարգավորված են Օրենսգրքի 263-րդ հոդվածով:

Ջննությունը ուստիկանության ծառայողների կողմից տեսողական ընկալման ճանապարհով իրավախախտման կամ գործի համար նշանակություն ունեցող հատկանիշների հայտնաբերումն է:

Ջննության տեսակներն են՝ անձնական և իրերի զննությունը:

Անձնական զննությունը կարող է կատարվել զննվողի հետ նույն սեռին պատկանող լիազորված անձի կողմից՝ նույն սեռին պատկանող երկու ընթերականների ներկայությամբ:

Իրերի զննությունը կատարվում է սեփականատիրոջ կամ տնօրինողի ներկայությամբ, իսկ անհետաձգելի դեպքերում՝ նրանց բացակայությամբ և երկու ընթերականների ներկայությամբ:

Ջննության վերաբերյալ կազմվում է արձանագրություն կամ նշում է արվում վարչական իրավախախտման կամ վարչական ձերբակալման վերաբերյալ արձանագրության մեջ:

**3. Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթի փուլերը**

**3.1. Հարուցման փուլ**

Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գոր-

ծերի վարույթն իրականացվում է հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերով:

Հարուցման փուլը վարույթի սկզբնական փուլն է, որը պոռնկությամբ զբաղվելու փաստի արձանագրմանն ու արարքի որակմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Գործ հարուցելու հիմքն անձի կողմից պոռնկությամբ զբաղվելու հատկանիշներ պարունակող արարք կատարելն է: Գործի հարուցմանը կարող է նախորդել իրավախախտման հատկանիշներ պարունակող արարքի մասին տեղեկության ստացումը, այսինքն՝ առիթի առկայությունը: Գործի հարուցման առիթ են վարչական իրավախախտման կատարման փաստի անմիջական հայտնաբերումն իրավասու պաշտոնատար անձի կողմից, իրավապահ և այլ մարմիններից ստացվող նյութերը, ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները և հայտարարությունները:

Վարչական իրավախախտման դեպքն ամրագրվում է արձանագրությամբ, որի առնչությամբ ծավալվող հարաբերությունները կարգավորված են Օրենսգրքի 254-257-րդ հոդվածներով:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն այն փաստաթուղթն է, որը վկայում է տվյալ հակահրավական արարքի կատարման մասին: Պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ արձանագրությունը, որպես կանոն, կազմում է ոստիկանությունը:

Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արձանագրության մեջ նշվում են կազմելու ամսաթիվը, տեղը, կազմողի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը, խախտողի մասին տեղեկությունները, դեպքի տեղը, ժամանակը, էությունը, դրա համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտը, վկաների տվյալները և գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը, ինչպես նաև վկաները: Եթե իրավախախտը հրաժարվում է արձանագրությունն ստորագրելուց, դրանում արվում է հա-

մապատասխան նշում: Նա իրավունք ունի ներկայացնել արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության վերաբերյալ, ինչպես նաև շարադրել այն ստորագրելուց հրաժարվելու շարժառիթները: Արձանագրություն կազմելիս խախտողին բացատրվում են նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին ևս նշվում է արձանագրության մեջ:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը կցվում են այլ փաստաթղթերը՝ բերման վերաբերյալ արձանագրությունը և այլն:

Օրենսդիրը լուծում է խմբակային իրավախախտում կատարելու դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու առանձնահատկությունների մասին: Պրակտիկայում խմբի կողմից զանցանք կատարելու դեպքում կազմվում է մի քանի արձանագրություն՝ կախված կատարողների քանակից, յուրաքանչյուր արձանագրության մեջ հղում է կատարվում խմբի կազմում զանցանք գործած մյուս անձանց նկատմամբ կազմված արձանագրությունների համարներին: Այս խնդրի վերաբերությամբ կարծում ենք, որ ավելորդ թղթաբանությունից խուսափելու տեսանկյունից նպատակահարմար և արդյունավետ է մեկ արձանագրություն կազմելը, որում կնկարագրվի խմբի կողմից կատարված արարքը, իսկ տույժ կնշանակվի յուրաքանչյուր կատարողի նկատմամբ՝ առանձին:

### 3.2. Ընթացիկ փուլ

Քննությունը պետք է իրականացվի օրենսդրությամբ նախատեսված սկզբունքներին համապատասխան:

Օրենսգրքի 276-րդ հոդվածի դրույթների վերլուծությունից բխում է, որ պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ գործերով պետք է կիրառվի քննության տարածքային սկզբունքը, այսինքն՝ գործը պետք է քննվի՝ ըստ վարչական իրավախախտման կատարման վայրի<sup>2</sup>:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ժամկետները սահմանված են Օրենսգրքի հոդված 277-ով: Պոռն-

<sup>2</sup> Բացառություն են կազմում 16-18 տարեկան անչափահասների կողմից պոռնկությամբ զբաղվելու դեպքերը, որոնց պարագայում գործերը, ըստ Օրենսգրքի, պետք է քննվեն Անչափահասների գործերի հանձնաժողովների կողմից՝ ըստ խախտողների բնակության վայրի:

կույթամբ զբաղվելու վերաբերյալ գործերը պետք է քննվեն տասնհինգօրյա ժամկետում: Քննության ժամկետի հաշվարկը, ըստ օրենքի, պետք է սկսվի նյութերը ստանալու օրից: Նման ձևակերպումը տարակարծիք մեկնաբանությունների տեղիք է տալիս. հարց է առաջանում՝ ժամկետը պետք է հաշվարկվել ոստիկանության այլ ծառայության կողմից խախտումը հայտնաբերելու դեպքում<sup>3</sup> նյութերը բաժին մուտքագրելուց հետո վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից դրանք ստանալու<sup>4</sup>, թե այլ մարմնից<sup>4</sup> նյութերը վերահասցեագրվելու դեպքում ստանալու օրից: Նման պարագայում հնարավոր է ժամանակային խզում, ժամկետի հաշվարկի տարբերություն: Կարծում ենք, որ նշված նորմում «ստանալու» բառն անհրաժեշտ է փոփոխել «կազմելու» բառով: Նման լուծումը հնարավորություն կտա քննության ժամկետի հաշվարկը կատարել միատեսակորեն՝ նյութերը կազմելու օրից, անկախ դրանք ստանալու պահից:

### 3.3. Եզրափակիչ փուլ

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում ընդունվում է վարչական ակտ, որը պետք է պարունակի ընդունող մարմնի անվանումը, քննության ժամանակը, վարչական պատասխանատվության ենթարկվողի տվյալները, պարզաբանված հանգամանքները, պատասխանատվությունը նախատեսող ակտը և բուն որոշումը:

Օրենսգրքի հոդված 282-ը սահմանում է որոշումների հետևյալ տեսակները՝

- վարչական տույժ նշանակելու մասին որոշում,
- գործի վարույթը կարճելու մասին որոշում:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է Օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Գործի վերաբերյալ որոշման հայտարարման և որոշման պատճենի հանձնման հետ

կապված հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքի 283-ով: Այն սահմանում է, որ որոշումը հայտարարվում է անհապաղ՝ գործի քննությունն ավարտելուն պես: Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում անձամբ հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է: Պետք է նկատի ունենալ, որ որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե՝

1) այն ստորագրությամբ առձեռն հանձնվել է հասցեատիրոջը, կամ հասցեատերը որոշումն ստանալու անդորրագրի վրա ստորագրել է որոշումն ստանալուց հրաժարվելու մասին.

2) այն ուղարկվել է հասցեատիրոջ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, և այդ օրենքով համարվում է պատշաճ ծանուցված.

3) պաշտոնական էլեկտրոնային փոստ չունեցող հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա այն ուղարկվել է էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության այլ (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու) միջոցով, և դրանք հավաստում են պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցումը ստացած լինելու փաստը.

4) հասցեատերը բողոքարկել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը, որի դեպքում որոշումը հանձնելու օր է համարվում բողոքարկելու օրը:

Եթե հնարավոր չէ որոշումը հանձնել առձեռն, կամ հասցեատերը չունի պաշտոնական էլեկտրոնային փոստ (բնակչության պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ անձը չունի նույնականացման քարտ, կամ պետական ռեգիստրի գրանցամատյանում չկա տեղեկատվություն իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի վերաբերյալ) և գրավոր չի դիմել որոշման մասին իր հայտնած հեռահաղորդակցության միջոցով ծանուցելու խնդրանքով, կամ վերը նշված հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով

<sup>3</sup> Օրինակ՝ խախտումը հայտնաբերել է պարեկային ոստիկանությունը, իսկ քննություն իրականացնում է համայնքային ոստիկանության ծառայողը:

<sup>4</sup> Ենթադրենք ազգային անվտանգության ծառայությունն իրականացրել է միջոցառումներ, որոնք ընթացքում հայտնաբերվել են պոռնկությամբ զբաղվելու դեպքեր:



սահմանված կարգով որոշումը հանձնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, չի ստացվել հավաստում պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցումն ստացած լինելու փաստի մասին, ապա որոշումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ տվյալ վարչական վարույթի ընթացքում անձի հայտնած հասցեով, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձի հաշվառման հասցեով: Եթե փոստով ուղարկված որոշումը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) որոշումը և ստորագրել հրաժարվելու մասին, ապա որոշումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Այն դեպքերում, երբ որոշումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ապա որոշումը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված) որոշման մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը: Հիշյալ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դիմումի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելու հետ մեկտեղ որոշումը ևս մեկ անգամ ուղարկվում է դիմումում մատնանշված հեռահաղորդակցության միջոցով:

Որոշումը հասցեատիրոջ էլեկտրոնային,

այդ թվում՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվելու դեպքում անձն ստանում է ծանուցում որոշման առկայության մասին, ինչպես նաև համապատասխան էլեկտրոնային հղումը, որի միջոցով կայացված որոշումը հնարավոր կլինի ներբեռնել կամ տեսանելի լինել ինտերնետային կայքի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում առնվազն ծանուցման մեջ արտացոլվում է որոշման եզրափակիչ մասը: Բջջային հեռախոսահամարին հաղորդագրությամբ ծանուցման դեպքում անձն ստանում է կարճ հաղորդագրություն որոշման առկայության մասին՝ որոշման համարի կամ այլ տվյալի նշումով, որի օգտագործմամբ անձն ինտերնետային կայքի միջոցով հնարավորություն կունենա դիտելու կամ ներբեռնելու որոշումը:

### Եզրակացություն

Հետազոտության արդյունքում պարզաբանվում են պոռնկությանը զբաղվելու վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանքները, վարույթի ապահովման միջոցները կիրառելու, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ գործը քննելու, քննության տեղն ու ժամկետը որոշելու, վարույթային փաստաթղթեր կազմելու և այլ հարցերը կարգավորող համապատասխան նորմերի կիրառման առանձնահատկությունները, որոնք հնարավորություն կտան վարույթներն իրականացնել միատեսակ ձևով:



**ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

«Վստահական կառավարման ակադեմիայի հայցորդ»

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Վարչական արդարադատության ինստիտուտի ձևավորումն անքակտելիորեն կապված է իրավական պետության գոյության հետ: Չնայած այն հանգամանքին, որ իրավական պետության գաղափարն իր արմատներով սկիզբ է առել հին ժամանակներից, այդուհանդերձ, վարչական արդարադատության ինստիտուտի ստեղծմամբ և կենսագործմամբ նոր երանգ է հաղորդվել իրավական պետության հայեցակարգին՝ առավել արժևորելով մարդու իրավունքների պաշտպանությունը հանրային-իշխանական լիազորություններով օժտված մարմիններից:

Կայացած վարչական արդարադատության ինստիտուտը դրական ազդեցություն է ունենում նաև ժողովրդավարական իրավակարգի վրա՝ այն դարձնելով առավել կառավարելի, կայուն և պաշտպանված: Գ. Բ. Դանիելյանն անդրադառնալով վարչական արդարադատության և ժողովրդավարության ինստիտուտների համատեղ գոյությանը՝ նշել է, որ իրավակարգը ժողովրդավարական համարվել չի կարող, եթե բավարար չափով չեն ձևավորվել վարչական արդարադատության ինստիտուտի տարրերը<sup>1</sup>:

Եթե ժամանակակից ընկալմամբ պետությունը չի կարող լիարժեքորեն համարվել իրավական և ժողովրդավարական, առանց վարչական արդարադատության ինստիտուտի գոյության, նույնը չէինք կարող պնդել այն ժամանակ, երբ վարչական արդարադատության ինստիտուտը գտնվում էր դեռևս սաղմնային վիճակում և միանշանակորեն պահանջված չէր դրա գոյությունը: Հարկ է նկատել, որ պետությունների իրավական համակարգերի էվոլյուցիոն զարգացմանը զուգընթաց փոփոխվել է ոչ միայն վարչական արդարադատության ինստիտուտի

դերն ու նշանակությունը, այլև դրա էության ընկալումը, արժևորվել իրավական ու ժողովրդավարական պետության կայացման և ամրապնդման հարցում վարչական արդարադատության ինստիտուտի դերն ու նշանակությունը:

Տեսական գրականության մեջ առկա չէ մեկ միասնական կարծիք այն մասին, թե վարչական արդարադատությունը պետության զարգացման ժամանակահատվածի որ փուլում է սկսել հանդես գալ որպես իրավական ինստիտուտ: Տեսաբանների մի մասը կարծում է, որ վարչական արդարադատության՝ որպես իրավական ինստիտուտի ի հայտ գալը կապված է եղել 18-րդ դարում տեղի ունեցած ֆրանսիական Մեծ հեղափոխության հետ, մյուս մասը՝ միջնադարի հետ, իսկ որոշները կարծում են, որ վարչական արդարադատության դրսևորումներն ի հայտ են եկել ավելի վաղ:

Ըստ Բ. Ժ. Աբդրահիմովի՝ վարչական արդարադատության առաջին դրսևորումները կարելի է նկատել Հին Հունաստանում և Հին Հռոմում, որտեղ անհատի իրավունքներն ու ազատությունները ճանաչվում էին որպես բարձրագույն արժեք և պաշտպանված էին կառավարիչների կամայականություններից<sup>2</sup>: Ըստ Բ. Ժ. Աբդրահիմովի պնդման՝ վարչական արդարադատության տարրերն անխուսափելի էին նաև միջնադարում: Արդեն 12-րդ դարի կեսերին, Անգլիայում մագիստրատի պաշտոնը (որը զբաղեցնելը իշխանությունը պարտադրում էր խոշոր ֆեոդալներին) ներառում էր կառավարչական և վարչական արդարադատության իրականացման գործառույթներ: Անգլիական մագիստրատները լուծում էին բնակիչների և հարկային մարմինների, ոստիկանության և այլ պետական մարմինների միջև ծագած վեճերը:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 128, 2022

<sup>1</sup> Տե՛ս Դանիելյան Գ.Բ., Վարչական արդարադատության հասկացության բնորոշման նախադրյալները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (112), Երևան, 2004թ., էջ 9:

<sup>2</sup> Տե՛ս Абдраимов Б.Ж., Административная юстиция: соотношение моделей и выбор цели // Журнал ЮРИСТ № 12 (30)., 2003:

Տեսաբանների մյուս մասը, վարչական արդարադատության՝ որպես իրավական ինստիտուտի ի հայտ գալը կապում են համաշխարհային ճանաչում գտած ֆրանսիական Մեծ հեղափոխության հետ (1789-1799թթ.), որի արդյունքում առաջին անգամ հռչակվեց անձի սուբյեկտիվ իրավունքների գերակայությունը: Ս. Վ. Բոբոտովը կարծում էր, որ վարչական արդարադատության ձևավորման դասական տարբերակը հենց ֆրանսիական մոդելն է, քանի որ առաջին անգամ Ֆրանսիայում կյանքի կոչվեց վարչաիրավական բնույթի բողոքների քննության համար մասնագիտացված հաստատությունների ստեղծման գաղափարը<sup>3</sup>:

1789-1799թթ. Ֆրանսիայում տեղի ունեցած հեղափոխության արդյունքում կենսագործվեց իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ ամբողջությամբ արգելելով դատարանների միջամտությունը օրենսդիր և գործադիր իշխանությունների գործունեությանը: Եթե մինչ այդ ընդհանուր իրավասության դատարաններն իրավունք չունեին վերահսկելու գործադիր իշխանությանը, ապա հեղափոխությունից հետո ստեղծվեց անկախ՝ վարչական արդարադատության ճյուղը:

Ֆրանսիական հեղափոխության գաղափարախոսության և իրավական պետության տեսության ուժեղ ազդեցության ներքո ձևավորվել է վարչական արդարադատության գերմանական դոկտրինը: Գերմանիայում ֆրանսիական տեսության հայեցակարգային մոտեցումներն օգտագործվել են վարչական դատարանների ստեղծման գործընթացում, ինչպես նաև արտացոլվել գերմանացի տարբեր հեղինակների գիտական մոտեցումներում (Գ. Ֆունկե, Վ. Կուն, Ռ. Գնեյստ, Լ. Ֆոն Շտայն. Գ. Անշյուտց, Կ. Լեմայեր և ուրիշներ)<sup>4</sup>:

19-րդ դարում վարչական արդարադատության ինստիտուտի շուրջ տեղի ունեցած զարգացումները Գերմանիայում նշանավորվեցին վարչական դատարանների ստեղծմամբ: Արդեն նույն դարի երկրորդ կեսին Բադենում վարչաիրավական բնույթի վեճերը սկսեցին քննվել

խորհուրդների, իսկ որպես երկրորդ ատյան՝ մասնագիտացված վարչական դատարանի կողմից: Հաջորդիվ՝ 19-րդ դարի 60-70-ական թվականներին, մի շարք պետություններում ստեղծվեցին վարչական դատարաններ:

Ամփոփելով Ֆրանսիայում և Գերմանիայում վարչական արդարադատության ինստիտուտի կայացման գործում տեղի ունեցած զարգացումները՝ որպես կարևոր ձեռքբերում կարելի է համարել 19-րդ դարում արդեն առանձին վարչական դատարանների կողմից վարչաիրավական բնույթի վեճերի լուծումը, ինչը վկայում էր ընդհանուր իրավասության դատարանների կողմից իրականացվող դատական հսկողությունից դուրս՝ արդարադատության մասնագիտացված, հատուկ տեսակի անխուսափելիորեն գոյության փաստի մասին: Բացի այդ, 19-րդ դարում արդեն վարչական արդարադատության ամենակարևոր առաքելություններից էին համարվում գործադիր իշխանության մարմինների գործունեության նկատմամբ իրականացվող հսկողությունը, անձի խախտված իրավունքների դատական պաշտպանությունն ու դրանց վերականգնումը:

Անդրադառնալով Արևմտյան Եվրոպայի անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի պետություններից Անգլիային՝ պետք է նշել, որ այնտեղ 19-րդ դարում վարչաիրավական վեճերի քննությունը դեռևս իրականացվում էր ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Այդ առնչությամբ հարկ է հիշատակել Ա. Ի. Ելիստրատովի կողմից արված հետևյալ մեկնաբանությունը. «անգլիական տիպը քիչ թե շատ բաղկացած է մեկ միասնական արդարադատության իրականացումից՝ պայմանավորված ընդհանուր իրավասության դատարանների կողմից կառավարման ակտերը վերահսկողության առարկա դարձնելու հանգամանքով<sup>5</sup>»:

20-րդ դարի կեսերին վարչական արդարադատության տեսության փոփոխությունների վրա էական ազդեցություն ունեցավ տարբեր եվրոպական երկրների կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդ-

<sup>3</sup> Sém Боботов С.В., Государственный совет Франции: политическая роль и юридические функции // Сов. государство и право, 1987, № 7:

<sup>4</sup> Sém Нурболатов А.Н., Административная юстиция. Сравнительно-правовой анализ: учебное пособие Алматы: Казахский национальный университет им. Аль-Фараби, 2014, ст. 52.

<sup>5</sup> Sém Елистратов А.И., Основные начала административного права. М., 1917., ст. 282.

վածով նախատեսված՝ անձի դատական պաշտպանության հիմնարար իրավունքի լայնորեն ճանաչումը<sup>6</sup>: Դրանով իսկ առավել արժևորվեց վարչական արդարադատության՝ որպես անհատների իրավունքների պաշտպանության հատուկ դատական մեխանիզմի կարևորությունը: Արդեն 20-րդ դարի 90-ականների սկզբին Է. Գարսիա դե Էնտերրիան հայտարարեց Իսպանիայում վարչական արդարադատության ավանդական հայեցակարգի գերիշխանության ավարտի մասին<sup>7</sup>:

Ամփոփելով տարբեր պետություններում վարչական արդարադատության ինստիտուտի շուրջ տեղի ունեցած զարգացումները՝ կարող ենք առանձնացնել հետևյալը.

1. Վարչական արդարադատության՝ որպես իրավական ինստիտուտի, ստեղծման պահից մինչ օրս փոփոխվել է դրա էության վերաբերյալ ընկալումը, ընդլայնվել դրանով կարգավորվող վեճերի շրջանակը: Արդյունքում, ժամանակակից ընկալմամբ՝ վարչական արդարադատությունը իրավական և ժողովրդավարական պետության կարևոր հիմնաքարերից մեկն է, որի միջոցով առավելագույնս երաշխավորվում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանրային իշխանության մարմիններից:

2. Տեսական գրականության մեջ առկա չէ մեկ միասնական մոտեցում այն հարցի շուրջ, թե կոնկրետ երբ է ծագել վարչական արդարադատության ինստիտուտը. համաձայն լինելով որոշ տեսաբանների այն պնդումների հետ, որ վարչական արդարադատության դրսևորումները կարելի է նկատել դեռևս հին ժամանակներում, այնուամենայնիվ, կարծում ենք, որ որպես իրավական ինստիտուտ՝ այն առանձնացվել է 18-րդ դարում՝ ֆրանսիական Մեծ հեղափոխության արդյունքում, երբ հստակորեն տարանջատվեցին իշխանության երեք ճյուղերի գործառույթները և դատական իշխանությունը, ի դեմս՝ վարչական արդարադատության, ստանձնեց

գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու առաքելությունը.

3. 18-19-րդ դարերում Ֆրանսիայում և Գերմանիայում վարչական արդարադատությունն սկսեց իրականացվել մասնագիտացված դատարանների միջոցով, որի արդյունքում առավել ընդգծվեց և արժևորվեց արդարադատության յուրատիպ և հատուկ լինելը:

Արտասահմանյան պետություններում վարչական արդարադատության ինստիտուտի պատմաիրավական զարգացումները ներկայացնելուց բացի, կարևոր ենք համարում հանգամանալից վերհանել նաև դրա ձևավորման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում: Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության ինստիտուտի շուրջ զարգացումները սկսվեցին հետխորհրդային ժամանակաշրջանից՝ շարունակվելով առ այսօր:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո՝ մինչև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը<sup>8</sup>, վարչաիրավական բնույթի վեճերը քննվում էին 1965թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վարչական հարաբերություններից ծագող գործերի վարույթ» վերտառությամբ 2-րդ բաժնի կանոններին համապատասխան: Միաժամանակ հարկ է նկատել, որ դրանք վերաբերում էին ընտրողների ցուցակներում եղած անճշտությունների, վարչական կարգով տույժեր նշանակելու, քաղաքացիների իրավունքները ոտնահարող պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների հետ կապված զանգատարկման, ինչպես նաև հարկային պարտավորությունների շուրջ բռնագանձումներ կատարելու վերաբերյալ գործերին: Արդյունքում, կարող ենք փաստել, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերի և գործողությունների բողոքարկման այնպիսի նեղ շրջանակ էր սահմանված, որը ոչ մի կերպ

<sup>6</sup> Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից վավերացված միջազգային պայմանագիր է: Կոնվենցիան սահմանում է յուրաքանչյուր անձի անքակտելի իրավունքներն ու ազատությունները և պարտավորեցնում Կոնվենցիան վավերացրած պետություններին երաշխավորելու այդ իրավունքներն տվյալ պետության հսկողության տակ գտնվող յուրաքանչյուր անձի համար: Այն կազմվել է 1950թ. և ուժի մեջ մտել 1953 թ. սեպտեմբերի 3-ից:

<sup>7</sup> Sten Garcia de Enterría E., Hacia una nueva justicia administrativa. Civitas, Madrid, 1992, p 60.

<sup>8</sup> 17.06.1998թ. ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը (<Օ-110-Ն) ուժը կորցրել է 09.04.2018թ.:

չէր կարող համեմատվել վարչարարության տարբեր դրսևորումների նկատմամբ այսօր իրականացվող դատական հսկողության հետ:

Հատկանշական է, որ վարչաիրավական բնույթի վեճերի քննությունը 1998թ. հունիսի 17-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսվեց իրականացնել հատուկ հայցային վարույթի շրջանակներում, ինչն արդեն վկայում էր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց հետ կապված վեճերի՝ բովանդակային և դատավարական առումներով մյուս դատական վարույթներից հստակ առանձնացված լինելու մասին: Միևնույն ժամանակ, կարող ենք նկատել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պետական մարմինների և քաղաքացիների միջև վեճերի լուծման գործընթացներում վարչական դատավարության համընդհանուր սկզբունքները չէին կիրառվում և վարչաիրավական բնույթի վեճերի քննությունն առավելապես վերաբերում էր վարչական իրավախախտումների վերաբերյալ ակտերի հետ կապված գործերին: Դրա մասին էր վկայում նաև «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի<sup>9</sup> 3-րդ հոդվածը, որով վարչաիրավական վեճերի լուծման համար առանձնացված էր միայն վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելը և լուծելը:

Արդյունավետ և գործուն մեխանիզմների որոնումները հանգեցրին նրան, որ 2007թ. փետրվարին Հայաստանի Ազգային ժողովն ընդունեց Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը, որն օրենսդրորեն արտահայտում էր վարչական դատարանների կազմավորման վերաբերյալ Հայաստանի քաղաքական կամքը՝ սահմանելով վարչական դատարանների գործունեության հիմքում ընկած հիմնարար մոտեցումները<sup>10</sup>: Հիշյալ օրենսգրքով, որպես մասնագիտացված դատարան, նախատեսվեց Վարչական

դատարանը, որը պետք է քններ նոր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը (3-րդ և 35-րդ հոդվածներ)<sup>11</sup>:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ֆիզիկական և իրավաբանական անձանց համար լայն հնարավորություններ ստեղծվեցին բողոքարկման առարկա դարձնելու վարչական մարմինների կողմից իրականացված գրեթե ցանկացած վարչարարության դրսևորում և դրանով իսկ Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության ինստիտուտը լատենտային արդարադատությունից վերածվեց լիարժեք, առանձին գործող արդարադատության տեսակի:

Թեև վարչական արդարադատության բնագավառում կատարված բարեփոխումը չափազանց կարևոր և բեկումնային էր, այդուհանդերձ, իր մեջ պարունակում էր որոշակի թերություններ և բացթողումներ: Մասնավորապես, մինչև 2010թ. գործում էր վարչական դատարանների երկաստիճան համակարգ՝ վերաքննիչ ատյանի բացակայությամբ, որի արդյունքում, որոշ դեպքերում, անձանց հնարավորություն չէր ընձեռվում բողոքարկման միջոցով հասնելու Վարչական դատարանի կողմից թույլ տրված դատական սխալների վերացմանը, քանի որ Վճռաբեկ դատարանը հանդիսանալով «իրավունքի դատարան»՝ իրականացնում է օրենքի միատեսակ կիրառության ապահովմանն ուղղված իր սահմանադրաիրավական առաքելությունը և դրա կողմից դատական գործի վարույթ ընդունելը պայմանավորված է առավել նեղ իրավական և փաստական հիմքերի առկայությամբ և գնահատմամբ: Դրա վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև Սահմանադրական դատարանն իր 13.04.2010թ. թիվ ՍԴՈ-873 որոշմամբ՝ նշելով, որ առավել նպատակահարմար է խնդրին տալ դատարանակազմական լուծումներ<sup>12</sup>: Արդյունքում, 2010թ. ստեղծվեց Վարչական վերաքննիչ դատարանը:

<sup>9</sup> 18.06.1998թ. ընդունված «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրել է 18.05.2007թ.:

<sup>10</sup> Տեն Մուկոյան Ս., «Մասնագիտացված դատարանները Հայաստանի Հանրապետության դատական համակարգում», «Դատական իշխանություն», Երևան, 2014թ., N 10-11, էջ 11:

<sup>11</sup> Նախկինում գործող ՀՀ դատական օրենսգրքն ընդունվել է 21.02.2007թ. և ուժը կորցրել՝ 09.04.2018թ.: ՀՀ վարչական դատավարության առաջին օրենսգրքն ընդունվել է 28.11.2007թ., իսկ ուժը կորցրել՝ 07.01.2014թ.:

<sup>12</sup> Սահմանադրական դատարանի կողմից 13.04.2010թ. ընդունված թիվ ՍԴՈ-873 որոշմամբ արտահայտված դիրքորոշումները հիմք են հանդիսացել 28.10.2010թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-135-Ն օրենքի ընդունման համար, որի արդյունքում՝ 01.12.2010թ. սկսած, գործում է Վարչական վերաքննիչ դատարանը:

2013թ. դեկտեմբերի 5-ին Ազգային ժողովն ընդունեց նոր ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, որով վերափոխվեցին մի շարք դատավարական կանոններ, վերանայվեցին տարբեր դատավարական վարույթներին վերաբերող կարգավորումներ, մասնավորապես, վերացվեց վճարման կարգադրության վարույթը, սահմանվեցին քաղաքացիական դատավարությունից տարբերվող և վարչական դատավարությանը հատուկ նոր կարգավորումներ, վերացվեցին գործող հակասական դրույթները:

Եթե 1995թ. և 2005թ. խմբագրություններով Սահմանադրությամբ չէր հիշատակվում Վարչական դատարանի մասին, այլ նախատեսվում էր, որ թվարկվածից բացի օրենքով կարող են ստեղծվել այլ դատարաններ, ապա նույնը չենք կարող ասել 2015թ. փոփոխություններով՝ Սահմանադրության մասով: Մասնավորապես, վերջինիս 163-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվեցին Հայաստանի Հանրապետությունում գործող դատարանները՝ ներառելով նաև Վարչական դատարանը: Մեր կարծիքով՝ սահմանադրական մակարդակով Վարչական դատարանի վերաբերյալ ամրագրված արձանագրվեց Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության՝ որպես դատական համակարգի անբաժանելի մասը կազմելու փաստը, քանզի այսուհետ դրա գոյության անհրաժեշտությունը հավասարեցվեց ընդհանուր իրավասության դատարաններին:

Այսպիսով՝ ամփոփելով հետխորհրդային Հայաստանում վարչական արդարադատության ինստիտուտի զարգացման դինամիկան՝ կարող են փաստել հետևյալը.

1. Սկզբնական շրջանում վարչական արդարադատությունը, ընդհանուր առմամբ, ընկալվեց որպես հանրային իշխանության մարմինների կողմից ընդունված վարչական իրավախախտումների վերաբերյալ ակտերի նկատմամբ իրականացվող դատական հսկողություն: Վարչական արդարադատության ինստիտուտի

զարգացման շուրջ 30 տարիների ընթացքում բավականաչափ կատարելագործվեց ՀՀ օրենսդրությունը և դրանով պայմանավորված ընդլայնվեցին վարչական արդարադատության ինստիտուտի հնարավորությունները՝ հիմնականում սկսվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ակտերի նկատմամբ իրականացվող դատական հսկողությունից և ներկայումս ներառելով վարչական արդարադատության ժամանակակից ընկալման հիմքում ընկած կարևոր ուղղությունները:

2. Վարչական արդարադատության ինստիտուտի զարգացման համատեքստում կարելի է առանձնացնել երկու փուլեր. առաջին փուլ-նորանկախ Հայաստանի Հանրապետության ծնունդից մինչև 2008թ., երբ ֆորմալ առումով գոյություն չունեին Վարչական դատարաններ, և վարչական արդարադատության դերն ու նշանակությունը կազմում էին մերօրյա վարչական արդարադատության ընդամենը մի մասը: Երկրորդ փուլ-2008թ. սկսած, երբ ստեղծվեցին Վարչական դատարաններ և վարչական արդարադատության իրականացման համար նախատեսված հատուկ դատավարություն՝ իրեն հատուկ սկզբունքներով և գործիքներով:

3. 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ՝ սահմանադրական մակարդակով մյուս դատարանների հետ մեկտեղ Վարչական դատարանների առկայության ամրագրումը ցույց տվեց դրա՝ բազմամյա գործունեության արդյունավետությունը և այսուհետ՝ անփոփոխելիորեն գոյության անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ ընդհանրացնելով ամբողջ վերոգրյալը, կարծում ենք՝ վարչական արդարադատության ինստիտուտի ստեղծման պահից առ այսօր որոշակիորեն փոփոխվել է դրա առաքելությունը և դատական իշխանության համակարգում դերն ու նշանակությունը՝ վերածվելով որպես վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության նկատմամբ հատուկ սկզբունքների և գործիքների միջոցով հսկողություն իրականացնող արդարադատության տեսակի:



**ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հազենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր)

**ՃԱՆԱԳԱՐՅԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԴՐԱՆՑԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Մաս 1. Ճանապարհային նշանների իրավական բնույթը**

Ճանապարհային նշանները պատկանում են վարչական մարմինների այն հայտարարություններին, որոնց հետ մարդկանց մեծ մասն առնչվում է ամեն օր: Բայց դրանք վարչարարության մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն ոչ միայն քանակական տեսանկյունից, այլ նաև առաջ են քաշում վարչական իրավունքի ու վարչական դատավարության բազմաթիվ դասական հարցեր: Սույն հոդվածն ընդհանուր համակարգային պատկերացում է տալիս ճանապարհային նշանների վերաբերյալ կարևոր թեմաների մասին:

**I. Ներածություն**

Հայաստանյան ճանապարհների ցանցը սերտորեն փոխկապակցված է և ինտենսիվորեն օգտագործվում է ամենից առաջ քաղաքների ներսում: Ճանապարհային երթևեկության իրավունքը՝ իբրև վտանգների կանխարգելման հատուկ իրավունք, նպատակ ունի երաշխավորելու հետիոտների և տրանսպորտային միջոցների անխափան ու անվտանգ երթևեկությունը, ինչպես նաև երթևեկության անվտանգությունն ու հարմարավետությունը (ՃաներթվանվտանգՕ 1-ին հոդ. 2-րդ մաս): Դրա համար Ճանապարհային երթևեկության կանոնները<sup>1</sup> (ՃԵԿ) պարունակում են վարքի ընդհանուր և հատուկ կանոններ (4-165-րդ կետեր), որոնք մատնանշում են որոշակի **վերացական**, այսինքն՝ անորոշ թվով մարդկանց համար անորոշ թվով դեպքերում գոյություն ունեցող վտանգները: Բայց քանի որ նյութական օրենսդիրը չի կարող կարգավորում-

ներ նախատեսելիս աչքի առաջ ունենալ մի կոնկրետ փողոցի առանձնահատկությունները, ուստի ՀՀ Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգի<sup>2</sup> (Ճաներթվազմկարգ) **19-րդ կետը** լիազորում է իրավասու մարմիններին **կոնկրետ** վտանգների կանխման նպատակով ընդունել երթևեկության արգելքներ կամ սահմանափակումներ՝ ճանապարհային նշանների միջոցով: Այս գործիքակազմը ամենօրյա վարչարարության համար մեծ նշանակություն ունի: Ճանապարհային նշանները կարևոր դեր են խաղում նաև հանրային իրավական հարաբերություններում, օրինակ. տրանսպորտային միջոցների տարհանման դեպքերում, որոնցում կայանումն արգելող նշանը (համար 3.28, 3.29 և 3.30) իրավական հիմք է ծառայում վարչական հարկարանքի միջոցի՝ փոխարինող գործողության կիրառման համար (ՎարչՀիմՕ 78-րդ հոդ. 2-րդ մասի «ա» կետ): Հաճախ երթևեկության մասնակիցները նաև իրավական պաշտպանություն են հայցում ընդդեմ ճանապարհային նշանի, որովհետև նրանք չեն ցանկանում հանդուրժել դրանից բխող պահանջը կամ արգելքը:

Ստորև համակարգային ձևով ներկայացվում են ճանապարհային երթևեկության իրավունքի հիմնադրույթները (II) և ճանապարհային նշանների հետ կապված վարչաիրավական և դատավարական տարբեր խնդիրները (III-V):

**II. Ճանապարհային երթևեկության իրավունքի հիմնադրույթները**

**1. Ճանապարհային նշանների տեսակները**

Ճանապարհային նշանների իրավական հիմքերը սահմանված են ՃԵԿ XXI գլխում: ՃԵԿ

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 128 2022

<sup>1</sup> Հաստատված է ՀՀ Կառավարության 28.06.2007 թ. N 955-Ն որոշմամբ:  
<sup>2</sup> Հաստատված է ՀՀ Կառավարության 29.06.2006 թ. N 1206-Ն որոշմամբ:

167-րդ կետը տարբերակում է ճանապարհային նշանների ութ խումբ: **Նախագուշացնող** նշանները տեղեկացնում են ճանապարհի այն վտանգավոր տեղամասին մոտենալու մասին, որով երթևեկելիս անհրաժեշտ է ձեռնարկել իրադրությանը համապատասխան միջոցներ (օր.՝ հուշում երկաթուղային գծանցի մասին): **Առավելության** նշանները սահմանում են խաչմերուկներով, երթևեկելի մասերի փոխհատումներով կամ ճանապարհների նեղ հատվածներով անցման հերթականությունը (օր.՝ «գլխավոր ճանապարհ» կամ «հանդիպակաց երթևեկության առավելություն»): **Արգելող** նշանները սահմանում կամ վերացնում են երթևեկության որոշակի սահմանափակումներ (օր.՝ վազանցի, շրջադարձի, կանգառի, կայանման արգելքները): **Թելադրող** նշանները ցույց են տալիս երթևեկության թույլատրելի ուղղությունները, նվազագույն արագությունը, ինչպես նաև հետիոտների և որոշ տրանսպորտային միջոցների վարորդների համար նախատեսում են երթևեկության ուղղությունները (օր.՝ ուղիղ, շրջանաձև կամ համատեղ երթևեկություն պահանջող նշանները): **Հատուկ թելադրանքի** նշանները սահմանում կամ վերացնում են երթևեկության որոշակի ռեժիմներ (օր.՝ «ավտոմայրուղի» կամ «միակողմ երթևեկությամբ ճանապարհ»): **Տեղեկատվության** նշանները տեղեկացնում են բնակավայրերի և այլ օբյեկտների տեղակայման, ինչպես նաև սահմանված կամ առաջարկվող երթևեկության ռեժիմների մասին (օր.՝ «վթարային կանգառի գոտի» կամ «օբյեկտի (գետ, լիճ ևլն) անվանում»): **Սպասարկման** նշանները տեղեկացնում են համապատասխան օբյեկտների գտնվելու վայրի մասին (օր.՝ «հիվանդանոց» կամ «սննդի կետ»): **Լրացուցիչ տեղեկատվության** նշանները (ցուցանակները) ճշտում կամ սահմանափակում են այն նշանների ազդեցությունը, որոնց հետ կիրառվում են (օր.՝ «կայանման տևողության սահմանափակում» կամ «բացի ծառայողական ավտոմոբիլներից»): Սույն հոդվածում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում թելադրող և արգելող նշաններին:

## 2. Ճանապարհային նշանների իրավական հիմքերը և լրացուցիչ բնույթը

ՃաներթԹԿազմԿարգի 19-րդ կետը լիազորում է ճանապարհի իրավասու մարմիններին կիրառել ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներ՝ ներառյալ ճանապարհային նշաններ: Ընդ որում, ճանապարհային նշանների միջոցով երթևեկությունը կարգավորելու նպատակը տրանսպորտային միջոցների և հետիոտների անխափան ու անվտանգ երթևեկության ապահովումը և ճանապարհների թողունակության մեծացումն է (կարգի 2-րդ կետ): Բայց ճանապարհային նշանների ու այլ տեխնիկական միջոցների (գծանշում, լուսացույցներ, անվտանգության կղզյակներ և այլն) կիրառումն ունի լրացուցիչ (սուբսիդիար) բնույթ, այն է՝ դրանք պետք է ներդրվեն միայն այնտեղ, որտեղ ՃԵԿ-ով սահմանված վարքի ընդհանուր կանոններն անբավարար են թվում երթևեկությունը կարգավորելու համար:

## 3. Ճանապարհի լիազոր մարմինները

Ճանապարհային երթևեկությունը կազմակերպելու նպատակով ճանապարհային նշաններ տեղադրելու մասին որոշում ընդունելու լիազորություն ունեն ՃաներթԿազմԿարգի 6-րդ կետում նշված մարմինները: Ընդհանուր օգտագործման պետական ճանապարհների (բացառությամբ Երևան քաղաքի) համար ճանապարհի լիազոր մարմինը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունն է (6-րդ կետի «ա» ենթակետ), Երևանի ճանապարհների (այդ թվում՝ քաղաքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության տարանցիկ ճանապարհների հատվածների) համար՝ Երևանի քաղաքապետը (6-րդ կետի «բ» ենթակետ), ընդհանուր օգտագործման ոչ պետական ճանապարհների և ոչ ընդհանուր օգտագործման ճանապարհների համար՝ դրանց սեփականատերերը (6-րդ կետի «գ» և «դ» ենթակետեր):

## III. Ճանապարհային նշանն իբրև վարչական ակտ

### 1. Պատմական զարգացումը

Ճանապարհային նշաններն այսօր անվիճելիորեն համարվում են վարչական ակտեր:<sup>3</sup>

<sup>3</sup> Գերմանիայի Դաշնային վերջական դատարանի որոշումներից տե՛ս BVerwGE 154, 365 Rn. 16; գիտական գրականությունից տե՛ս, օրինակ, Maurer/Waldhoff, AllgVerwR, 2020, § 9 Rn. 35; Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 35 Rn. 330; Detterbeck, AllgVerwR, 2021, Rn. 471.

Ընդ որում, դրանք վարչական ակտեր են Վարչ-ՀիմՕ 53-րդ հոդ. 1-ին մասի **2-րդ պարբերության** իմաստով: Դրանք կարգավորում են փողոցի՝ իբրև հանրային գույքի օգտագործումը հանրության կողմից:<sup>4</sup> Այդպիսի վարչական ակտերը կոչվում են ընդհանուր վարչական կարգադրություններ<sup>5</sup> (գերմ. *Allgemeinverfügung*): Ճանապարհային նշանները նաև **տևական ներգործություն ունեցող** վարչական ակտեր են, որովհետև դրանք չեն սպառվում մեկանգամյա պահանջով կամ արգելքով, այլ տևական ժամանակով կարգավորում են մի կոնկրետ վայրի երթևեկությունը:<sup>6</sup>

Ճանապարհային նշանների որակումն իբրև վարչական ակտեր երկար ժամանակ վիճելի էր: Նախկինում դրանք առավելապես համարվում էին ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր:<sup>7</sup> Երբ 19-րդ դարից 20-րդ դարի անցման ժամանակ Գերմանիայում մեքենա վարելը դարձավ շատերին հասանելի, երթևեկության՝ կոնկրետ վայրի առանձնահատկություններով պայմանավորված կարգավորումներն ընդունվում էին, որպես կանոն, իբրև ոստիկանական ընդհանուր բնույթի հրամաններ (*Polizeiverordnung*), որոնք սկզբնական շրջանում անգամ հրապարակվում էին նորմատիվ ակտերի համար նախատեսված տեղական պաշտոնական տեղեկագրերում (*örtliches Amtsblatt*): Բայց քանի որ դա երթևեկության արդյունավետ կարգավորման համար պրակտիկ տեսանկյունից հարմար չէր, սկսեցին փողոցների վրա ցուցանակներ տեղադրել: Ցուցանակների տեղադրումը միաժամանակ ներառում էր երթևեկության կարգավորման ընդունումը:<sup>8</sup> Գերմանիայի Դաշնային վարչական դատարանը նույնպես իր նախկին որոշումներում

ճանապարհային նշանները համարում էր ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր:<sup>9</sup>

**2. Սահմանազատումն իրավանորմից. «կոնկրետ գործի կարգավորում» հատկանիշը**

Նորմատիվ ակտերից, որոնք պարունակում են իրավանորմեր, վարչական ակտի որոշիչ տարբերությունը «կոնկրետ գործի կարգավորումն» է (ՎարչՀիմՕ 53-րդ հոդ. 1-ին պարբ.): Իրավանորմը, հակառակը, պարունակում է *ընդհանուր ու վերացական* կարգավորում, այսինքն՝ վերաբերում է անորոշ թվով դեպքերի և անորոշ թվով անձանց:<sup>10</sup> Եթե **առանձին** անձանց վերաբերելը դիտենք իբրև կոնկրետ գործի կարգավորման պարտադիր նախապայման, ապա ճանապարհային նշանները պետք է որակվեն որպես իրավանորմեր, որովհետև դրանք ուղղված են երթևեկության **բոլոր** մասնակիցներին:<sup>11</sup> Բայց ճանապարհային նշաններն իբրև ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր որակելն առաջացնում է ինչպես իրավական, այնպես էլ գործնական բարդություններ:<sup>12</sup> Գերմանական իրավունքում իրավանորմերը ենթակա են այսպես կոչված առոչնչության տեսությանը, ըստ որի՝ հակաիրավականության դեպքում դրանք առոչնչ՝ ի սկզբանե (*ex tunc*) անվավեր են:<sup>13</sup> Բայց երթևեկության անվտանգության ու հարմարավետության համար ճակատագրական կլիներ, եթե ճանապարհային նշաններն իրենց հակաիրավականության դեպքում առոչնչ ու դրանով՝ ոչ պարտադիր լինեին: Թեև հայկական իրավունքը հետևում է վերացնելիության տեսությանը, ըստ որի՝ հակաիրավական իրավանորմերն ի սկզբանե անվավեր չեն,<sup>14</sup> այլ կորցնում են իրենց վավերությունը դատարանի կողմից վե-

<sup>4</sup> Manssen, DVBl 1997, 633 (634); Maurer/Waldhoff, AllgVerwR, 2020, § 9 Rn. 35; Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 35 Rn. 330; Detterbeck, AllgVerwR, 2021, Rn. 471; այլ կարծիք Heckel, JuS 2011, 166 (167):  
<sup>5</sup> Տե՛ս Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 160:  
<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, BVerwGE 138, 21 Rn. 18: Տևական ներգործություն ունեցող վարչական ակտի հասկացության մասին տե՛ս Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 35 Rn. 223; Detterbeck, AllgVerwR, 2021, Rn. 516; Barczak, JuS 2018, 238 (243):  
<sup>7</sup> Տե՛ս Kümpfer, JuS 2017, 731 (732):  
<sup>8</sup> Պատմական զարգացման մասին տե՛ս Wandschneider, Die Allgemeinverfügung in Rechtsdogmatik u. Rechtspraxis, 2009, 162ff.:  
<sup>9</sup> Տե՛ս BVerwGE 6, 317 (319):  
<sup>10</sup> Տե՛ս Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 159-160:  
<sup>11</sup> Տե՛ս, օրինակ, Obermayer, NJW 1980, 2386 (2387).  
<sup>12</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Maurer/Waldhoff, AllgVerwR, 2020, § 9 Rn. 35.  
<sup>13</sup> Առնչության տեսության մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 137:  
<sup>14</sup> Տե՛ս Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 137-138:

րացվելուց հետո (*ex nunc*): Բայց այդ դեպքում ևս դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից նշանն իր ուժը կկորցնի երթևեկության բոլոր մասնակիցների համար. ոչ ոք չի ունենա դրանց հետևելու պարտականություն: Այս խնդիրը հաղթահարելու համար գերմանական դատական պրակտիկայում և գիտական գրականության մեջ գերիշխող է դառնում այն կարծիքը,<sup>15</sup> որ վարչական ակտի հասկացության իմաստով կոնկրետ դեպքի կարգավորում են ոչ միայն **անհատական** և կոնկրետ, այլ նաև **ընդհանուր** և կոնկրետ կարգավորումները, այն է՝ որոշիչ է դեպքի կոնկրետությունը:<sup>16</sup> Այդ պատճառով Գերմանիայի Դաշնային վարչական դատարանը ևս 1967 թվականից սկսած ճանապարհային նշանները որակում է իբրև վարչական ակտեր ընդհանուր վարչական կարգադրությունների ձևով. դրանք պարունակում են մշտապես կրկնվող պահանջներ ու արգելքներ մի կոնկրետ վայրի երթևեկության համար և փոխարինում են երթևեկությունը կարգավորող ոստիկանի հրահանգներին, որոնք անվիճելիորեն վարչական ակտ են:<sup>17</sup> Վարչական ակտ լինելու կարևոր հետևանքը ՎարչՀիմՕ 61-րդ հոդ. 4-րդ մասի կիրառելիությունն է, այսինքն՝ ճանապարհային նշաններն իրենց հակաիրավականության դեպքում ևս մնում են ուժի մեջ ու շարունակում են գործել, և նրանցից բխող պահանջներն ու արգելքները պարտադիր են երթևեկության մասնակիցների համար: Որ ճանապարհային նշանները վարչական ակտեր են, այսօր այլևս վիճելի չէ:<sup>18</sup>

### 3. «Վարչական մարմնի ընդունած որոշում, կարգադրություն, հրաման» հատկանիշը

Երբեմն անհրաժեշտություն է առաջանում կոնկրետ գործի կարգավորման հատկանիշի փոխարեն մանրամասն ստուգել վարչական ակտի հասկացության մյուս հատկանիշները:

Օրինակ՝ կարող է արդեն հարցական լինել, թե արդյոք առկա է վարչական մարմնի որոշում, կարգադրություն կամ հրաման ՎարչՀիմՕ 53-րդ հոդ. 1-ին մասի 1-ին պարբ. իմաստով, երբ ճանապարհային նշանները տեղադրվում են ճանապարհներն սպասարկող մասնավոր կապալառու կազմակերպությունների կողմից (տես ՃաներթԿազմԿարգի 24-րդ կետի 4-րդ պարբ.): Այստեղ որոշիչ նշանակություն ունի, թե արդյոք ճանապարհային նշան տեղադրելու մասին որոշումը կարող է վերագրվել ճանապարհի լիազոր մարմնին (տես ՃաներթԿազմԿարգի 19-րդ կետը): Մասնավոր կազմակերպությունների գործողությունները նման դեպքերում ընկալվում են իբրև ճանապարհի լիազոր մարմնի սուրհանդակի գործողություններ:<sup>19</sup>

**Օրինակներ:** Վարչական մարմնի ընդունած որոշումն առկա է նաև այն դեպքում, երբ ճանապարհի լիազոր մարմինը հավանություն է տալիս փողոցային տոնակատարություն անցկացնող մասնավոր կազմակերպության ներկայացրած ճանապարհային նշանների պլանին. վարչական մարմնի որոշումը չի բացակայում զուտ այն պատճառով, որ ճանապարհային նշան տեղադրելու հիմքում ընկած է մասնավոր անձի առաջարկը:<sup>20</sup> Նույն կերպ ճանապարհներն սպասարկող մասնավոր կապալառու կազմակերպության գործողությունը պետք է վերագրել ճանապարհի լիազոր մարմնին, երբ լիազոր մարմնի ճշգրիտ ու հստակ ցուցումների պատճառով մասնավոր կազմակերպությանը որոշման ազատություն չի մնում այն հարցում, թե արդյոք, որտեղ ու ինչքան ժամանակով նա պիտի ճանապարհային նշան տեղադրի փողոցում:<sup>21</sup>

### 4. «Կարգավորում» հատկանիշը

Այնուհետև պետք է ուշադրություն դրածնել, որ վարչական ակտի որակ կարող են ունենալ միայն այն ճանապարհային նշանները,

<sup>15</sup> Sten Kümpfer, JuS 2017, 731 (732):

<sup>16</sup> Sten Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, 160-րդ էջի սխեման:

<sup>17</sup> BVerwGE 27, 181 (183); BVerwG, NJW 1978, 656 (656); BVerwGE 59, 221 (224ff).

<sup>18</sup> Sten Milker, Jura 2017, 271 (273); Kintz, JuS 2011, 1022 (1027); Unger/Koemm, JuS 2012, 449 (452); Hong, Jura 2012, 773 (475):

<sup>19</sup> Sten Kümpfer, NJW 2016, 2356 (2356): Վարչական մարմինների հայտարարությունների դեպքում սուրհանդակության մասին տես Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 35 Rn. 61:

<sup>20</sup> BVerwGE 154, 365 Rn. 11 ff.

<sup>21</sup> Sten OLG Hamm, BeckRS 2015, 18648:

որոնք պարունակում են կարգավորում Վարչ-ՀիմՕ 53-րդ հոդ. 1-ին մասի 1-ին պարբ. իմաստով, այն է՝ իրավական առումով պարտադիր կարգադրություն՝ պահանջ կամ արգելք:<sup>22</sup> «Կարգավորում» հատկանիշը բացակայում է այն ճանապարհային նշաններում, որոնք սուկ հուշումներ են պարունակում, այն է՝ նախազուշացնող, տեղեկատվության և սպասարկման նշանների մեծ մասում:<sup>23</sup> Կայանումն արգելող նշանների (թիվ 3.28, 3.29 և 3.30) կարգավորման բովանդակությունը ոչ միայն դրանց գործողության տարածքում մեքենան կայանելու **արգելքն** է, այլ նաև այդ նշանները միաժամանակ **պահանջում են** հեռացնել արգելքին հակառակ կայանված մեքենան (այսպես կոչված «մեքենան հեռացնելու պահանջ», գերմ. «Wegfahrgebot»):<sup>24</sup> Մեքենան հեռացնելու՝ այդ նշաններից բխող պարտականությունը մեքենաների տարհանման դեպքում հարկադրաբար կատարվում է փոխարինող գործողության միջոցով (Վարչ-ՀիմՕ 78-րդ հոդ. 2-րդ մասի «ա» կետ, 81-րդ հոդ.):

**5. Ճանապարհային նշան տեղադրելու մասին լիազոր մարմնի որոշման և ճանապարհային նշանը տեղադրելու հարաբերակցությունը**

Շատ հաճախ հենց «ճանապարհային նշանն» է դիտվում իբրև այն վարչական ակտը, որը հիմք է ծառայում հարկադիր կատարման վարույթի համար կամ դառնում է վարչական կամ դատական կարգով վիճարկման առարկա:<sup>25</sup> Բայց արդեն այն փաստը, որ ճանապարհային նշանները տեղադրվում են մասնավոր կապալառու կազմակերպությունների կողմից, հուշում է, որ ճանապարհային նշան տեղադրելու մասին լիազոր մարմնի որոշումը՝ որպես այդպիսին (ՃաներթԿազմԿարգի 19-րդ կետ), և ճանապարհային նշանի տեղադրումը (ՃաներթԿազմԿարգի 24-րդ կետի 4-րդ պարբ.) երկու առանձին իրավական գործընթացներ

են: Ըստ էության երթևեկության կարգավորումը և դրանով իսկ՝ վարչական ակտն ընդունվում են արդեն ճանապարհի լիազոր մարմնի որոշմամբ: Դրա հիման վրա ճանապարհային նշանի տեղադրումն այդ վարչական ակտի մասին **իրազեկումն** է երթևեկության մասնակիցներին<sup>26</sup> (Վարչ-ՀիմՕ 59-րդ հոդ.): Քանի որ ճանապարհային նշանից բխող պահանջներին կամ արգելքներին հետևելու՝ երթևեկության մասնակիցների պարտականությունը ծագում է դրա տեղադրման պահից, ուստի երթևեկության մասնակցի տեսանկյունից հենց ճանապարհային նշանն է վարչական ակտը, անգամ եթե իսկական կարգավորումն արդեն դրանից առաջ ընդունվել է լիազոր մարմնի որոշմամբ: Ու քանի որ ճանապարհային նշանների հետ կապված վեճերը, որպես կանոն, լուծվում են երթևեկության մասնակցի տեսանկյունից (նրա մեքենայի տարհանում, երթևեկության սահմանափակման վիճարկում ևլն), ուստի որևէ խնդիր չկա վարչական ակտ անվանել հենց ճանապարհային նշանը, որը հիմք է ծառայում վարչական հարկադրանքի միջոց կիրառելու համար կամ որը վիճարկվում է:

**Օրինակ.** Կ-ն դատական կարգով հաջողությամբ վիճարկում է հեծանվային արահետին օգտագործելու՝ լիազոր մարմնի կողմից սահմանված պարտականությունը (նշան համար 4.4.1), բայց լիազոր մարմինն աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով վճռի հրապարակումից վեց ամիս անց էլ դեռ նշանը չի հեռացրել: Պարտավոր է Կ-ն շարունակել օգտագործել հեծանվային արահետը, և կարող է նա կրկին վիճարկման հայց ներկայացնել հեծանվային արահետին օգտագործելու պարտականության դեմ:<sup>27</sup>

Վարչական դատարանի վճռով վերացվել է լիազոր մարմնի որոշումը (ՎարչԴՕ 125-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ), այնպես որ հեծանվային ճանապարհին օգտագործելուն պարտա-

<sup>22</sup> «Կարգավորում» հատկանիշի հասկացության մասին տե՛ս Maurer/Waldhoff, AllgVerwR, 2020, § 9 Rn. 6; Detterbeck, AllgVerwR, 2021, Rn. 445 ff.:  
<sup>23</sup> Rebler, NZV 2006, 113 (113f.); Milker, Jura 2017, 271 (272).  
<sup>24</sup> BVerwG, NJW 1978, 656 (657); BVerwGE 102, 316 (319); BVerwG, NVwZ 1988, 623.  
<sup>25</sup> StEu BVerwGE 102, 316 (318); BVerwGE 138, 21 Rn. 15; Maurer/Waldhoff, AllgVerwR, 2020, § 9 Rn. 34; Milker, Jura 2017, 271 (272); Kintz, JuS 2011, 1022 (1027); Hong, Jura 2012, 473 (475):  
<sup>26</sup> StEu Koehl, JuS 2012, 63 (65); Unger/Koemm, JuS 2012, 449 (453); VG Lüneburg, NZV 2016, 446:  
<sup>27</sup> Օրինակն ըստ Լյունեբուրգի վարչական դատարանի VG Lüneburg, NZV 2016, 446 որոշման:

վորեցնող վարչական ակտն այլևս գոյություն չունի: Այնուամենայնիվ, *Կ-ն* չի կարող ելնել նրանից, թե ինքն այլևս պարտավոր չէ օգտագործել հեծանվային արահետը, որովհետև ճանապարհային նշանը դեռ մնում է իր տեղում: Այստեղ առնվազն պարզ չէ, թե արդյոք ընդունվել է ճանապարհի լիազոր մարմնի համապատասխան նոր որոշում, որին հետևելը պարտադիր է նաև դրա ոչ իրավաչափ լինելու դեպքում (ՎարչՀիմՕ 61-րդ հոդ.), թե ճանապարհային նշանը սուկ այսպես կոչված **թվացյալ վարչական ակտ** (*Schein-Verwaltungsakt*) է:<sup>28</sup> Այդ պատճառով *Կ-ի* նոր հայցի թույլատրելիությունը չի կարող մերժվել իրավական պաշտպանության կարիքի (*Rechtsschutzbedürfnis*) բացակայության հիմքով: *Կ-ն* կարող է առավել բարենպաստման դատավարական սկզբունքի (*Grundsatz der Meistbegünstigung*) հիման վրա ներկայացնել կա՛մ վարչական ակտի առջին լինելը ճանաչելու հայց (ՎարչԴՕ 69-րդ հոդ. 2-րդ մաս), կա՛մ վիճարկման հայց (ՎարչԴՕ 66-րդ հոդ.):<sup>29</sup>

#### IV. Ճանապարհային նշանների իրազեկումն ու ուժի մեջ մտնելը

##### 1. Իրազեկումն իբրև վարչական ակտի ուժի մեջ մտնելու հիմք

Ճանապարհային նշանը կարող է երթևեկության մասնակիցներին միայն այն դեպքում մի որոշակի վարքի պարտավորեցնել, երբ այն իրավական ուժ ունի: Մասնավորապես, ճանապարհային նշանը՝ իբրև ՎարչՀիմՕ 78-րդ հոդ. 1-ին մասի իմաստով որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողության կատարումից ձեռնպահ մնալուն ուղղված վարչական ակտ, կարող է միայն իրավական ուժ ունենալու դեպքում հիմք ծառայել «փոխարինող գործողություն» վարչական հարկադրանքի միջոցը կիրառելու համար:

**Գրավոր** վարչական ակտերն ուժի մեջ են մտնում, որպես կանոն, դրանց ընդունման մասին ՎարչՀիմՕ 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելու հաջորդ օրվանից (ՎարչՀիմՕ 60-րդ հոդ. 1-ին մաս), իսկ **բանավոր և այլ ձևի** վարչական ակտերն ուժի մեջ են մտնում

այդ ակտերը հրապարակելու պահից (ՎարչՀիմՕ 60-րդ հոդ. **3-րդ մաս**), եթե դրանք առաջին չեն (ՎարչՀիմՕ 62-րդ հոդ. 2-րդ մաս): Զուտ հակաիրավականությունը չի խոչընդոտում վարչական ակտի ուժի մեջ մտնելն ու գործելը (ՎարչՀիմՕ 61-րդ հոդ.): ՎարչՀիմՕ 59-րդ հոդ. 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտի ընդունման մասին վարչական մարմինն սկզբունքորեն պետք է իրազեկի վարչական վարույթի մասնակիցներին (այսպես կոչված **անհատական իրազեկում**): Վարչական վարույթի մասնակիցներն են վարչական ակտի **հասցեատերը** (այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն ընդունել է վարչական ակտ) և **երրորդ անձինք** (այն անձինք, որոնց իրավունքները կարող են շոշափվել վարչական ակտով) (ՎարչՀիմՕ 21-րդ հոդ. 1-ին մաս): Բայց ճանապարհային նշանների դեպքում անհատական իրազեկումն **անհնար է**, ինչը հատկապես պարզ երևում է կայանումն արգելող շարժական նշանների դեպքում:

**Օրինակ.** *Հ-ն* մեքենայի սեփականատեր է: Նա իր մեքենան վաղուցվանից միշտ կայանում է իր տան դիմացի փողոցի աջ հատվածում: Նա այդպես է վարվում նաև 2021 թ. ապրիլի 3-ին՝ հիվանդանոցում երկու շաբաթով ստացիոնար բուժման անցնելուց առաջ: Փողոցում շինարարական աշխատանքներ սկսելուց առաջ փողոցի լիազոր մարմինը 2021 թ. ապրիլի 5-ին *Հ-ի* տան դիմացի հատվածում ժամանակավորապես կայանումն արգելող նշաններ է տեղադրում (նշան համար 3.28), որոնք պիտի գործեն 2021 թ. ապրիլի 10-ից մինչև ապրիլի 13-ը: *Հ-ի* մեքենան միանգամից տարհանվում է 2021 թ. ապրիլի 10-ին: Իրավաչափ է եղել տարհանումը (լուծումը տես ստորև **IV.3.** կետում):

Վարչական ակտերի հարկադիր կատարման իրավունքը վարչական հարկադրանքի միջոցների թվում նախատեսում է փոխարինող գործողությունը (ՎարչՀիմՕ 78-րդ հոդ. 2-րդ մասի «ա» կետ): Դրա բնույթն այն է, որ որևէ գործողություն կատարելու վերաբերյալ վար-

<sup>28</sup> Luu Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 35 Rn. 335՝ վարչական դատարանի՝ հայցը բավարարող վճիռը **գործնականում** ուժի մեջ է մտնում միայն ճանապարհային նշանը հեռացնելու պահից: Նույնը տես Kopp/Ramsauer, VwVfG, 2016, § 35 Rn. 172:

<sup>29</sup> Այդ մասին տես Württenberger, VerwProzR, 2011, Rn. 272; Hufen, VerwProzR, 2021, § 18 Rn. 27.



չական ակտով նախատեսված պարտականությունը պարտավոր անձի փոխարեն կատարում է հարկադիր կատարման մարմինը (կամ նրա հանձնարարությամբ՝ մեկ ուրիշ անձ) (Վարչ-ՀիմՕ 81-րդ հոդ.): Վարչական ակտի հարկադիր կատարման վարույթում պարտավոր անձի գործելու պարտականության և, ըստ այդմ, փոխարինող գործողության կիրառման կարևոր նախապայմանը **հարկադիր կատարման ենթակա հրամայող վարչական ակտի** առկայությունն է (այսպես կոչված *հիմնական վարչական ակտ*, գերմ. *Grundverwaltungsakt*<sup>30</sup>):

Բերված օրինակում փոխարինող գործողության համար իբրև հիմնական վարչական ակտ կարող է ծառայել կայանումն արգելող նշանում պարունակվող «մեքենան հեռացնելու պահանջը» (տես III.4.): Հ-ի համար մեքենան հեռացնելու պարտականություն ստեղծելու համար Հ-ն պարտադիր պետք է իրազեկվի այդ վարչական ակտի (կայանումն արգելող նշանի) մասին, հակառակ դեպքում վարչական ակտը նրա համար ուժի մեջ չի մտնի (Վարչ-ՀիմՕ 60-րդ հոդ.) և նրա համար պարտադիր չի լինի:

## 2. Ճանապարհային նշանների մասին անհատական, թե՛ հրապարակային իրազեկում

Վարչ-ՀիմՕ 59-րդ հոդ. 1-ին մասը նախատեսում է իրազեկման երկու եղանակ՝ **հանձնում** (անհատական իրազեկում) կամ **հրապարակում** (հրապարակային իրազեկում): Ճանապարհային նշանների մասին իրազեկումը հանձնման եղանակով ի սկզբանե բացառվում է, ուստի իրազեկումը կարող է կատարվել միայն հրապարակման եղանակով: Ճանապարհային նշանները գրավոր կամ բանավոր վարչական ակտեր չեն: Դրանք **այլ ձևի** վարչական ակտեր են Վարչ-ՀիմՕ 54-րդ հոդ. 3-րդ մասի ի-

մաստով, քանի որ ընդունվում են պատկերային նշանների ձևով: Դրանց մասին իրազեկման համար գործում է հրապարակային իրազեկման՝ Վարչ-ՀիմՕ 59-րդ հոդ. 7-րդ մասով նախատեսված եղանակը, այն է՝ այլ ձևի վարչական ակտը հրապարակվում է օրենքով նախատեսված որևէ տեսքով դրա հասցեատերերին անմիջականորեն տեսանելի, ընկալելի կամ որևէ այլ ձևով հասանելի դարձնելու միջոցով: Ճանապարհային նշանը փողոցում տեղադրելը երթևեկության մասնակիցներին հասանելի է դարձնում նշանը **տեսանելի** ձևով:

Ճանապարհային նշանների մասին իրազեկման հրապարակային եղանակի ընդունումը համոզիչ է, նախ, այն պատճառով, որ ճանապարհային նշանները «որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի» ուղղված վարչական ակտ, այն է՝ փողոցի օգտագործումը կարգավորող **ընդհանուր** վարչական կարգադրություն են (Վարչ-ՀիմՕ 53-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ պարբ.), որոնց համար հրապարակային իրազեկումը իրազեկման առավել ողջամիտ եղանակն է:<sup>31</sup> Անհատական իրազեկումն անհամատեղելի կլիներ նաև ճանապարհային նշանի՝ իբրև տևող վարչական ակտի բնույթի հետ, որովհետև ճանապարհային նշանը ոչ թե մի քանի առանձին վարչական ակտերի համակցություն, այլ **մեկ** վարչական ակտ է:<sup>32</sup> Բացի այդ, հրապարակային իրազեկումը համահունչ է ճանապարհային նշանների՝ վտանգները կանխելու գործառույթին. եթե անհրաժեշտ լիներ անհատական իրազեկում, ապա երաշխավորված չէր լինի երթևեկության նույնքան արդյունավետ կառավարումը:<sup>33</sup>

**Շարունակությունը՝ հաջորդ համարում**



<sup>30</sup> Kingreen/Poscher, Polizei- und Ordnungsrecht, 2020, § 24 Rn. 29.

<sup>31</sup> Stelkens in Stelkens/Bonk/Sachs, VwVfG, 2018, § 41 Rn. 153.

<sup>32</sup> Stü Stelkens, NJW 2010, 1184 (1185):

<sup>33</sup> Hong, Jura 2012, 473 (476).

**ԺՈՐԱ ԶՀԱՆԳԻՐՅԱՆ**

Իր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ 2021 Թ. ՄԱՐՏԻ 26-Ի N ՍԴՈ - 1586 ՈՐՈՇՄԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ Սահմանադրության 170-րդ հոդվածին համապատասխան «Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից»:

Ակամա հարց է ծագում՝ արդյո՞ք չի կարող Սահմանադրական դատարանի որոշումը կամ եզրակացությունը լինել հակասահմանադրական: Կարող է: Քանի որ Սահմանադրական դատարանի դատավորները մարդիկ են, ովքեր ունեն տարբեր ոլորտների պոտենցիալ գիտական մտածելակերպ, երևույթը ընկալելու և իրավաբանորեն վերլուծելու տարբեր ունակություններ և կարողություններ, «բարոյականության արժեհամակարգի» տարբեր կրողներ են և ամենակարևորը՝ ունեն տարբեր ակնկալիքներ՝ ոչ բացասական իմաստով:

**Երկար ժամանակ մտածում էի գրել, թե՛ չգրել այս գիտական հոդվածը: Եվ այդ պայքարում վերջապես հաղթեց առաջինը՝ գրելը:**

**Խնդրում եմ ընթերցողին ներողամիտ լինել հոդվածը կարդալիս և նկատի ունենալ, որ ես դասախոս եմ և քիչ թե շատ՝ գիտության մարդ, ով որևէ քաղաքական ուժի ներկայացուցիչ չէ, որևէ կուսակցության անդամ չի և չի հավակնում որևէ պաշտոնի: Ես ՀՀ քաղաքացի եմ, պետականամետ, անկախ պետության արժեհամակարգի կրող, ինչը և ստիպում է ինձ գրել այս հոդվածը:**

Կարծում եմ՝ բավական դժվար է վերլուծել Սահմանադրական դատարանի, ինչպես այսօր են ասում, «բարձր դատարանի» կայացրած (հեղափոխական) որոշումը՝ հակասահմանադրականության տեսանկյունից:

Եվ այսպես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 2021թ. մարտի 26-ին ընդունված ՍԴՈ-1586 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1 հոդվածը ճա

նաչեց ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Նման որոշման հիմք հանդիսացել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու մասին 2019թ. հունիսի 21-ի դիմումը, Ռոբերտ Քոչարյանի 2019թ. մայիսի 29-ի և հունիսի 4-ի ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածը Սահմանադրության 72-րդ և 73-րդ հոդվածներին և 2019թ. հունիսի 21-ի ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածին, Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու դիմումները:

Հարկ է նշել, որ Սահմանադրական դատարան դիմողները հայտնել են տեսակետ, որի համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին: Ըստ նրանց՝ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որոշակիությամբ և չի ապահովում նորմի կանխատեսելիությանը ներկայացվող պահանջները (Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջները): Որոշակի և կանխատեսելի չէ «իրավական համակարգում սահմանադրական նորմի գործողության դադարեցում» եզրույթը: «Իրավական համակարգ» եզրույթը դիտարկելով որպես իրավական ակտերի (ոչ թե ակտ, այլ նորմ) (*հավելումը՝ Ժ.Զ.*) ամբողջություն (այլ նաև իրավահարաբերությունների) (*հավելումը՝ Ժ.Զ.*), նրանք կարծում են, որ նորմի գործողության դադարեցումը տեղի է ունենում ակտի փոփոխությամբ կամ ուժը կորցնելով:

Ըստ դիմողի՝ պարզ չէ նաև «Սահմանադրական կարգ» եզրույթը պետք է դիտարկել որպես ավելի բարդ և համընդգրկուն երևույթ, թե՛

մեկնաբանել միայն Սահմանադրության առանձին հոդվածների շրջանակներում:

- 2008թ. առկա չի եղել «փաստացի դադարեն իրավական համակարգում գործողությունից» ձևակերպումը,
- առկա են եղել 300 և 300.1 հոդվածների հանցակազմների տարրերի տարբերությունները,
- վիճարկվող դրույթները 2008թ. «կատարման պահին հանցագործություն չեն հանդիսացել» և հետևաբար մեղադրանքի առաջադրումը, կալանավորման կիրառումը խախտել են Սահմանադրության 72-րդ և 73-րդ հոդվածները:

Ըստ առաջին ատյանի դատարանի՝

1. նոր օրենքը իրավական որոշակիության տեսանկյունից անձանց իրավական վիճակը վատթարացնող օրենք է,

2. տարբերվում են դիսպոզիցիաները՝ նախորդը նեղ է, նորը՝ լայն,

3. պարզ չէ, որ թվականի Սահմանադրությանը հղում կատարել (1995, թե՛ 2005):

Կարծում եմ, որ նշված «անհասկանալիների» մասին իսկապես խելացի, իրենց գործին տիրապետող պաշտպաններն այնքան հաճախ են բարձրաձայնել, որ դրանց բոլորի մեկնաբանման համար անհրաժեշտ է գրել առնվազն մի քանի հոդված:

Նշենք միայն մեկ հանգամանք, եթե այդ «անհասկանալիների» քանակը պայմանավորված է մեր «հարգարժան» փաստաբանների պրոֆեսիոնալ և այլ շահերով, ապա ինձ համար անհասկանալի են նման որոշման կայացման իրավական, գիտական հիմքերը, ինչի համար էլ կփորձեմ մեկնաբանել մի քանի էական սահմանադրաիրավական կատեգորիաներ:

### Սահմանադրական դատարանի առաքելությունը

Սահմանադրական դատարանի առաքելությունը սահմանադրական արդարադատության իրականացումն է: **Այն է՝ սահմանադրական նորմերի կյանքի կոչման ապահովում՝ այդ նորմերի բովանդակությանը համապատասխան: Այն իրականացվում է բոլոր պետական մարմինների, պաշտոնատար անձանց կողմից ընդունված իրավական նորմերի**

**րի Սահմանադրությանը համապատասխանության ապահովման միջոցով: Ստացվում է, որ Սահմանադրական արդարադատության նպատակը սահմանադրականության ապահովումն է, ինչը կարելի է դիտարկել որպես վերջինիս բովանդակություն:**

Սահմանադրության նորմերը նորմ-սկզբունքներ են և ունեն իմպերատիվ բնույթ, ինչը նշանակում է, որ վերջիններս անկախ մեկնաբանողից, պետք է մեկնաբանվեն և իրացվեն՝ ղեկավարվելով Սահմանադրության՝ որպես երկրի հիմնական օրենքի արժեհամակարգով:

Սահմանադրության մասին տեսությունում այն դիտվում է որպես պետության հիմնական օրենք, որն օժտված է երեք հիմնական իրավական հատկանիշներով, այն է՝ սահմանադրությունը կարգավորում է առավել կարևոր հասարակական հարաբերությունները, օժտված է բարձրագույն իրավական ուժով և ընդունվում ու փոփոխվում է հատուկ կարգով:

Կարծում եմ, որ ժամանակն է սահմանադրության մասին տեսությանը տալ նոր բովանդակություն:

Հարկ է նշել, որ առ այսօր իրավագիտության մեջ սահմանադրության մասին տեսությունում տրված չէ այն հարցի պատասխանը, թե ինչի ուժով է սահմանադրությունը օժտվում վերը նշված հատկանիշներով: Կարծում եմ, որ այդ հարցի պատասխանը պետք է փնտրել Սահմանադրության՝ որպես պետության հիմնական օրենքի արժեհամակարգի մեջ, ինչը, իմ կարծիքով ունի հետևյալ բովանդակությունը.

ա) Սահմանադրությունը ժողովրդի միասնական կամքի սահմանադրեցման արդյունքն է, ինչը լեգիտիմացվում և լեգալացվում է նաև Սահմանադրական դատարանի կողմից իր կայացրած որոշումներով:

բ) Այդ կամքի ուժով է ամրագրվում իշխանության պատկանելիությունը ժողովրդին և վերջինիս կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման ձևերի և մեթոդների (վարչակարգի) ընտրության իրավունքը:

գ) Այդ կամքի ուժով է Սահմանադրությունը դառնում երկրի հիմնական օրենք, օժտվում իրավական բարձրագույն ուժով և կարգավորում առավել կարևոր հասարակական հարաբերությունները:

դ) Այդ կամքի ուժով են սահմանվում պետության սահմանադրական կարգի հիմունքները և այլ պետաիրավական ինստիտուտների, այդ թվում նաև՝ սահմանադրական դատարանի կազմավորման կարգը, իրավասությունը և այլն:

ե) Այդ կամքի ուժով է սահմանվում մարդու բարձրագույն արժեք լինելը և վերջիններիս պաշտպանության պարտականությունը պետական հանրային իշխանության կողմից:

զ) Սահմանադրությունն ի վերջո պայմանագիր է ժողովրդի և նրա կողմից ձևավորած իշխանության (պետության) միջև:

Այստեղից հետևում է, որ Սահմանադրությամբ ամրագրված արժեքի՝ մարդու պահպանումը պետք է լինի ինչպես պետության, այնպես էլ ցանկացած պետական մարմնի՝ այդ թվում՝ Սահմանադրական դատարանի և պաշտոնատար անձի գործունեության հիմնական առաքելությունը:

Այս նկատառումից ելնելով էլ փորձենք վերլուծել-լուսաբանել ՀՀ Սահմանադրական դատարանի կայացրած ՍԴՈ-1586 որոշման սահմանադրականությունը, ինչի համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

1. Ինչ է սահմանադրական կարգը և որո՞նք են սահմանադրական կարգը բնութագրող հատկանիշները (տարրերը),

2. ինչքանո՞վ են առկա այդ բնութագրիչները 300 և 300.1 հոդվածներում,

3. ինչքանո՞վ են որոշակի և կանխատեսելի ձևակերպված 300.1 հոդվածը, և առկա՞ են անկանխատեսելիության հիմքերը,

4. հանցակազմերի տեսանկյունից կա՞ն ընդհանրություններ 300 և 300.1 հոդվածներում:

Տարբեր պետությունների, այդ թվում նաև եվրոպական սահմանադրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջիններիս սահմանադրություններում չի օգտագործվում «Սահմանադրական կարգի հիմունքներ» եզրույթը, այլ օգտագործվում է «Պետական կարգի հիմունքներ» (Ֆինլանդիա, Շվեդիա), «Հիմնական դրույթներ» (Սլովակիա, Սլովենիա, Իտրվաթիա...), «Հիմնական սկզբունքներ» (Մոլդովա, Ռումինիա, Իտալիա և այլն), «Պետական սկզբունքներ» (Մալթա), «Պետության հիմունքներ» (Ադրբեջան) և այլն:

«Սահմանադրական կարգի հիմունքներ»

եզրույթը օգտագործվում է Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Հայաստանի Հանրապետության սահմանադրություններում:

Հարկ է նշել, որ ինչպես օգտագործողները, այնպես էլ չօգտագործողներն իրենց Սահմանադրություններում սահմանում են այդ պետությունների իրավական, ժողովրդավարական, ինքնիշխան, սոցիալական, աշխարհիկ լինելը: Այլ կերպ ասած՝ այդ պետությունների ժողովուրդները երազում և ուզում են ապրել նման արժեհամակարգ ունեցող պետություններում:

Հարկ է նշել, որ բոլոր սահմանադրություններն էլ տարբեր բաժիններում կամ գլուխներում ամրագրում են ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածով ամրագրված «Սահմանադրական կարգ» հասկացությունը բնութագրող տարրերը: (ՀՀ Սահմանադրության 1-5-րդ հոդված և 6-րդ հոդվածի 1 մաս):

Ակամա հարց է ծագում, ի՞նչ տարբերություն, թե որ գլխում կամ բաժնում են ամրագրված այդ արժեքները (նորմ-սկզբունքները), կարևորն այն է, որ դրանք որդեգրված և սահմանադրորեն ամրագրված նորմ-սկզբունքներ են, որոնք ունեն իմպերատիվ բնույթ, ինչը նշանակում է, որ վերջիններս պարտադիր են բոլոր քաղաքացիների և պաշտոնատար անձանց համար և ենթակա են կատարման:

Ժողովուրդը սահմանադրությամբ սահմանում է սահմանադրական կարգի իր իդեալը՝ այն պետք է լինի իրավական, ժողովրդավարական, ինքնիշխան, սոցիալական (ՀՀ Սահմանադրության 1-ին հոդված), որտեղ ինքը պետք է լինի իշխանության կրողը և ինքնուրույն որոշի վերջինիս իրականացման ձևերը (ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդված), որ իշխանության ցանկացած յուրացում հանցագործություն է, որ մարդը բարձրագույն արժեք է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն է, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական, քնական (ընդգծումը՝ Ժ.Ջ.) իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված), որ պետական իշխանությունը իրականացվում է իշխանությունների տարանջատման հիման վրա (ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդված), որ բոլոր պետական

մարմինները, պաշտոնատար անձինք պետք է գործեն իրենց լիազորությունների շրջանակում և օրենքների պահանջներին համապատասխան (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված):

Դժվար չէ նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածում ամրագրված «Սահմանադրական կարգ» եզրույթն իր մեջ պարունակում է վերը թվարկված բոլոր արժեքները՝ հիմնարար դրույթները, որոնց բոլորի առկայության դեպքում կարող է առկա լինել սահմանադրական կարգը, ինչը սահմանադրական պետության, ինչու ոչ՝ նաև սահմանադրականության գրավականն է:

Այստեղից հետևում է, որ վերը թվարկված ցանկացած տարրի դեմ ուղղված ոչ իրավաչափ գործողություն պետք է դիտվի որպես հանցագործություն:

Վիճարկման ենթակա չէ այն գաղափարը, որ Սահմանադրությունը իշխանության կազմավորման և ֆունկցիավորման իրավական բնույթի պատշաճ օրինականացումն է քաղաքացիական հասարակության սուբյեկտների հետ հարաբերություններում<sup>1</sup>: Ստացվում է, որ սահմանադրական կարգը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ լեգիտիմ իշխանության որոշակի կառուցվածք, ընդ որում՝ միայն լեգիտիմ իշխանության<sup>2</sup> (ընդգծումը՝ Մ.Զ.), ինչի բացակայության համար էր պայքարում ժողովուրդը քննարկվող ժամանակահատվածում:

Սահմանադրական կարգը, որպես իշխանության կառուցվածք դիտարկելու դեպքում անընդունելի են «Վենետիկի հանձնաժողովի», Քոչարյանի շահերը պաշտպանող փաստաբանների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի այն պնդումները, թե առկա են «Սահմանադրական կարգի չհստակեցված հայեցակարգ», «Սահմանադրության 1-5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ նորմի փաստացի վերացում», «նորմի կանխատեսելիություն ապահովող պահանջների ոչ հստակ և որոշակի առկայություն» և այլն:

Եթե Վենետիկի հանձնաժողովի համար անհասկանալի կամ պարզ չէ, որովհետև չի կարողանում գտնել որևէ ելրոպական երկիր (մինչ-

դեռ կա՝ Բելառուս, Ռուսաստանի Դաշնություն), որը սահմանել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված «Սահմանադրական կարգի հիմունքներ» սահմանադրաիրավական ինստիտուտ, ապա ՀՀ Սահմանադրական դատարանի պարագայում անհասկանալի է, թե՞ ինչն է անհասկանալի:

Այս պարագայում ինձ համար անհասկանալի է.

1. ՀՀ Սահմանադրական դատարանը պարզաբանելու և որոշելու էր ՀՀ քրեական օրենսգրքի 300.1 հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությամբ, թե՞ ելրոպական պետությունների սահմանադրություններին,

2. Արդյո՞ք ՀՀ որպես ինքնիշխան պետություն իրավունք չունի սահմանելու իր պատկերացրած Սահմանադրական կարգը,

3. Վենետիկի հանձնաժողովին դիմելը հետագա կայացվելիք որոշումը հիմնավորելու, արդարացնելու, թե՞ Սահմանադրական դատարանի սահմանադրագետների փորձի կամ մի քիչ էլ կոմպետենտության պակասի արդյունքն էր: Նման որոշման հիմքում այն է, որ Վենետիկի հանձնաժողովի տված եզրակացությունում նշված են կամ համընդհանուր ճանաչում ունեցող դրույթներ, կամ էլ երկիմաստ հասկացություններ: Արդյունքում, գնահատողը ՀՀ Սահմանադրական դատարանն է, ինչը կարող էր կատարել ինքնուրույն:

Փորձենք պարզաբանել և հասկանալ որոշ անհասկանալի սահմանադրաիրավական ինստիտուտների և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հանցակազմերի փոխադարձ կապը: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է նախ և առաջ Սահմանադրական դատարանի կողմից Վենետիկի հանձնաժողովին ուղղված հարցադրումով.

1. «Արդյո՞ք Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունների քրեական օրենքներում «Սահմանադրական կարգի դեմ ուղղված» հանցագործությունները պարունակում են հղումներ սահմանադրություններին կամ դրանց կոնկրետ հոդվածներին»,

<sup>1</sup> Տե՛ս Четвернин В.А. (Демократическое государство): введение теорию М. 1993, стр. 126.

<sup>2</sup> Տե՛ս Ж. Джангирян. Легитимная государственная власть гарант конституционализме. Конституционное и муниципальное право, М. 2013, Նոր «Գլաճորը» գիտության բավիղներում, Լեգիտիմ պետական իշխանությունը՝ որպես սահմանադրականության գրավական, Եր., 2013թ., էջ 9-36:

2. Ինչպե՞ս են Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունների վերաբերելի իրավական ակտերում և, մասնավորապես, քրեական օրենքներում նկարագրվում «Սահմանադրական կարգ», «Սահմանադրական կարգի տապալում», «իշխանության յուրացում» եզրույթները, և արդյո՞ք առկա են այդ եզրույթների դատական մեկնաբանությունները,

3. Որո՞նք են հանցագործություն սահմանող օրենքին ներկայացվող որոշակիության պահանջի եվրոպական չափորոշիչները,

4. Արդյո՞ք Վենետիկի հանձնաժողովի անդամ պետություններում առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի բովանդակությանը համանման հանցագործություն,

5. Եթե այո, ապա ո՞րն է իրավական որոշակիության տեսանկյունից լավագույն փորձը:

Դժվար չէ նկատել, որ Սահմանադրական դատարանի հարցադրումներն ունեցել են մեկ հիմնական նպատակ՝ ստանալ առաջադրված հարցերի սպառիչ պատասխանները: Դրա փոխարեն Վենետիկի հանձնաժողովը, չգտնելով եվրոպական մի պետության (անտեսելով Բելառուսը և Ռուսաստանի Դաշնությունը), որտեղ սահմանադրությամբ սահմանված կլինե՞ր ՀՀ Սահմանադրությամբ սահմանված «Սահմանադրական կարգի հիմունքներ» սահմանադրաիրավական ինստիտուտ, նշում է, որ Վենետիկի հանձնաժողովի անդամ պետություններում Սահմանադրական կարգի հայեցակարգը գրեթե միշտ վերագրված է նրանց սահմանադրության ինստիտուցիոնալ կողմին, սահմանադրական տարբեր սկզբունքներին՝ ինքնիշխանությանը, ժողովրդավարությանը, իրավական պետությանը, օրենքի գերակայությանը, իշխանությունների տարանջատմանը և այլն:

Այստեղից հետևում է, որ Վենետիկի հանձնաժողովն ընդունում է, որ սահմանադրական կարգը կառուցվում է բոլոր եվրոպական պետությունների կողմից ընդունված այնպիսի արժեքների հիման վրա, ինչպիսիք սահմանված է նաև ՀՀ Սահմանադրությամբ: Այս դեպքում ի՞նչն է անհասկանալի: Կարծում եմ՝ անհասկանալի ոչինչ չկա, երբ սուբյեկտը ուզում է հասկանալ որպես մարդ, մարդ-մասնագետ, գիտության ներկայացուցիչ, ղեկավարվելով հասարակության և պետության շահերով, անտե-

սելով իր կուսակցական պատկանելիությունը և ակնկալվող ֆինանսական և այլ շահերը:

Փորձենք հասկանալ անհասկանալիները:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական իրավական պետություն է (ընդգծումը՝ Ժ.Ջ.): Ի՞նչ է նշանակում իրավական պետություն: Այն է՝ Հայաստանի Հանրապետությունն արդեն իրավական է, նոր չի դառնալու այդպիսին, որ ՀՀ-ում իշխում է իրավունքը (օրենքը), որ մարդ-քաղաքացին գնահատվում և պաշտպանվում է որպես բարձրագույն արժեք և այլն:

Հարց է ծագում, երբ մարտի 1-ին ծեծում և գնդակահարում էին մարդկանց, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը գործում էր, թե՞ դադարել էր գործել: Պատասխանը մեկն է՝ չէր գործում: Եթե գործեր՝ տեղի չէր ունենա այն ամենը, ինչ տեղի ունեցավ: Կարելի է հստակ ասել, որ Հայաստանի Հանրապետությունը մարտի 1-ին որպես իրավական պետություն գոյություն չունե՞ր:

Պետք է տարբերել իրավական, այդ թվում նաև՝ Սահմանադրական նորմի «դե յուրե» (իրավապես) և «դե ֆակտո» (փաստացի) դադարեցում հասկացությունները: ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը «դե յուրե» կար, բայց «դե ֆակտո»՝ ոչ, այլապես չէր իրականացվի մարդկանց ոչնչացումը, այլ կերպ ասած՝ սահմանադրական այդ նորմի գործողությունը իրավական համակարգում դադարեցվել էր, ինչը և հանդիսանում է 300.1 հանցակազմը բնութագրող օբյեկտիվ կողմի տարրերից մեկը:

Կարծում եմ՝ ճիշտ չեն նրանք, ովքեր նորմի դադարեցում ասելով հասկանում են միայն վերջինիս փոփոխում կամ վերացում: Որպես կանոն նորմատիվ իրավական ակտերը կորցնում են իրենց իրավական ուժը և դադարում են գործել:

1. երբ լրանում է իրավական նորմի ժամկետը,

2. երբ փոփոխվում են այն հանգամանքները, որոնք կանխամտածված, հաշվարկված, ծրագրավորված դրվել են նորմի ընդունման հիմքում,

3. երբ նորմի պաշտոնական փոփոխումը կամ ճանաչումը հակասահմանադրական է,

4. երբ փաստացի վերանում է:



Միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելը, որին հակասում է ներպետական նորմը<sup>3</sup>: Թվարկված հիմքերից միայն երկրորդն է, որ քննարկվող հարցի շրջանակներում պարզաբանման կարիք ունի: Նման հիմքեր ձևավորվեցին դեռևս այն ժամանակ, երբ 2003թ. Սահմանադրական հանրաքվեն ձախողվեց և սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որն, ըստ Սահմանադրական դատարանի նախկին դատավոր Ֆ. Թոխյանի, շատ ավելի ժողովրդավարական բովանդակություն ուներ,<sup>4</sup> քան 2005թ. Սահմանադրական նախագիծը, չընդունվեց քվորումը չապահովելու պատճառով: Քվորումի շեմը 1/3-ը 1/4-ով փոխարինելու պատճառ հանդիսացավ նաև այն, որ Սահմանադրական դատարանը 2003թ. մարտի 5-ին Հայաստանի Հանրապետության նախագահի (Ռ. Քոչարյանի) ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով որոշում կայացրեց՝ քաջ գիտակցելով, որ ժողովրդի վստահությունն իշխանության լեգիտիմ լինելու նկատմամբ կասկածելի է<sup>5</sup>, ինչի ապացույցն էր մեկ տարվա ընթացքում վերջինիս պարզման համար վստահության հանրաքվեի անցկացման Սահմանադրական դատարանի պահանջի ամրագրումը որոշման մեջ, որը ցավոք այդպես էլ մնաց թղթի վրա գրված և չիրականացված:

Վերոգրյալը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ հենց նշված (ոչ միայն) հանգամանքներն էլ հիմք եղան 2008թ. մարտի 1-ի շարժման համար, որի նպատակն էր հենց այդ և նման հանգամանքների վերացումը, հանգամանքներ, որոնց բացասական հետևանքների կրողը հայ ժողովուրդն է և հայ պետականությունը: Մարտի 1-ի պատճառները պետք է փնտրել ոչ միայն նախագահ՝ Ռ. Քոչարյանի գործողություններում. մարտի 1-ին փոխվել էին շատ հանգամանքներ (որոնց քննարկումը այս հոդվածի շրջանակներում հարկավոր չէ), որոնք և հիմք հանդիսացան Սահմանադրական կարգի հիմունքները սահմանող նորմերի, ես

կասեի՝ Սահմանադրության ամբողջությամբ վերցրած կենսագործման դադարեցմանը:

Դադարեցում ասելով պետք է հասկանալ նաև նորմի գործողության «դե ֆակտո»-փաստացի դադարեցում: Երբ ասում ենք սահմանադրական նորմի դադարեցում, ապա պետք է հասկանալ ոչ թե նորմի վերացում ընդհանրապես, այլ նորմի տվյալ պահին, տվյալ իրավիճակում չգործելը, չկարգավորելը, չներգործելը, իրավական ներգործություն չունենալը, չաշխատելը, ինչպես ասում են ոմանք, սահմանադրական իրավական նորմին չենթարկվելը, ինչը տեղի ունեցավ մարտի 1-ին:

Նույն տրամաբանությամբ պետք է մեկնաբանել ցանկացած հանցագործություն: Անձի կողմից հանցագործության կատարելը ոչ իրավական նորմի գործողության դադարեցման, այլ տվյալ նորմի դե ֆակտո չգործելու, չներգործելու, չաշխատելու արդյունքն է:

Շարադրանքը վկայում է այն մասին, որ իրավական նորմը դադարում է գործելուց ոչ միայն նրա վերացմամբ կամ փոփոխմամբ (դե յուրե), այլ նաև որոշակի հանգամանքների առկայությամբ (դե ֆակտո):

Սահմանադրական կարգը բնութագրող հաջորդ նորմ սկզբունքը Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական պետության ամրագրումն է, այն է.

ա) ժողովուրդն է իշխանության աղբյուրը և կրողը,

բ) ժողովուրդն է որոշում իրեն պատկանող իշխանության իրականացման ձևերը և իրականացնողներին, այն, ինչ ուզում էր կատարել ժողովուրդը մարտի 1-ին:

Հարկ է նշել, որ ժողովուրդը կարող է սխալվել իր ընտրությունը կատարելիս և իրավունք ունի իր սխալն ուղղելու: Պետության պարտականությունն է ապահովել իշխանությունը ժողովրդին վերադարձնելու, ժողովրդի կողմից իր սահմանադրական իրավունքների վերականգնումը:

### **Շարունակությունը՝ հաջորդ համարում**

<sup>3</sup> Տե՛ս Юридический энциклопедический словарь, под. ред. заслуженного деятеля науки РФ, док. юр. наук, проф. А.В. Малько, М. Проспект, 2018, стр.55.

<sup>4</sup> Տե՛ս Ֆ. Թոխյան, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ. ընդհանուր խմբագրությամբ. Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010թ. էջ 1065:

<sup>5</sup> Տե՛ս Ж. Джангирян. Легитимная государственная власть гарант конституционализме. Конституционное и муниципальное право, М. изд. юрист 2013., Նոր «Գլաձորը» գիտության բավիղներում, Լեգիտիմ պետական իշխանությունը՝ որպես սահմանադրականության գրավական, Եր., 2013թ., էջ 9-36:

**ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ  
 ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության ավագ իրավաբան

**ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ  
 ՏԵՍԱԿԱՆ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման հիմնախնդրի ուսումնասիրման տեսանկյունից հարկ է ուսումնասիրել վերջինիս իրավական կարգավորման մեխանիզմը, քանի որ ժողովրդի կամքի արտահայտման հիմնական և նշանակալի ձևերը արտացոլված են իրավակարգավորումների տեսքով:

Գիտության մեջ իրավական կարգավորման մեխանիզմի ներքո հասկանում են միասնության և փոխգործակցության մեջ գտնվող բոլոր այն իրավական միջոցները (մեխանիզմի տարրերը), որոնց օգնությամբ իրականացվում է իրավական կարգավորումը:<sup>1</sup> Է.Պ. Գրիգորիսը հստակեցնում է իրավական կարգավորման մեխանիզմի իրավական միջոցների ամբողջությունը՝ ընդգծելով իրավունքի նորմերը, իրավահարաբերությունները, իրավական մշակույթը, իրավագիտակցությունը<sup>2</sup>:

Առավել հաջող է Ա.Վ. Մալկոյի բնորոշումը. «Իրավական կարգավորման մեխանիզմը առավել կազմակերպված իրավական միջոցների համակարգ է, որն ուղղված է այն խոչընդոտների հաղթահարմանը, որոնք կանգնած են իրավունքի սուբյեկտների շահերի բավարարման ճանապարհին»:<sup>3</sup> Այս հեղինակն ընդգծում է այդ իրավական միջոցների կազմակերպվածության բարձր մակարդակը, երկրորդ՝ մատնանշում է այդ կազմակերպվածության վերջնական նպատակը՝ իրավունքի սուբյեկտների շահերի բավարարումը, որն իր հերթին կոչված է ապահովելու համաժողովրդական շահերը:

Այսպիսով՝ ժողովրդաիշխանության իրացման սահմանադրաիրավական մեխանիզմի ներքո՝ մենք հասկանում ենք ՀՀ Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրված միասնականության և փոխգործակցության մեջ գտնվող այն իրավական միջոցների համակարգը, որոնցով հնարավոր է ժողովրդաիշխանության փաստացի իրացումը: Իսկ ժողովրդի կամքի արտահայտմանն ուղղված իրավական միջոցների գործողության նպատակը, իհարկե, նրա շահերի բավարարումն է:

Սահմանադրության 2-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիների շահերի և պահանջմունքների բավարարման իրավական միջոցները երկուսն են՝ անմիջական կամարտահայտություն և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով կամարտահայտություն:

Վերադառնալով իրավունքի իրացման հիմնահարցին՝ հարկ է նշել, որ տեսության մեջ իրավունքի իրացումը, որպես կանոն, ընկալվում է 4 տարբեր ձևերի միջոցով՝ իրավունքի պահպանում, կատարում, օգտագործում, կիրառում:<sup>4</sup>

Իրավունքի կիրառումը իրավունքի իրացման այն եզակի ձևն է, որի դեպքում որպես սուբյեկտ հանդես է գալիս իշխանական որոշակի լիազորություններով օժտված մարմինը, քանի որ այս դեպքում իրավունքի իրացումն ապահովվում է իրավակիրառ ակտի միջոցով: Ժողովրդի շահերի և պահանջմունքների բա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 128 2022

<sup>1</sup> Алексеев С.С. Общая теория права, В двух томах, Том второй, Москва, 1982, С. 9, Румынина В.В., Клименко А.В., Теория государства и права: Методическое пособие, Москва, 2002, С. 290, Черданцев А.Ф., Теория государства и права: Учебник для вузов, Москва, 2001, С. 350  
<sup>2</sup> Григонис Э.П., Теория государства и права: Курс лекций, Санкт-Петербург, 2002, С. 182.  
<sup>3</sup> Теория государства и права, Курс лекций, Под ред. Н.И. Матузова и А.В. Малько, Москва, 1997, С. 625.  
<sup>4</sup> Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-2, Երևան 2011, էջ 270, Խրոպայնյուկ Վ.Ն., Պետության և իրավունքի տեսություն, թարգմանությամբ Խ. Հարությունյանի, Երևան 1997, էջ 306, Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ, 3-րդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2018, էջ 484, Խաչատրյան Ս., Պետության և իրավունքի տեսություն, հարցեր և պատասխաններ, Երևան, 2008, էջ 124-125:

վարարումը իրավակիրառ մարմինների միջոցով իրականացվում է միջնորդավորված կերպով:

Իսկ ահա իրավունքի իրացման այլ ձևերը՝ իրավունքի պահպանումը, կատարումը և օգտագործումը իրավունքի անմիջական իրացման ձևեր են և բնորոշ են ինչպես իշխանական լիազորություններով օժտված մարմիններին, այնպես էլ՝ քաղաքացիներին:<sup>5</sup>

Քաղաքացիների ուղղակի (անմիջական) կամարտահայտությունը դրսևորվում է գլխավորապես օգտագործելու ձևով, քանի որ քաղաքացիների մասնակցությունը, օրինակ, ընտրություններին, հանրաքվեին կամ անմիջական ժողովրդաիշխանության այլ ձևերին քաղաքացու իրավունքն է, ինչը ենթադրում է համապատասխան վարքագիծ դրսևորելու հնարավորություն, այլ ոչ թե պարտադրված գործողություն:

Միևնույն ժամանակ չի կարելի ուղղակի ժողովրդաիշխանության իրացումը դիտարկել միայն որպես համապատասխան իրավունքի օգտագործում կամ համապատասխան իրավունքից օգտվելու գործընթաց: Ցանկացած իրավունքի իրացում անհնար է առանց համապատասխան պարտականությունների առկայության: Ինչպես նշում է Վ.Ս. Ներսեսյանը՝ իրավունքի երկկողմ (տրամադրող-պարտավորեցնող) բնույթի ուժով իրավակիրացնող սուբյեկտի կողմից իր իրավունքի օգտագործումն ամբողջությամբ և մշտապես պետք է համատեղվի նրա կողմից որոշակի պարտականությունների կատարմամբ:<sup>6</sup> Օրինակ՝ նախընտրական քարոզչություն իրականացնելով (իրավունքի օգտագործում)՝ թեկնածուն կամ կուսակցությունը ստիպված է լինում ձեռնպահ մնալ օրենսդրությամբ արգելված գործողություններ կատարելուց, միաժամանակ նախընտրական քարոզչության ընթացքում, ինչպես նաև քվեարկության նախորդ օրը և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղա-

նակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:<sup>7</sup> Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում համատեղվում են իրավունքի օգտագործումը և իրավունքի (իրավանորմի պահանջի) պահպանումը:

Մեկ այլ դեպք՝ իրացնելու համար ընտրվելու իրենց իրավունքը՝ կուսակցությունները կամ թեկնածուները պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ («ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք, 26-րդ հոդված, 1-ին մաս): Այս դեպքում իրավունքի օգտագործման հետ համատեղվում է սահմանված իրավունքի (իրավանորմով սահմանված պարտականության) կատարումը:

Այսպիսով՝ քաղաքացիների կողմից իրենց իշխանության արդյունավետ իրացումը Սահմանադրությամբ և օրենսդրությամբ վերապահված իրավունքների օգտագործման ձևով հնարավոր է միայն իրավունքի իրացման այլ ձևերի՝ պահպանման և կատարման հետ համատեղ:

Նախորդ դարի գիտական քննարկումներում հաճախ քննարկման առարկա էր հանդիսանում ժողովրդաիշխանության անմիջական և ներկայացուցչական ձևերի հարաբերակցության հարցը: Եվ հատկապես, սովետական միության ժամանակաշրջանում գիտության մեջ իշխում էր այն տեսակետը, որ ժողովրդաիշխանության իրացման հիմնական ձևը ներկայացուցչական ժողովրդաիշխանությունն է:

Իհարկե, անմիջական ժողովրդաիշխանությանն այսպիսի երկրորդական կարգավիճակում դիտարկելը հակասում է ժողովրդի ինքնիշխանության գաղափարին: Ներկայացուցչական մարմինների գործունեությունն անհնար է առանց քաղաքացիների ուղղակի կամարտահայտության: Պետական իշխանության մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց սահմանադրական լիազորությունները ստանում են ուղիղ ժողովրդաիշ-

<sup>5</sup> Власов В.И., Теория государства и права: Учебник для высших юр. учебных заведений и факультетов, Ростов-на-Дону, 2002, С. 336, Хропанюк В.Н., Теория государства и права: Учебное пособие для высших уч. заведений, Под ред. В.Г. Стрекозова, Москва, 2002, С. 259.

<sup>6</sup> Ներսեսյան Վ.Ս., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 244

<sup>7</sup> «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ընդ. 25.05.2016թ., ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ.456, հոդված 19, մաս 6:

խանության ճանապարհով: Չնայած այն հանգամանքին, որ իր իրավական բովանդակությամբ անմիջական ժողովրդաիշխանությունը հանդիսանում է առաջնային, հանրային իշխանության մարմինների գործունեության շրջանակները՝ ի տարբերություն անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձևերի, զգալիորեն ավելի լայն են և կրում են մշտական բնույթ: Անմիջական ժողովրդաիշխանության արդյունավետ իրացումն ուղղակիորեն կախված է ներկայացուցչական մարմիններից, որոնց գործառույթներից մեկն այնպիսի նորմատիվ իրավական ակտերի մշակումն ու ընդունումն է, որոնք կարգավորում են քաղաքացիների կողմից իրենց իշխանության իրացման ընթացակարգը:

Ժողովրդի կողմից իշխանության անմիջական իրականացումն, անշուշտ, առավելապես համապատասխանում է «ժողովրդաիշխանություն» սահմանմանը: Սակայն, միևնույն ժամանակ, նման մեթոդը լայնորեն չի կարող կիրառվել. առաջին հերթին՝ անբավարար օպերատիվության պատճառով, իսկ երկրորդ հերթին այն պատճառով, որ պետական քաղաքականության բազմաթիվ հարցերի լուծումը պահանջում է հատուկ գիտելիքներ:

Ակնհայտ է, որ ժողովրդաիշխանության սկզբունքը ոչ միայն ենթադրում է քաղաքացիներին նշանակալի հարցերի վերաբերյալ պարբերաբար դիմելու գործընթաց, այլև այն բխում է պետական կառավարման գործընթացում քաղաքացիների և հանրային իշխանության մարմինների միջև մշտական կապերի օբյեկտիվ անհրաժեշտությունից: Ելնելով նման մոտեցումից՝ ժողովրդաիշխանության տեսության կենտրոնական գաղափարներից մեկը պետք է համարել ներկայացուցչական ժողովրդաիշխանության գաղափարը:

Մենք գտնում ենք, որ ժողովրդաիշխանության որևէ ձևի առաջնահերթության մասին խոսելը նպատակահարմար չէ: Թե՛ անմիջական, թե՛ ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը ունեն և՛ առավելություններ, և՛ թերու-

թյուններ, ուստի երկուսն էլ խիստ անհրաժեշտ են, դրանցից յուրաքանչյուրը լուծում է ինքնուրույն խնդիր և այնպիսի ընթացակարգերով, որոնք չեն կարող լուծվել այլ եղանակով: Դրանք փոխլրացնում են միմյանց, գործում են միասնականորեն, և ժողովրդաիշխանության սկզբունքի զարգացումը հնարավոր է միայն ներկայացուցչական և անմիջական ժողովրդաիշխանության ներդաշնակ համադրմամբ: Ի վերջո, հենց անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտներն են հանդիսանում ներկայացուցչական ժողովրդաիշխանության աղբյուրն ու հիմքը:

Որոշ գիտնականներ ուղղակի ժողովրդաիշխանության ինստիտուտների թիվը սահմանափակում են: Այսպես, օրինակ, Վ.Ն. Ռուդենկոն անմիջական կամարտահայտության ձևերին է դասում այն ինստիտուտները, որոնք կարգավորում են քաղաքացիների կողմից կառավարչական որոշումների ընդունումը և քաղաքացիների իրավաստեղծ գործունեությունը, և այն ինստիտուտները, որոնք ապահովում են քաղաքացիների ուղղակի մասնակցությունը հանրային իշխանության համակարգի ձևավորմանը: Հետազոտողի կարծիքով՝ ուղիղ ժողովրդավարության ինստիտուտների գլխավոր բնութագրական չափանիշներից մեկը հանրային-իշխանական որոշումների համապարտադիրությունն է, որը հնարավոր չկատարման դեպքում ապահովված է պետական հարկադրանքի ուժով: Իսկ ահա այլ ինստիտուտները՝ հանրահավաքներ, երթեր, ցույցեր, հանրագրեր, Վ.Ն. Ռուդենկոն դիտարկում է որպես ինստիտուտներ, որոնք թույլ են տալիս խոսել միայն քաղաքացիների և իշխանության համագործակցության մասին<sup>8</sup>:

Յու.Ա. Դմիտրիեվը և Վ.Վ. Կոմարովան ուղղակի ժողովրդաիշխանությունը դիտարկում են որպես ժողովրդի կամ նրա մի մասի իշխանության անմիջական իրացման եղանակների և միջոցների համակարգ, որոնք բացառում են իշխանական լիազորությունների փոխանցումը որևէ մարմինների կամ անձանց<sup>9</sup>:

<sup>8</sup> Руденко В.Н., Методология исследования институтов прямой демократии в современном обществе, Правоведение, 2003, № 4, С. 51, էլ. նետուրս՝ [https://elibrary.ru/download/elibrary\\_23135504\\_77325265.pdf](https://elibrary.ru/download/elibrary_23135504_77325265.pdf), հղումն ըստ՝ 18.01.2022թ.

<sup>9</sup> Дмитриев В.А., Комарова В.В., Правовое содержание института референдума и его место в системе непосредственной демократии в Российской Федерации, Право и жизнь, 1995, номер 7-ой, С. 52.

Լ.Ա. Նուդենկոն կարծում է, որ անմիջական ժողովրդաիշխանության մեթոդը հանրային իրավունքի հիմնական՝ իմպերատիվ մեթոդն է<sup>10</sup>: Բայց հեղինակը ժողովրդաիշխանության ոլորտում չի բացառում նաև դիսպոզիտիվ մեթոդի կիրառությունը:

Մեր կարծիքով՝ ժողովրդի շահերի արտահայտման այն ձևերը, որոնք ընդունվել են քաղաքացիների կողմից, սակայն չեն ենթադրում այդ որոշումների պարտադիրություն, չի կարելի բացառել ուղղակի ժողովրդաիշխանության ինստիտուտների թվից: Դիսպոզիտիվ մեթոդն, ինքնին, չի վկայում այդ ինստիտուտների անարդյունավետ լինելու մասին, դրանք իրապես ազդում են հանրային իշխանության մարմինների որոշումների ձևավորման վրա: Պատգամավորների և քաղաքացիների միջև հարաբերությունները ևս կառուցվում են դիսպոզիտիվ հիմունքներով:

Ս.Ա. Ավագյանը անմիջական ժողովրդաիշխանությունը դիտարկում է որպես իմպերատիվ և խորհրդատվական ինստիտուտների ամբողջություն, որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում է իր կամքը, իրականացնում է պետական իշխանությունը և տեղական ինքնակառավարումը:<sup>11</sup>

Դ.Մ. Բայմախանովայի կարծիքով՝ անմիջական ժողովրդավարությունը բնութագրվում է նրանով, որ բնակչությունն ուղղակիորեն, առանց միջնորդ մարմինների և այլ կառույցների, մասնակցում է պետության և հասարակության կառավարմանը՝ կատարելով տարբեր կառավարչական գործողություններ (քվեարկություն, քննարկում, որոշումների ընդունում, վերահսկողություն և այլն), որոնցից ոմանք իմպերատիվ և պարտադիր են պետական և հասարակական կյանքի բոլոր մասնակիցների համար, իսկ մյուսներն ունեն առաջարկության կամ խորհրդատվական բնույթ:<sup>12</sup>

Դ.Վ. Շոմնիկովան առաջարկում է, ըստ իրավաբանական ուժի, տարբերակել անմիջա-

կան ժողովրդավարության ձևեր, որոնց ընթացքում կայացվում է պետական իշխանության մարմինների կողմից կատարման համար պարտադիր որոշում և անմիջական ժողովրդավարության ձևեր, որոնց ընթացքում կայացվում է պետական իշխանության մարմինների կողմից դիտարկման, ուսումնասիրման համար պարտադիր որոշում:<sup>13</sup>

Մեր համոզմամբ՝ թեև խորհրդատվական բնույթ ունեցող ինստիտուտների դեպքում առավել հաճախ վերջնական որոշումն ընդունում է պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինը, սակայն դա չի նշանակում, որ այդ մարմինները կարող են հաշվի չչստել մեծամասնության արտահայտած կարծիքի հետ և ընդունել այնպիսի որոշում, որը կհակասի նրանց կամքին: Տվյալ դեպքում իրավասու մարմնի ընտրությանն է թողնվում համապատասխան որոշման կոնկրետ ձևակերպումը, որը, սակայն, պետք է արտացոլի ժողովրդի կամքը և ոչ թե խեղաթյուրի այն:

Հետաքրքիր է Վ.Վ. Կոմարովայի կողմից առաջ քաշված անմիջական ժողովրդաիշխանության ձևերի դասակարգումը: Հեղինակը տարբերակում է. 1) Իմպերատիվ բնույթ ունեցող ժողովրդի կամ նրա մի մասի կողմից իշխանության անմիջական իրականացման եղանակներն ու միջոցները՝ հանրաքվեն, ընտրությունները, հետկանչը. 2) Կարգավորիչ բնույթ ունեցող իշխանության մարմինների իշխանական գործառույթների իրականացման «ուղղումը»՝ քաղաքացիական իրավաստեղծ նախաձեռնությունները, քաղաքական կուսակցությունների գործունեությունը, քաղաքացիների հավաքները, քաղաքացիների ժողովները, քաղաքացիների դիմումները, ընտրողների պատիժները, ներկայացուցչական մարմինների պատգամավորների և տեղական ինքնակառավարման ընտրովի պաշտոնատար անձանց հաշվետվությունները, տարածքային հասարակա-

<sup>10</sup> Нудненко Л.А., Непосредственная демократия в системе местного самоуправления - институт конституционного права России, Вестник Московского университета, Серия 11, Право, 2001, номер 1-ый, С. 22.

<sup>11</sup> Авакьян С.А., Конституционное право России, Том 1-ый, Москва, 2014, С. 388-389.

<sup>12</sup> Баймаханова Д.М., Конституционные проблемы развития непосредственной демократии (на материалах Республики Казахстан), Дис.... канд. юрид. наук, Алматы, 1998, С. 22.

<sup>13</sup> Шомникова Д.В., Непосредственная демократия в Российской Федерации и роль органов внутренних дел в ее реализации, диссертация кандидата юридических наук, Москва, 2001, С. 45-46.

կան ինքնակառավարումը. 3) Խորհրդատվական բնույթ ունեցող՝ ժողովրդի կամքի համադրումը իշխանական մարմինների գործունեության հետ՝ հանրահավաքներ, երթեր, ցույցեր, պիկետներ, հանրային լուումներ, քաղաքացիների հարցումներ, խորհրդատվական հանրաքվե, քննարկումներ<sup>14</sup>:

Այն մոտեցումը, ըստ որի անմիջական ժողովրդաիշխանությունը դիտվում է որպես իմպերատիվ և խորհրդատվական ինստիտուտների ամբողջություն, մեր կարծիքով, նախընտրելի է, քանի որ քաղաքացիների կողմից ընդունվող հանրային-իշխանական որոշումների կատարման համապարտադիրությունը՝ որպես այդ ինստիտուտները անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտ դիտարկելու միակ չափանիշ՝ չհիմնավորված կերպով նեղացնում է անմիջական ժողովրդաիշխանության իրացման իրական ոլորտների մասին պատկերացումը:

Ներկայացուցչական ժողովրդաիշխանությանն անդրադառնալով հարկ է նշել, որ մինչ օրս տեսության մեջ առկա է հակասություն ժողովրդի «ներկայացուցիչ» հանդիսացող մարմինների վերաբերյալ:

Ըստ Ս.Վ. Մասլեննիկովայի՝ «ներկայացուցչականությունը կարելի է սահմանել որպես կենտրոնական կամ տեղական հանրային իշխանության մարմնի այնպիսի որակ, որի ուժով վերջինս կարող է ձևակերպել քաղաքացիների կամքը, արտահայտել նրանց շահերը իր գործունեության մեջ»:<sup>15</sup>

Որոշ հետազոտողներ ներկայացուցչական գործառույթը հիմնականում կապում են խորհրդարանի հետ:<sup>16</sup> Անշուշտ, իրական ժողովրդա-

կան ներկայացուցչությունը օրգանական կապի մեջ է գտնվում «պառլամենտարիզմի» հետ: Իրավաբան-գիտնականները պառլամենտարիզմը բնորոշում են որպես պետական իշխանության կազմակերպման համակարգ, որում ժողովրդի ինքնիշխան կամքը իր արտահայտությունն է գտնում համընդհանուր և գաղտնի քվեարկության հիման վրա ընտրվող ներկայացուցչական կառույցում, որն իրականացնում է օրենսդրական գործունեություն, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության մարմինների նկատմամբ և երաշխավորում է քաղաքացիների ինչպես մեծամասնության, այնպես էլ փոքրամասնության շահերի պաշտպանությունը:<sup>17</sup> Ի.Ս. Ստեփանովի կարծիքով՝ պառլամենտարիզմը հանդես է գալիս որպես ժողովրդաիշխանության մակարդակի չափման ցուցանիշ:<sup>18</sup>

Պետության մեջ խորհրդարանի առկայության փաստը միայն դեռևս չի վկայում «պառլամենտարիզմի» գոյության մասին: Անհրաժեշտ է, որպեսզի ժողովրդի ներկայացուցիչներն իրապես լինեն քաղաքացիների շահերի արտահայտողները և առավելագույնս հաշվի առնեն ժողովրդի կարծիքը:

«Պառլամենտարիզմը» ներկայացուցչական ժողովրդաիշխանության համակարգում կենտրոնական ինստիտուտն է, բայց ոչ միակը: Շատ հեղինակներ ներկայացուցչական ժողովրդաիշխանության մարմինների թվին դասում են ինչպես կոլեգիալ (օրինակ՝ խորհրդարանը), այնպես էլ միանձնյա մարմինները:<sup>19</sup> Սակայն նրանց միջև, ինչպես արդարացիորեն նշում է Վ.Ա. Չետվերնինը, գոյություն ունի որոշակի տարբերություն՝ միանձնյա մարմինը մեծամասնու-

<sup>14</sup> Комарова В.В., Высшее непосредственное выражение власти народа в Российской Федерации: проблемы теории и практики, диссертация, Москва, 2007, С. 129.

<sup>15</sup> Масленникова С.В., Народное представительство и права граждан в Российской Федерации, Москва, 2001, С. 12.

<sup>16</sup> Кириченко П.Н., Представительный характер Совета Федерации Федерального Собрания Российской Федерации, Автореферат диссертации кандидата юридических наук, Москва, 2005, С. 14-15.

<sup>17</sup> Հակոբյան Հ.Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Տիգրան Մեծ, 2007, էջ 91, Булаков О.Н., Парламентаризм как система осуществления государственной власти, Государственная власть и местное самоуправление, 2003, номер 5-ый, С. 16, Пригон М.Н., Конституционно-правовой статус парламента России: теория, практика, перспективы, автореферат диссертации кандидата юридических наук, Санкт-Петербург, 2004, С. 13.

<sup>18</sup> Степанов И.М., Формула народовластия: основания конституционной концепции, Конституционный строй России, Институт государства и права РАН, Выпуск 2-ой, Москва, 1996, С. 7.

<sup>19</sup> Яценко И.С., Конституция Российской Федерации, Научно-практический комментарий и семантический словарь, Москва, 2003, С. 217-218, Кравченко О.Л., Орган законодательной власти субъекта Российской Федерации как институт представительной демократии, автореферат диссертации кандидата юридических наук, Москва, 2004, С. 6.



թյան ներկայացուցիչն է, իսկ կոլեգիալ մարմիններում ներկայացված են նաև փոքրամասնությունները<sup>20</sup>:

Հետազոտողների մեծ մասը ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը բնորոշում են որպես ժողովրդի իշխանության իրականացման ձև, որն արտահայտվում է պետական և տեղական իշխանության մարմինների համակարգում, որոնք ձևավորվում են բացառապես ընտրությունների միջոցով:

Օ.Ա. Կրավչենկոն տարանջատում է «ներկայացուցչական ժողովրդավարություն» և «ժողովրդական ներկայացուցչություն» հասկացությունները՝ երկրորդ հասկացությունը ներառելով առաջինի մեջ, և վերջինս ժողովրդական ներկայացուցչության մարմինների ներքո հասկանում է ընտրովի կոլեգիալ մարմինները: Իսկ ահա «ներկայացուցչական ժողովրդավարություն» հասկացության մեջ նրա կարծիքով մտնում են և՛ կոլեգիալ ընտրովի մարմինները, և՛ միանձնյա:<sup>21</sup>

Պ.Ա. Աստաֆիչեվը անդրադառնալով ՌԴ սահմանադրության ժողովրդաիշխանության սկզբունքն ամրագրող 3-րդ հոդվածին՝ նշում է, որ այն բխում է ժողովրդական ինքնիշխանության լայն կիրառումից և ներկայացուցչակա-

նության գործառույթը բնորոշ է ՌԴ պետական իշխանության բոլոր մարմիններին:<sup>22</sup>

Յու.Վ. Կուդրյավցեվան առաջադրում է հետաքրքիր դասակարգում ՌԴ պետական իշխանության մարմինների վերաբերյալ՝ ժողովրդի անունից ներկայացուցչության իրականացման համատեքստում: Ըստ նրա՝ կա մի քանի աստիճան. առաջին աստիճանը՝ անմիջապես ժողովրդի կողմից ընտրվող մարմիններն են՝ ՌԴ նախագահը, ՌԴ պետական դուման, երկրորդ աստիճանը՝ առաջին աստիճանի ներկայացուցչական մարմինների կողմից ձևավորվող մարմինները՝ ՌԴ կառավարությունը, Մարդու իրավունքների պաշտպանը և երրորդ աստիճանը՝ երկրորդ աստիճանի մարմինների կողմից ձևավորվող կառույցները<sup>23</sup>:

Մեր կարծիքով՝ ներկայացուցչական գործառույթն այս կամ այն կերպ բնորոշ է հանրային իշխանության բոլոր մարմիններին: Հարցը միայն այն է, թե որ մարմինների համար է այս գործառույթը դոմինանտ: Մենք համակարծիք ենք ներկայացուցչական ժողովրդաիշխանության լայն մեկնաբանությանը և գտնում ենք, որ հանրային իշխանության մարմինների ամբողջ համակարգը կոչված է արտահայտելու ժողովրդի կամքը և գործելու ի շահ նրա:



<sup>20</sup> Четвернин В.Л., Конституция Российской Федерации, Проблемный комментарий, Москва, 1997, С. 75.

<sup>21</sup> Кравченко О.А., Орган законодательной власти субъекта Российской Федерации как институт представительной демократии, автореферат диссертации кандидата юридических наук, Москва, 2004, С. 6.

<sup>22</sup> Астафичев П.А., Право граждан на представительство в органах публичной власти, Конституционное и муниципальное право, 2005, номер 3-ий, С. 8.

<sup>23</sup> Кудрявцева Ю.В., Комментарий к Конституции Российской Федерации, Москва, 1996, С. 23.

**ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ հայցորդ, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ

**ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ**

Իրավունքը, բարոյականությունը և սոցիալական նորմերի մյուս տեսակներն (կորպորատիվ, գեղագիտական, կրոնական և այլն) այն հիմնական ձևերն ու միջոցներն են, որոնց օգնությամբ հասարակական հարաբերություններում կարգավորվում է մարդկանց վարքագիծը:

Սոցիալական նորմերի տարբեր տեսակների (իրավական, էթիկական, գեղագիտական, կրոնական և այլն) փոխներգործության և փոխազդեցության գործընթացում դրանցից յուրաքանչյուրը, պահպանելով իր առանձնահատկությունները, հանդես է գալիս որպես որոշակի տեսակի հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորիչ:

Բոլոր սոցիալական կարգավորիչները (իրավունքը, բարոյականությունը, կյանքը և այլն) նորմատիվ են, և բոլոր սոցիալական նորմերն ունեն իրենց առանձնահատուկ սանկցիաները: Ընդ որում, այդ սանկցիաների առանձնահատկությունը պայմանավորված է այդ, իրենց էությամբ տարբեր, սոցիալական նորմերի օբյեկտիվ բնույթով և առանձնահատկություններով, սոցիալական կարգավորման տարբեր տիպերով և ձևերով:

Այսպիսով՝ ոչ թե սանկցիաների առանձնահատկություններն են ելակետային ձևով որոշում սոցիալական նորմերի (իրավունքի, բարոյականության, կրոնի և այլնի) տարբերությունը, ինչպես այդ հիմնահարցը մեկնաբանում են լեգիստները, այլ հակառակը՝ սոցիալական նորմերի տարբեր տեսակների՝ իրենց բնույթով օբյեկտիվորեն գոյություն ունեցող էական տարբերությունները, դրանց յուրօրինակ հատկությունները պայմանավորվում են նաև խախտման համար սանկցիաների առանձնահատկությունները<sup>1</sup>:

Բարոյականությունը մարդկային գործունեության նորմատիվ-կարգավորիչ համակարգ է, որը կարելի է դիտարկել հասարակական և անհատական մակարդակով (գաղափար), վարքի գործնական կանոնների մակարդակով (նորմեր) և հասարակական հարաբերությունների մակարդակով, որոնց շրջանակներում մարդկանց արարքները դիտարկում են բարու և չարի, արդարության և անարդարության, խղճի, պատվի, պարտքի, արժանապատվության, բարոյական այլ կատեգորիաների և հակադրությունների տեսակետից: Երբ իրավագետը սկսում է մտորել բարոյականության մասին, նրա տեսադաշտում, առաջին հերթին, հայտնվում է սոցիալական նորմերի մի հսկայական զանգված, որոնք կարգավորիչ ազդեցություն ունեն հասարակական կապերի վրա նույն այն կապերի, որոնք շատ հաճախ կարգավորվում են նաև իրավունքով: Փիլիսոփայական բանավեճը, որն ուսումնասիրում է նույն առարկան, սկսվում է այլ բանից՝ արժեքների և բարոյական կատեգորիաների («բարի», «չարիք», «պարտք», «խիղճ» և այլն) բնույթի պարզաբանումից<sup>2</sup>:

Իրավագետը, որպես կանոն, բարոյականության երևույթի մեջ առանձնացնում է այն, ինչը բնորոշում է նրան որպես կարգավորման միջոց, որոնում է նրանում գործող իրավական համակարգի յուրատեսակ նեցուկ և որոշակի բարոյական պաշար: Ընդհանուր առմամբ հենց դրանով էլ նա բավարարվում է, խորամուխ չլինելով արժեքային որոնումների մետաֆիզիկական կոնստրուկցիաների մեջ: Արժեքային հատկանիշների և պատշաճի հետազոտմամբ կլանված փիլիսոփայի համար բարոյականության ոլորտում գոյի հիմնախնդիրները շատ հաճախ մղվում են ետին պլան, իսկ դրանց հետ միա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 128 2022

<sup>1</sup> Տե՛ս **Ներսեսյանց Վ.Ս.** Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001, էջ 52-53:  
<sup>2</sup> Տե՛ս **Сорокина Ю.В.** Введение в философию права: курс лекций. М., 2008, էջ 111-112:

սին նաև իրավունքի ու բարոյականության իրական փոխգործակցության պրակտիկան: Իրավական և փիլիսոփայական վերլուծությունը հեշտորեն կարող են հեռանալ միմյանցից և նրանց սեփական մեթոդի թելադրանքով այն աստիճան տարանջատվեն, որ իրավաբանն ու փիլիսոփան, «բարոյականություն» միևնույն բառն արտասանելով դրա տակ կընկալեն միանգամայն տարբեր երևույթներ: Նմանատիպ դրսևորումներից զերծ մնալու նպատակով՝ անհրաժեշտ է մշտապես ճշգրտել բնորոշումները, ստուգել մեթոդաբանական և հասկացողական ապարատը, մարդու և աշխարհի մասին գիտելիքների ընդհանուր համակարգի շրջանակներում վերանայել փիլիսոփայության և իրավագիտության միջև ձևավորված փոխկապակցությունները:

Բնորոշելով **բարոյականությունը որպես նորմատիվ-կարգավորիչ համակարգ՝** ընդգծում ենք տվյալ երևույթի հասարակական բնույթն ի հակադրություն XX դարում տարածում գտած բազում տեսությունների և հայեցակարգերի, որոնք մերժում կամ վիճարկում են բարոյականության գոյությունը որպես սոցիալական օբյեկտիվ երևույթի և ետ են մղում նրա գոյությունը դեպի խոր սուբյեկտիվության, հոգեբանական ապրումների, հուզական արտահայտությունների (էմոտիվիզմ) կամ էլ բնագրական պայծառացումների (ինտիտիվիզմ) ոլորտ: Հետագա շարադրանքում կանդորադառնանք այդ տեսություններին այն չափով, որքանով դա անհրաժեշտ կլինի սույն թեմայի համար, իսկ այժմ կարևոր է ամրագրել այն դրույթը, համաձայն որի բարոյականությունը որոշակի նշանակություն է ստանում մարդկանց կյանքում շնորհիվ նրա, որ իրենից ներկայացնում է օբյեկտիվ մի համակարգ, որը ձևավորվել է միջանձնական, սոցիալ-խմբային և հասարակության մեջ զանգվածային այլ հարաբերությունների նորմատիվ կարգավորման արդյունքում: Բարոյականությունը կարժեզրկվեր, եթե մարդուն տրամադրեր միմիայն միջոցներ կյանքում ուղղակի ավելի հարմարավետ տեղավորվելու համար: Անձի համար բարոյականության նշանակությունը նրանում է, որ այն կանոնակարգում է մարդկանց համակցությունը,

նուղված է մարդկանց միջև գոյություն ունեցող կապերի ներդաշնակեցմանը. մարդիկ պետք է հարգեն միմյանց: Օբյեկտիվ է լայն մասշտաբներով ծավալվող բարոյական կարգավորման բուն գործընթացը, հասարակության կողմից մարդուն պարտադրվող և հասարակական հեղինակությամբ ապահովվող բարոյական նորմերը, բարոյական հարաբերությունները, որոնց շրջանակներում և կարող են դրսևորվել առանձին անհատի բարոյական բնութագրերը: Անշուշտ, օբյեկտիվ արտահայտություն է պահանջում նաև բարոյականության գործառույթային նշանակությունը լինել հասարակական կյանքի կազմակերպման գործոն, խթանիչ ներագդեցություն ունենալ նրա վրա, ձևավորել սոցիալական հաղորդակցումները, իրականացնել մարդկային կոլեկտիվների, սոցիալական մեծ ու փոքր խմբերի ինտեգրում<sup>3</sup>: Բարոյականության գործողության սահմանափակումը ներքին շարժառիթների, մարդու հոգեբանական ապրումների ոլորտում, եթե նույնիսկ չի բացառում բուն այդ գործառույթները, ապա ամեն դեպքում գործնականում զգալիորեն նվազեցնում է դրանք:

Բարոյականության էության որոնումները, հավանաբար, պետք է վարել բազմաթիվ հնարավոր մոտեցումների դիապագոնում, սկսած նրա ընկալումից որպես անհատականացված երևույթի, մարդու ներաշխարհի արտահայտության և, թերևս, տվյալ աշխարհի կիզակետի, մինչև նրա մեկնման որպես բուն և զուտ սոցիալական երևույթի: Ոչինչ չի տա մտորումներն այն մասին, թե ինչն է շատ կամ քիչ բարոյականության կառուցվածքում՝ հասարակականը, թե անհատականը: Օբյեկտիվի և սուբյեկտիվի, ներքինի և արտաքինի, հասարակականի և անհատականի հարաբերակցության հիմնահարցերը ամենևին էլ մտացածին և սին չեն: Դրանք ընկած են բարոյական շատ կատեգորիաների, օրինակ, բարոյականության որպես մարդու ներքին բարոյական արժանապատվություն հասկանալու հիմքում: Կարող է, արդյոք, առանձին անհատը լինել «բարոյական ինքն իր մեջ և իր համար» առանց իր բարոյական էության արտաքին դրսևորումների, կարող է նա լինել բարի և ազնիվ առանց բարի և

<sup>3</sup> Сѣн Выгорбина А.Е. Этика права. М., 2005, էջ 13-14:

ազնիվ արարքների կատարման: Բավական է արդյոք բարոյական լինելու համար, որ մարդն ինքն իրեն գնահատի և պահպանի որպես այդպիսին, թե, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նրա բարոյականության ճանաչումը հասարակության և մյուս մարդկանց կողմից: Արտաքնապես հեշտ թվացող այդ հարցերը, այդուհանդերձ, բազում վեճերի և տարաձայնությունների առիթ են տվել:

Գոյություն ունի կարծիք, որ մարդու բարոյականությունն անկախ է դրա արտաքին դրսևորումներից, անհատը կարող է բարոյական լինել և մնալ շնորհիվ իր ներքին հատկությունների և բարեմասնությունների<sup>4</sup>: Եթե դրանք կան, ապա բարոյական արարքները միայն հաստատում են այն ինչը կա, ոչինչ չավելացնելով արդեն որոշակիացված բարոյականությանը:

Կանտի բարոյականության հասկացումը տվյալ մոտեցման փիլիսոփայական հիմնավորման գազաթնակետն է: Սակայն շատ հեղինակներ Կանտից առաջ և հետո համարում էին, որ մարդը բարոյականությունը կրում է իր մեջ՝ պահպանելով այդ հատկությունն անկախ հասարակական միջավայրից կամ նույնիսկ նրան հակառակ<sup>5</sup>: Այնուամենայնիվ, եթե մարդու բարոյականությունը (ներքին բարոյական արժանապատվությունը) և նրա բարոյական արարքը կարելի է պատկերացնել առանձին-առանձին, ապա արդյո՞ք այն չի նշանակում, որ լավ մարդու արարքներն անպայմանորեն լավն են և համապատասխանում են նրա արժանապատվությանը, իսկ վատ մարդու բոլոր արարքներն ակնհայտորեն վատն են, և որ մենք պետք է անվերապահորեն ճանաչենք ավետարանական հայտնի արտահայտությունը. «Բարի մարդը բարի գանձից բարին է հանում, իսկ չար մարդը չար գանձից՝ չարը» (Մաթ. 12, 35): Հավանաբար, շատ քչերը կգտնվեն, որոնց «բարոյական գանձարանը» պարունակում է միայն բարին կամ միայն չարը: Այն, ինչը մարդը արտաքին աշխարհ է դուրս բերում իր ներքին «Ես»-ից, իր բարոյական գիտակցության խորքերից, կարող է լինել մասամբ բարի, մասամբ

չար ամբիվալենտ, հակասական և շրջապատի կողմից ստանալ ամենաբազմաթիվ, հաճախ նաև հակադարձ գնահատականներ: Ահա ինչու մարդու բարոյականությունն, անձի բարոյական արժանապատվությունը չունեն բավականաչափ հստակություն և այն անզիջողականությունը, որը շատ տեղին կլիներ, եթե կյանքում բարին հստակորեն տարանջատվեր չարից, եթե լավ մարդու վարքը միշտ լավը լիներ, իսկ չարինը՝ չար, իսկ բարոյական նորմերն ու պահանջները լինեին պարզ ու թափանցիկ: Երբ հայտարարում են, որ բարոյական գործողությունները գեղեցիկ մի բան են, որ անհրաժեշտ է բարոյական կերպով գործել, բայց ավելի կարևոր է բարոյական լինել, ապա այդ ամենի մեջ պարունակվում է որոշակի դրական իմաստ:

Ինչպես նշում է Հովհաննես Ստեփանյանը. «Մշակութային հոգեկերտվածքի տարբեր դրսևորումներում բարոյականությունն ունի բարու և չարի, արդարության և անարդարության, ինչպես և բարոյական հակասությունների և կատեգորիաների բովանդակության վերաբերյալ իր պատկերացումների առանձնահատկությունը: Այս առումով, այն ինչ բարի կամ արդար կարող է համարվել մշակութային հոգեկերտվածքի դրսևորումներից մեկում, ճիշտ հակառակը կարող է լինել մյուսում»<sup>6</sup>: «Բարոյական լինելը» և «բարոյական կերպով գործելը» միևնույն իմաստը չի արտահայտում, սակայն բարի նպատակներից ելնելով, «կարող ենք հակադրել առաջինը երկրորդին՝ երբ մարդը, ում բարոյական արժանապատվությունը կասկածների լույսի ներքո չի դիտարկվում, կատարում է (կարևոր չէ, ինչ դրդապատճառներով) վատ արարք: Սովորաբար նման մարդուն ասում են. «Հարգում ենք քեզ որպես անհատի, սակայն Ձեր գործողություններին (բառերին, մտայնություններին) հավանություն չենք տալիս և համարում ենք դրանք Ձեր արժանապատվությունից ցածր»: Նման իրավիճակներում վառ կերպով դրսևորվում է այն, ինչը կարելի է անվանել մարդու բարոյականության կանխավար-

<sup>4</sup> Sten Hedenius I. Om ratt och moral Stockholm, indens, 1941.

<sup>5</sup> Sten Коркунов Н.М. Лекции по общей теории права. Санкт-Петербург, 2004, էջ 56-57:

<sup>6</sup> Տե՛ս **Հովհաննես Ստեփանյան**. Իրավունքի տեսության հիմնահարցերը, ֆենոմենոլոգիական մոտեցում: Երևան, 2006, էջ 320:

կած՝ նման իրավաբանական հայտնի կանխավարկածների, և հիմնված այն համոզմունքի վրա, որ բարոյական արժանապատվությունը, բարոյական լինելու ունակությունը, որոնք բնորոշ են ցանկացած անհատի, չեն ոչնչանում վատ արարքով, հակառակը՝ պետք է ոչնչացնեն այդ արարքը, այսինքն՝ ուղղեն, դատեն սեփական խղճի դատով, բացառեն նման վարքը հետագայում:

Ըստ էության մարդու բարոյականության կանխավարկածն անմիջականորեն գործում է իրավունքում, դատավարության ժամանակ, որի մասնակիցները, չհամաձայնվելով դատավորի որոշումների կամ գործողությունների հետ, այնուամենայնիվ, չպետք է կասկածի տակ դնեն նրա բարոյականությունը: Դատավճռով դժգոհ անձն անհետքեք կերևար, եթե ըստ գործի էության վիճաբանության, սկսեր մեղադրել դատավորին ընդհուպ՝ անձնական վիրավորանքների: Վաղուց և իմաստուն է նկատված. «Չի կարելի կասկածել բարեխղճությանն ու ազնվությանը, սակայն կարելի է վիճարկել օրենքների կամ փաստերի նրա իմացությունը»<sup>7</sup>: Նշված կանխավարկածն ակներև է, թեև հարաբերական օգտակարությունն այն է, որ վերջինս, ինչպես և իրավաբանական կանխավարկածները, պաշտպանում է բարոյական սուբյեկտին հապճեպ մեղադրանքներից և հնարավորություն է տալիս մարդկանց միջև ծագող բարոյական և իրավական հիմնախնդիրները լուծել առանց ցասման ու կողմնակալության:

Կա մեկ այլ տեսակետ, որը կիսում են իրավաբան-գիտնականները: Ըստ այդ տեսակետի՝ մարդու բարոյականությունը պահանջում է արտաքին դրսևորումներ և պայմանավորվում է հասարակական ճանաչմամբ: Նման մոտեցման պարագայում մենք օբյեկտիվ հիմք ենք ստանում իրավունքի և բարոյականության՝ որպես հարակից նորմատիվ կարգավորիչ համակարգերի մերձեցման համար: Եթե անհատի բարոյական գործողությունները չեն շոշափում հասարակության և այլ մարդկանց շահերը, ապա դրանք բարոյապես անտարբեր են և չեզոք, իսկ տվյալ մարդու բարոյականությունը

որպես փաստացի կամ բանականորեն ճանաչվող իրականություն, ոչնչով չի կարող ապացուցվել: Անհատի բարոյական հատկանիշները չունեն ինքնաբավ, ինքնիշխան բնույթ, օժտված չեն մեկուսի, վերացական գոյությամբ: Դրանք ծագում, առարկայորեն որոշակիանում և իրականորեն ծավալվում են միմիայն հասարակության և մարդկանց հանդեպ վերաբերմունքի և հարաբերությունների շրջանակներում: Անհատի բարոյականությունը և բարոյական սուբյեկտությունը, նրա իրավասուբյեկտության նմանությամբ, անձի սոցիալական կոչման ծնունդն ու արգասիքն են:

«Բարոյականությունն իրենից ներկայացնում է ոչ թե մարդու պահանջը իր իսկ հանդեպ, այլ հասարակության պահանջը մարդու հանդեպ, - գրել է Գ.Ֆ. Շերշենևիչը: Ոչ թե մարդն ինքն է որոշում, ինչպես նա պետք է վերաբերվի մյուսներին, այլ հասարակությունն է որոշում, ինչպես մարդը պետք է վերաբերվի մեկ այլ մարդու: Ոչ թե մարդն է գնահատում վարքի լավն ու վատը, այլ հասարակությունը: Նա կարող է արարքը ճանաչել որպես բարոյապես լավ, թեև բուն այդ անհատը տվյալ արարքը կգնահատի որպես ոչ լավ, այնպես որ նա կարող է բարոյական առումով գնահատել այդ արարքը որպես վատ թեև անհատական տեսակետից այն լավն է»<sup>8</sup>: Եթե դա իսկապես այդպես է, ապա բարոյականությունը իրավունքի ճշտիվ պատճենն է, որն իդեալականորեն համապատասխանում է վերը բերված բնութագրմանը: Փոքր ինչ ձևափոխելով Կանտի և այլնի խոսքերը՝ Գ. Ֆ. Շերշենևիչը նույնպես պնդում է, որ բարոյական օրենքը «ոչ թե մեր մեջ է, այլ մեզանից դուրս ինչպես և աստղային երկինքը»<sup>9</sup>: Այդուհանդերձ, պնդել, որ բարոյական օրենքը և աստղային երկինքը մարդու հանդեպ գտնվում են նույն հարթության վրա, թերևս, ճշմարիտ չէ: Մեզանից ամեն մեկը կարող է, և պարտական է, իր մեջ ընդգրկել բարոյական օրենքը, հասնել սեփական մեծության, նրա մեջ գտնելով ստեղծագործական հնարավորություններ աշխարհի հանդեպ իր էթիկական վերաբերմունքը ստեղծելու, բնորոշելու ու

<sup>7</sup> Տե՛ս Kalinowski G.G. Etudes le bogique deontigue. Tifrairie general de drait et de jurisprudence.1972, էջ 61-62:

<sup>8</sup> Տե՛ս Шершеневич Г.Ф. Общая теория права. М., 1994, Вып. 1, էջ 169-170:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 171:

փոփոխելու համար: Աստծո մեծությունը և տիեզերքի անհունությունը մարդը պատկերացրել և յուրատեսակ կերպով շարունակել է հենց բարձր բանականությամբ և բարի խղճով օժտված մարդու մեծության մեջ: Էթիկայի գերագույն նշանակությունը հենց այն է, որ նա կամուրջ է ստեղծում արտաքին աշխարհի մեծության և մարդու ներքին մեծության միջև, միացնում է ներքին և արտաքին գոյի իմաստները՝ աշխարհի գոյությունը կապելով մարդու գոյության, իսկ այնուհետև նրա արարքների գոյության հետ: Մարդու համար լինել նշանակում է զգալ, մտածել գործել իրերի գոյաբանորեն իմաստավորված դրությանը համապատասխան: Հենց այստեղ է թաքնված մարդու բարոյական կեցության, նրա բարոյականության, որպես այդպիսին, և բարոյական արարքների հարաբերակցության վերաբերյալ մեր հարցի պատասխանը: Եթե բարոյականությունը դատարկ

աբստրակցիա չէ, այլ հնարավորություն է և կենսական ներուժ, որը մշտապես ուղղված է արդիականացման, ապա կա միայն մեկ ճանապարհ այն կյանքի կոչելու գործողության միջոցով: Դա բարոյականությունը պահպանելու և հզորացնելու ճանապարհն է: Ըստ հայտնի հոգեբան Վ. Ֆրանկի. «Ես ոչ միայն գործում եմ իմ կամեցածին համապատասխան, այլև համապատասխանում եմ իմ գործողություններին»<sup>10</sup>: Բարոյական գործողությունը, որը կրկնվում և ամրապնդվում է գիտակցության գործոններով, ձևավորվում է որպես անձի աշխարհայացքային դիրքորոշում, որպես էթիկական միտք, որպես մարդու բարոյականություն: Բոլոր այս հիմնահարցերը, շոշափելով բարոյական ոլորտը, դրա հետ մեկտեղ չափազանց կարևոր են սոցիալական կարգավորման համակարգի, իրավունքի ճանաչման համար:



<sup>10</sup> Տե՛ս Франк В. Человек в поисках смысла. М., 1990, էջ 114:



**ՀԱՅԿ ԱՎԵՏՅԱՆ**

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
քրեական իրավունքի ամբիոնի հայրորդ

**ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲՈՒՆԸՆ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

**I. Ֆրանսիայի Հանրապետություն**

Դեռևս 1789 թվականին Ֆրանսիայում ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրն» ամրագրում էր ժամանակի ընթացքում օրենքի գործողության առանցքը կազմով միայն օրենքի հիման վրա դատապարտվելու և պատժվելու. “nullum crimen, nulla poena sine lege” սկզբունքը: Մասնավորապես, հռչակագրի 7-րդ հոդվածի համաձայն՝ «ոչ ոք չի կարող մեղադրվել, ձերբակալվել կամ ազատությունից զրկվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և օրենքով նկարագրված ընթացակարգերի:» (nullum crimen sine lege): Համաձայն նույն հռչակագրի 8-րդ հոդվածի՝ «Օրենքը պետք է ամրագրի միայն այն պատիժը, որը խստորեն անհրաժեշտ է, ոչ ոք չի կարող ենթարկվել պատժի, առանց օրենքի, որը գրվել է մինչ արարքի կատարումը:» (Nulla poena sine lege):

Դրանից երկու տարի անց՝ 1791 թվականին, ընդունվեց Ֆրանսիայի առաջին քրեական օրենսգիրքը, որի հիմնական փոփոխությունն ու փիլիսոփայությունը հենց “nullum crimen sine lege” սկզբունքի ամրագրումն էր:<sup>1</sup> 18-րդ դարի համար սա հեղափոխական մոտեցում էր և եկել էր փոխարինելու նախկինում տիրող կամայական դատապարտմանը:<sup>2</sup>

Սկզբունքի օրենսդրական ամրագրումներն անփոփոխ մնացին Ֆրանսիայի 1946, 1958 թվականների Սահմանադրության և 1810 ու 1992 թվականների քրեական օրենսգրքերում:<sup>3</sup>

Ժամանակի ընթացքում օրենքի գործողության վերաբերյալ ֆրանսիական իրավունքի դոկտրինը տարբերում է երկու հիմնական մոտեցում՝ 1. «դասական» կոնցեպտը՝ որ անվանվում է Մերլ Լեվասերի համակարգ, 2. «նոր» կոնցեպտը՝ Րուբյո Վիտյուի համակարգ:<sup>4</sup>

Համաձայն «դասական» կոնցեպտի՝ նոր քրեական օրենքը հետադարձ ուժ չունի: Ըստ այս մոտեցման՝ օրենքի հետադարձ ուժի կիրառումը ընդհանուր կանոնի զուտ բացառությունն է (օրինակ՝ առավել մեղմ նոր օրենքի դետադարձ ուժով կիրառումը): Հետևաբար, բոլոր կասկածները պետք է մեկնաբանվեն հոգուտ նոր քրեական օրենքի չկիրառման այն արարքների նկատմամբ, որոնք կատարվել են մինչ այդ օրենքի ընդունումը:<sup>5</sup>

Ըստ «նոր» կոնցեպտի՝ այն արարքների նկատմամբ, որոնք թեև կատարվել են մինչ քրեական նոր օրենքի ընդունումը, սակայն դրանց վերաբերյալ դատական քննությունը դեռևս ավարտված չէ և դատավճիռ կայացված չէ, անմիջականորեն կիրառվում է քրեական նոր օրենքը: Այս մոտեցման կողմնակիցներն այն արդարացնում են պնդելով, որ նոր օրենքը միշտ իր իրավաբանական ուժով գերազանցում է նախկին օրենքը: Ընդհանուր կանոնը նոր օրենքի անմիջական գործողությունն է, իսկ նրա չգործելը՝ միայն բացառություն ընդհանուր կանոնից: Հետևաբար, բոլոր կասկածները պետք է մեկնաբանվեն հոգուտ նոր օրենքի կիրառման:<sup>6</sup>

Ֆրանսիայի գործող քրեական օրենսգիրքը որդեգրել է «դասական» կոնցեպտը: Ֆրանսի-

<sup>1</sup> [https://en-academic.com/dic.nsf/enwiki/9631388#cite\\_note-4](https://en-academic.com/dic.nsf/enwiki/9631388#cite_note-4) (01.12.2021 թ.)  
<sup>2</sup> Տես նույն տեղում:  
<sup>3</sup> Уголовное право зарубежных стран. Общая и особенная части: учебник / под ред. И.Д. Козочкина. с 308, 2010 г.  
<sup>4</sup> Տես նույն տեղում:  
<sup>5</sup> Տես նույն տեղում:  
<sup>6</sup> Տես նույն տեղում:

սիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատը բազմիցս ընդգծել է այս սկզբունքի կարևորությունը: Մասնավորապես, պալատի 1964 թվականի հունիսի 23-ի որոշումն արձանագրում է, որ «որևէ հանցանք չի կարող սահմանվել այնպիսի արարքի կատարման համար, որը օրենսդրորեն որպես հանցանք ամրագրված չէ»: 2002 թվականի մարտի 5-ի որոշման մեջ նշվում է՝ «ոչ ոք չի կարող պատժվել այնպիսի արարքի կատարման համար, որի տարրերը օրենքով որոշված չեն»:<sup>7</sup>

Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը ևս արդարադարձել է օրինականության սկզբունքին և 1998 թվականի մայիսի 5-ի որոշմամբ արձանագրել է, որ «այս սկզբունքից հետևում է, որ օրենսդիրը պարտավոր է ֆիքսել քրեական օրենքի գործողության տիրույթը, հանցանքներն ամրագրել բավականաչափ հստակ և կոնկրետ եզրույթներով, որպեսզի հնարավոր լինի որոշակիացնել հանցանք կատարող անձանց և պատիժներ նշանակելիս բացառել կամայականությունը»:<sup>8</sup>

## II. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՄՆ-ի իրավական համակարգում «ժամանակի ընթացքում օրենքի գործողության» սկզբունքն անվանվում է «օրինականության սկզբունք»: Այս սկզբունքը, որ այլ կերպ կոչվում է *nullum crimen, nulla poena sine lege* (չկա հանցանք և չկա պատիժ առանց օրենքի), ԱՄՆ-ում առավելապես ընկալվում է իբրև դատական օրինաստեղծման արգելք,<sup>9</sup> այսինքն՝ դատարանները չեն կարող օրենքի մեկնաբանման արդյունքում ստեղծել մի նոր հանցատեսակ՝ վերազանցելով օրենքի ձևակերպումը: Այն անքակտելիորեն կապված է «անորոշության պատճառով առոչինչ» (*void-for-vagueness*) սահմանադրական դոկտրինի և «ճշգիրտ կառուցման» (*strict construction*) կանոնի հետ:<sup>10</sup>

## 1. Օրինականության սկզբունքը

ԱՄՆ իրավական համակարգը խարսխված է ընդհանուր իրավունքի իրավահամակարգի վրա, որը դեռևս միջին դարերում ծագել է Անգլիայում: Այս իրավահամակարգի առանձնահատկությունն այն է, որ այն կոդիֆիկացված, գրված չէ: Այսինքն՝ չկա հստակ օրենքների կամ նորմերի ժողովածու: Թեև ընդհանուր իրավունքը հիմնվում է որոշակի օրենսդրության վրա, սակայն, այն հիմնականում «հենվում» է նախադեպերի վրա՝ դատական որոշումների, որոնք արդեն իսկ կայացվել են նմանատիպ դեպքերում: Այս նախադեպերը ժամանակի ընթացքում պահպանվում են դատարանների արձանագրությունների միջոցով, ինչպես նաև պատմականորեն փաստագրված նախադեպային իրավունքի ժողովածուներում, որոնք հայտնի են որպես տարեգրքեր և հաշվետվություններ: Յուրաքանչյուր նոր գործի որոշման մեջ կիրառվելիք նախադեպը սահմանում է նախագահող դատավորը: Արդյունքում, դատավորները հսկայական դեր ունեն ամերիկյան օրենսդրության ձևավորման գործում:<sup>11</sup>

Ամերիկացի որոշ գիտնականներ պնդում են, որ դատարանների կողմից հանցատեսակների ստեղծումն անցյալում է, և նրանց կարծիքով ընդհանուր իրավունքի բոլոր հանցատեսակները կոդիֆիկացված են:<sup>12</sup>

Դեռևս 1812 թվականին ԱՄՆ գերագույն դատարանն արձանագրել էր, որ որպեսզի որևէ արարք համարվի իբրև պատժելի հանցանք, ԱՄՆ կոնգրեսը պետք է ամրագրի այն, նախատեսի դրա համար պատիժը և այն դատարանը, որն ունի այդ հանցանքի առնչությամբ գործը քննելու իրավազորություն:<sup>13</sup>

Ինքնին, ԱՄՆ սահմանադրության 1-ին հոդվածի 9-րդ բաժինը արգելում է հետադարձ ուժով օրենքի ընդունումը,<sup>14</sup> և այդպիսի օրենքն անվանում՝ «*ex post facto law*»: ԱՄՆ գերագույն դատարանը նշել է, որ դա այն օրենքն է, որը

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>9</sup> Joshua Dressler, *Cases and Materials on Criminal Law*, Thomson West, 2003, p. 85.

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> <https://www.law.berkeley.edu/wp-content/uploads/2017/11/CommonLawCivilLawTraditions.pdf> (01.12.21թ.)

<sup>12</sup> Joshua Dressler, *Understanding Criminal Law*, Lexis Nexis, 2006, p. 31-32.

<sup>13</sup> Уголовное право зарубежных стран. Общая и особенная части: учебник / под ред. И.Д. Козочкина. с 150, 2010 г.

<sup>14</sup> Բնօրինակ տեքստը՝ “No Bill of Attainder or ex post facto Law shall be passed.”

հետադարձ կերպով փոփոխում է հանցանքի հասկացությունը կամ ծանրացնում հանցանքների համար նախատեսված պատիժը:<sup>15</sup>

**ա) Կելերն ընդդեմ Կալիֆորնիայի գերագույն դատարանի գործով 1970 թվականի որոշումը**

Կելերը և Թերեզան 1968 թվականի սեպտեմբերի 27-ին ամուսնալուծվում են: 1969 թվականի փետրվարի 23-ին նրանք երթևեկելիս պատահաբար հանդիպում են միմյանց, և Կելերը արգելափակում է Թերեզայի ճանապարհը, մոտենում և ասում է վերջինիս, որ ինքը լսել է, որ Թերեզան հղի է այլ տղամարդուց և պատրաստվում է պտուղը դուրս հանել նրա միջից: Այնուհետև, Կելերը Թերեզային դուրս է հանում մեքենայից, ծնկով սեղմում նրա որովայնը և քանիցս հարվածում դեմքին, ինչի արդյունքում Թերեզան ուշաթափվում է:

Կեսարյան հատման միջոցով երեխային դուրս են բերում, որի գլուխը ծանր վնասված է լինում, թոքերում օդ չի լինում, և բժշկական կարծիքի համաձայն մահը վրա էր հասել անմիջապես, և վնասվածքները մոր որովայնին գործադրված ճնշման արդյունքն էին:

Մինչ դեպքի օրը, պտղի (երեխայի) շարժումներն արդեն սկսվել էին, բացի այդ, բժշկական փորձագետի ցուցմունքի համաձայն՝ պտուղն արդեն իսկ հասել էր կենսունակության այն մակարդակին, որ եթե մինչև դեպքը կամ դեպքի ժամանակահատվածում երեխան ծնվեր, ապա 75-ից 96 տոկոս հավանականությամբ ունակ կլիներ ապրելու:

Կալիֆորնիայի գերագույն դատարանի (այսուհետ՝ Դատարան) առաջ բարձրացել էր հետևյալ իրավական հարցը՝ նշված արարքով Կելերը կատարել էր սպանություն, թե՛ ոչ:

Կալիֆորնիայի քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն՝ սպանությունը մարդուն ապօրինի, դիտավորությամբ կյանքից զրկելն էր: Հարցն այն էր, թե արդյոք չծնված երեխան՝ պտուղը, նշված օրենքի տեսանկյունից ընդգրկվում էր «մարդ» հասկացության մեջ, թե՛ ոչ:

Այդ հոդվածը նշված օրենսգրքում ամրագրվել է 1872 թվականին, սակայն այն բառացի արտացոլում էր 1850 թվականի Կալիֆորնիայի

«հանցանքներ և պատիժներ» ակտի սպանության հոդվածը:

Այսպիսով՝ անհրաժեշտ էր բացահայտել օրենսդրի կամքը 1850 թվականի դրությամբ:

Դատարանն արձանագրում է, որ նշված հոդվածն ամրագրելիս օրենսդիրն անշուշտ լավատեղյակ էր ընդհանուր իրավունքի վերաբերելի կարգավորումներին և միտված էր պահպանելու այդ կանոնների շարունակականությունը: Մինչ 1850 թվականը ընդհանուր իրավունքի համաձայն **նորածինը կարող էր լինել սպանության տուժող, միայն եթե ծնվել էր կենդանի:**

Դատարանը հանգում է այն հետևության, որ 1850 թվականին օրենսդիրը, քրեականացնելով սպանությունն իբրև մարդուն ապօրինի, դիտավորյալ կյանքից զրկել, նկատի է ունեցել ընդհանուր իրավունքում հաստատված «մարդ» հասկացությունը, այն է՝ «կենդանի ծնված մարդ», և մտադրություն չի ունեցել այդ հանցանքի ներքո հասկանալ պտղի սպանությունը: Օրենքը հոգուտ արարքը կատարողի մշակելը Կալիֆորնիա նահանգի քաղաքականությունն է: Մեղադրվողի իրավունքն է, որ յուրաքանչյուր ողջամիտ կասկած մեկնաբանվի հոգուտ իրեն:

Իհարկե, 1872 թվականից ի վեր բժշկագիտությունը մեծապես առաջադիմել է: Պատշաճ բժշկական հսկողության պայմաններում նորմալ ձևավորված պտուղը հղիությունից 28 շաբաթ անց ծնվելով ապրելու հիանալի հնարավորություն ունի: Այսինքն՝ ընդհանուր իրավունքի այն մոտեցումը, որ նորածինը կարող է լինել սպանության տուժող, միայն այն դեպքում, եթե ծնվել է կենդանի, այլևս չի համապատասխանում գիտական զարգացումներին, քանզի չծնված, սակայն կենսունակ պտուղն այլևս ամբողջովին ունակ է անկախ կյանքի: Հետևաբար, այդպիսի պտղին կյանքից զրկողը պետք է պատասխանատվություն կրի 187-րդ հոդվածի իմաստով սպանության համար: Դատարանը նշում է, որ այս փաստարկն ունի կյանքի իրավունք, սակայն այդպիսի արարքի համար սպանության հոդվածով անձին դատապարտելու համար կա երկու խոչընդոտ:

Նախ, 187-րդ հոդվածն ամրագրող վերոգրյալ օրենսգրքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ

<sup>15</sup> Collins v. Youngblood, 497 U.S. 37, 1990թ.:

նույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված արարքները քրեական և պատժելի չեն: Խոսքն, իհարկե, քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքի մասին է: Դատարանն ընդգծում է, որ այս նորմը արտացոլում է ԱՄՆ իշխանության եռակազմ կառուցվածքի սկզբունքը՝ հանցանքներ և պատիժներ սահմանելու իրավունքն ընձեռված է բացառապես օրենսդրին: Այլ կերպ՝ Կալիֆորնիայում չկան ընդհանուր իրավունքի հանցանքներ:

Ակնհայտ է, որ դատարանները չեն կարող այնքան առաջ գնալ, որ ստեղծեն նոր հանցանք «լայնացնելով» օրենքը, դրան ավելացնելով կամ դրանից հանելով բառեր, կամ եզրույթներին կեղծ կամ անսովոր իմաստ հաղորդելով: Օրենքները ստեղծված չեն դրանց հիմնական մտադրությունից անդին անցնելու համար: Դրանք ներառում են միայն այն հանցանքները, որոնց տարրերն ընդգրկված են դրանց ձևակերպումներում:

Դատարանն ընդունում է, որ չծնված, բայց կենսունակ պտղին կյանքից զրկելը կարող է համարվել սպանության բնույթի և ծանրության հանցանք: Սակայն, եթե դատարանները եզրահանգեն, որ նման արարքի համար սպանության մեղադրանքով անձին պատասխանատվության ենթարկելու ժամանակն արդեն եկել է, ապա նրանք կհամբազրեն հանցանքն այն վերաձևակերպելու միջոցով, և ոչ էլ օրենքի բացը լրացնելը կարդարացնի նման դատապարտումը: Հանցատեսակի նոր դրսևորումներ բացահայտելը, ինչի կարիքը ժամանակ առ ժամանակ կարող է զգացվել, ամբողջովին օտար է ամերիկյան քրեական արդարադատությանը և կարող է իշխանության ճյուղերի տարանջատման լուրջ խնդիր առաջացնել:

Երկրորդ խոչընդոտը պատշաճ ընթացակարգի (due process) սկզբունքն է, որի կարևորագույն տարրը քրեորեն պատժելի դարձող արարքի մասին նախնական զգուշացումն է: «Քրեական օրենսգրքի եզրույթները պետք է բավարար չափով պարզ լինեն, որպեսզի հանցանքի սուբյեկտը տեղեկանա, թե իր որ արարքները կհանգեցնեն քրեական պատասխանատվության»<sup>16</sup>:

«Երբ քրեական նոր օրենսգիրքը կիրառվում է հետադարձորեն, քրեականացնելով մի արարք, որն այդպիսին չէր մինչ այդ, մեղադրվողը չի ստանում նախնական զգուշացում, ինչը պարտադիր պահանջ է պատշաճ ընթացակարգի տեսանկյունից: Լրիվ նույն բանն է լինում, երբ մի արարք վերածվում է հանցանքի նախկինում գոյություն ունեցող օրենքի՝ դատական անկանխատեսելի լայն մեկնաբանման արդյունքում»<sup>17</sup>:

Այսպիսով՝ Դատարանն ընդգծելով, որ Կալիֆորնիայի դատարանները նախկինում երբևէ չծնված երեխային կյանքից զրկելը քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով սպանություն չեն համարել, այդ մասով արդարացնում է Կելերին:

Դատարանի նախագահ Բուրկեն չհամաձայնելով մեծամասնության որոշմանը՝ ներկայացնում է հատուկ կարծիք (dissenting opinion):

Բուրկեն իր անհամաձայնությունը պատճառաբանում է հետևյալ կերպ.

Օրենսդիրը քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածում սպանության հանցանքը ձևակերպել է որպես մարդուն ապօրինի կյանքից զրկել: Այս բառերը ժամանակի ընթացքում չափտք է «սառած» մնան, այլ դատարանների կողմից պետք է արդար և ողջամիտ մեկնաբանման ենթարկվեն՝ արդարադատություն իրականացնելու և օրենսդրի նպատակներն իրագործելու համար:

Բուրկեն ներկայացնում է մի օրինակ՝ դիակին կրակելը չի համարվում սպանություն, սակայն այսօրվա բժշկագիտության շարունակական զարգացումը կյանքի վերականգնման տարատեսակ մեթոդներ ու եղանակներ է մշակել: Արդյոք սպանության հոդվածի տեսանկյունից դատարանը դարեր առաջ և հիմա դիակին կրակելը նույն կերպ կմեկնաբաներ, իհարկե՝ ոչ: Արդյոք նման դեպքում տեղի է ունեցել սպանություն, թե՛ ոչ, դատարանը կարող էր որոշել միայն համապատասխան բժշկական փորձաքննության միջոցով՝ մինչ մեղադրվողի կրակոցը տուժողի ապրելու հավանականությունը պարզելու համար: Հենց այսպիսի թեստով պիտի առաջնորդվեր Դատարանն այս դեպքում:

<sup>16</sup> Conally v. General constr. Co. 269 U.S. 385, 391, 46 S.Ct. 126, 127, 70 L.Ed 322 (1926).

<sup>17</sup> Bouie v.City of Columbia (1964) 378 U.S. 347, 84 S.Ct. 1697, 12 L.Ed.2d 894.

Ընդհանուր իրավունքի այն մոտեցումը, որ շարժվող, բայց դեռ չծնված երեխային կյանքից զրկելը սպանություն չէ՝ հիմնված է այն կանխավարկածի վրա, որ երեխան այդ դեպքում միևնույն է կենդանի չէր ծնվի: Սակայն, այսօր նման կանխավարկածը հակասում է ընդհանուր փորձին և բնությանը:

Բուրկեն նշում է, որ եթե, ինչպես ինքն է առաջարկում, «մարդ» հասկացությունն ընկալվի իբրև փոփոխվող, դինամիկ կոնցեպտ, որը պետք է ունենա ներկա հանգամանքներին համապատասխան նշանակություն, ապա կասկած չի հարուցում այն, որ այդ հասկացությունը պետք է ներառի ամբողջովին կենսունակ պտղին ևս:

Մեծամասնությունը նշում է, որ այդպիսի մեկնաբանությունը կառաջացնի լրիվ նոր հանցատեսակ, սակայն, սպանության հանցատեսակը նոր չէ: Ի հեճուկս մեծամասնության կարծիքի, օրենսդիրը սպանության հոդվածն ամրագրելիս նկատի չի ունեցել, որ այն պետք է կիրառվի միայն կենդանի ծնված երեխային ապօրինի կյանքից զրկելու դեպքում: Փոխարենը, օրենսդիրն ընդամենն օգտագործել է «մարդ» լայն հասկացությունը և դատարաններին պատվիրակել է այդ հասկացությունն այնպես մեկնաբանել, որ արդարացիորեն դուրս բերվի դրա իմաստն ու այն ծառայի արդարադատությանը: Չծնված, բայց շարժունակ և կենսունակ երեխային «մարդու» հասկացությունից բացառելն ինչ արդար շահի է ծառայում: Արդյոք չծնված երեխային միտումնավոր ու դաժան կերպով կյանքից զրկելը պակաս սպանություն է, քան արդեն ծնված երեխայի սպանությունը: Ոչ ոք կասկածի տակ չի դնում այն, որ «մարդ» հասկացությունն ընդգրկվում է զառամյալ ծերունուն կամ մեռնող մարդուն, որոնց կյանքի «ժամկետը» գրեթե լրացել է: Չկա որևէ ողջամիտ պատճառ կենսունակ պտղին «մարդու» հասկացությունից բացառելու համար:

Մեծամասնությունը նաև նշել է, որ վերոնրջյալ մեկնաբանությունը մեղադրվողին կզրկի «արդար զգուշացումից» առ այն, որ իր արարքը պատժելի է իբրև հանցանք: Ակնհայտ է, որ մեղադրվողն ունեցել է պատշաճ ծանուցում այն

մասին, որ իր արարքը կարող է համարվել սպանություն: Սպանության հոդվածը 1850 թվականից ի վեր ուժի մեջ է: Այն, որ Կալիֆորնիայի դատարաններն այս կոնկրետ հարցին չեն անդրադարձել, չի նշանակում, որ կենսունակ պտղին մարդ համարող որոշումն անկանխատեսելի էր: Արդյոք մեղադրվողն իրապես կարող է պնդել, որ 34 շաբաթական, առողջ, շարժունակ պտուղը «մարդ» հասկացության տակ չի կարող տեղավորվել:<sup>18</sup>

Կալիֆորնիայի կոնգրեսը սույն որոշումից հետո փոփոխել է սպանության վերոնշյալ հոդվածը՝ ձևակերպելով այն հետևյալ կերպ. «սպանությունը մարդուն կամ պտղին ապօրինի, դիտավորյալ կյանքից զրկելն է»:<sup>19</sup>

Ուշագրավ է, որ Կելերի կատարած արարքից դեռևս երկու տասնամյակ առաջ Կալիֆորնիայի վերաքննիչ դատարանը Չավեսի վերաբերյալ գործում արձանագրել էր հետևյալը.

«Մոր որովայնից դուրս գալու պահից առաջ և հետո երեխան մեծ փոփոխություն չի կրում, և որպես կանոն, թեև դեռևս կախված լինելով իր մորից, երեխան որոշ ժամանակ՝ մինչ ծնվելը, ոչ միայն անկախ ապրելու հնարավորություն, այլև մեծ հավանականություն ունի: Թեև հնարավոր չէ բոլոր դեպքերի համար կիրառելի հստակ գիծ գծել, սակայն օրենքի կանոնները պետք է ճանաչեն և փորձեն հետևել բնական և գիտական փաստերին, որոնց այդ օրենքի կանոններն առնչվում են: [...] Կլինի զուր ֆիկցիա պնդելը, թե երեխան դեռևս մարդ չէ, քանի որ ծննդյան գործընթացը չի ավարտվել, երբ երեխան հասել է կենսունակության այն աստիճանի, որ իր մոր կյանքի ընդհատումը չի հանգեցնի իր գոյության վերացմանը, և երբ իր մորից բնական կամ արհեստական ճանապարհով բաժանման դեպքում երեխան կապրի և կմեծանա նորմալ կերպով»:<sup>20</sup>

Այսպիսով՝ Դատարանի նախագահ Բուրկեի հատուկ կարծիքը թվում է հիմնավոր: Մասնավորապես, մեղադրվող Կելերի համար իր արարքն իբրև սպանություն կանխատեսելն իրատեսական էր Չավեսի վերաբերյալ Կալիֆորնիայի վերաքննիչ դատարանի որոշման առկա-

<sup>18</sup> Կալիֆորնիայի գերագույն դատարանի 1970 թվականի որոշումը սույն հոդվածում ներկայացվեց հակիրճ:

<sup>19</sup> Joshua Dressler, Cases and Materials on Criminal Law, Thomson West, 2003, p. 96.

<sup>20</sup> People v. Chavez, 77 Cal.App.2d 92 (1947).



յությամբ պայմանավորված: Այնուամենայնիվ, Դատարանն իր մեծամասնությամբ այն կարծիքին է եղել, որ միայն հստակ գրված օրենքի հիման վրա անձի դատապարտման իրավունքն այս դեպքում գերակա է և արգելվում է անձին դատապարտել օրենքի մի այնպիսի մեկնաբանությամբ, որը չի բխում հենց այդ օրենքի տեքստից, դրա ձևակերպումից, այն, ըստ էության կհանգեցնի անձի վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ կիրառման, թեև ինչպես նշել է դատավոր Բուրկեն, այդ օրենքը 1850 թվականից ի վեր գոյություն ունի, և այստեղ խնդիրը ոչ այնքան օրենքի հետադարձության, որքան այդ օրենքը կյանքի փոփոխվող հանգամանքներին համապատասխան մեկնաբանելու և կիրառելու մեջ է, որը չի հանգեցնում անձի իրավաչափ ակնկալիքի կամ քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքի խախտման:

### III. Գերմանիայի Դաշնային Հանրապետություն

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի (Սահմանադրության) 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Արարքը կարող է պատժվել, եթե դրա պատժելիությունն օրենքով սահմանված է եղել նախքան արարքի կատարումը»: Փաստորեն, Գերմանիան ևս սահմանադրական մակարդակով ամրագրում է միայն օրենքի հիման վրա դատապարտվելու կամ օրինականության սկզբունքը:

#### ա) Բեռլինի պատի գործը

Մինչ բեռլինյան պատի կառուցումը Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունից մոտ երկուսուկես միլիոն մարդ փախել էր Գերմանիայի Դաշնային Հանրապետություն: Այս զանգվածային փախուստը կանխելու նպատակով 1968 թվականին կառուցվում է բեռլինյան պատը, որը հսկվում էր զինված հրաձիգների

կողմից: Սահմանը հատելու փորձերի ժամանակ սպանված անձանց թիվը Արևմուտքի հաշվարկներով տատանվել է 264-ից 938-ի միջև<sup>21</sup>:

1984 թվականին այդ հրաձիգներից մեկը երկու կրակոց էր արձակել մի քսանամյա տղայի վրա, որը փորձել էր աստիճանի օգնությամբ անցնել պատի վրայով դեպի Արևմտյան Գերմանիա: Մի փոքր անց երկու զինվորներ տղային տարել էին պահակադիտանոց (watchtower), ի հեճուկս վերջինիս բժշկական օգնության աղերսների, պահել էին երկու ժամ, որից հետո միայն տեղափոխել հիվանդանոց, որտեղ տղան անմիջապես մահացել էր<sup>22</sup>:

Մեկ այլ դեպքում Արևմտյան Գերմանիայի կողմից հայր և դուստր մոտորանավակով մուտք էին գործել երկու Գերմանիաների ջրային սահման և չէին հասցրել վերադառնալ իրենց ափ: Ընդամենը տասը մետր սահմանը հատելու պատճառով ռմբակոծվել էին հրաձիգների կողմից: Հայրը մահացել էր, աղջիկը՝ ստացել առողջական անբուժելի վնաս, իսկ հրաձիգները ոստիկանության կողմից խրախուսվել էին<sup>23</sup>:

Այս բոլոր դեպքերն ունեին մի շարք նմանություններ. 1) հրաձիգները հրահանգված էին ամեն կերպ կանխել անձանց փախուստը, այլ միջոց չմնալու դեպքում ոչնչացնելով նրանց, 2) դեպքերը պետք է հնարավորինս գաղտնի պահվեին, նույնիսկ զոհերի կյանքի գնով, 3) հաջողակ հրաձիգները արժանանում էին պետական խրախուսանքի<sup>24</sup>: Հետևաբար, ԳԴՀ փլուզումից հետո՝ 1989 թվականի աշնանը, նորընտիր խորհրդարանը պահանջում է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից, որ Արևելյան Գերմանիայի կոմունիստական կուսակցության օրոք անարդարություններ գործած մարդկանց նկատմամբ սկսվեն քրեական հետապնդումներ<sup>25</sup>:

Երկու Գերմանիաների միջև կնքված «միավորման պայմանագրի» 8-րդ հոդվածի<sup>26</sup>, «Քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» օ-

<sup>21</sup> Էլիսբեր Մոուբրեյ, Գործեր և Նյութեր, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, Երևան, «Բավիլ» 2010թ. էջ 496.

<sup>22</sup> Rudolf Geiger, The German Border Guard Cases and International Human Rights, EJIL 9, 1998, p. 541.

<sup>23</sup> Rudolf Geiger, The German Border Guard Cases and International Human Rights, EJIL 9, 1998, p. 542.

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>25</sup> Էլիսբեր Մոուբրեյ, Գործեր և Նյութեր, Մարդու իրավունքների Եվրոպական Դատարան, Երևան, «Բավիլ» 2010թ. էջ 496:

<sup>26</sup> Treaty between the Federal Republic of Germany and the German Democratic Republic on the Establishment of German Unity (“Unification Treaty”) of 31 August 1990.



րենքի 315-րդ հոդվածի և Քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ուժով հրաձգների պատժելիության հարցը պետք է լուծվեր նախկին ԳԴՀ-ի (Արևելյան Գերմանիայի) օրենքներով, որոնց հիման վրա նրանց արարքն արդարացված էր, ընդ որում այդ օրենքները խիստ հակասության մեջ էին միջազգային իրավունքի նորմերի հետ: Մասնավորապես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «յուրաքանչյուր մարդ իրավունք ունի լքել ցանկացած երկիր, ներառյալ իր սեփականը»<sup>27</sup>: Այնուամենայնիվ, միավորված Գերմանիայի Հիմնական օրենքի (Սահմանադրության) 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Արարքը կարող է պատժվել, եթե դրա պատժելիությունն օրենքով սահմանված է եղել նախքան արարքի կատարումը»: Փաստորեն գերմանացի դատավորները պարտավոր էին կիրառել արարքի կատարման պահին գործող արդարացման հիմքերը, այս դեպքում՝ «Սահմանի մասին» ԳԴՀ-ի օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: Այդպես է պահանջում օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը:

Սակայն, Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը, արդարադատության նախկին նախարար, փիլիսոփա-իրավագետ Գուստավ Ռադբրուխի բանաձևի հիման վրա (տես ստորև) որոշում է, որ կոնկրետ այս դեպքի համար թույլատրելի է Հիմնական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հետադարձ ուժի արգելքի սկզբունքի սահմանափակումը, որը սովորաբար ունի բացարձակ գործողություն: Այս բացառիկ դեպքում նյութաիրավական արդարության սկզբունքն արգելում է նախկինում գործող արդարացման հիմքերի կիրառումը, և օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը պետք է զիջի նյութական արդարությանը, որովհետև այդ արդարացնող հիմքերը խախտում են արդարության տարրական պահանջները և միջազգային իրավունքում ճանաչված մարդու իրավունքները: Օրենքով թույլատրելի գնդակահարել սեփական քաղաքացիներին ուղղակի այն բանի համար, որ փորձում են քաղաքի մի մասից անցնել մյուս մասը, այնքան անարդար է, որ չի կարող արդարացնել մարդու բոլոր հիմնական իրավունքների կենսական հիմքը կազմող կյանքի իրավունքի խախտումը:

Ռադբրուխյան բանաձևի<sup>28</sup> համաձայն՝ «Արդարության և իրավական անվտանգության միջև բախումը պիտի այնպես լուծվի, որ դրական, ուժի միջոցով ապահովված իրավունքը գերակայություն ունենա նաև այն ժամանակ, երբ այն իր բովանդակությամբ անարդար ու աննպատակահարմար է, բացառությամբ այն դեպքի, երբ արդարության հետ դրական օրենքի հակասությունն այնպիսի անտանելի չափի է հասնում, որ օրենքը՝ որպես «սխալ իրավունք», պետք է զիջի արդարությանը: Անհնար է հստակ սահման գծել օրինական անիրավության դեպքերի և, չնայած սխալ բովանդակությանը, դեռ գործող օրենքների միջև: Սակայն կարելի է շատ հստակ այլ սահման գծել. **որտեղ մարդիկ արդարության նույնիսկ չեն էլ ձգտում, որտեղ հավասարությունը, որն արդարության միջուկն է, դրական իրավունք ստեղծելիս գիտակցաբար մերժվում է, այնտեղ օրենքը ոչ միայն «սխալ իրավունք» է, այլև զուրկ է ընդհանրապես իրավական բնույթից, որովհետև չի կարելի իրավունքը, նաև պոզիտիվ իրավունքը, այլ կերպ սահմանել, քան այնպիսի մի համակարգ, որն իր իմաստով կոչված է ծառայելու արդարությանը»<sup>29</sup> (ընդգծումը՝ հեղինակի):**

Ռադբրուխյան բանաձևի<sup>28</sup> համաձայն՝ «Արդարության և իրավական անվտանգության միջև բախումը պիտի այնպես լուծվի, որ դրական, ուժի միջոցով ապահովված իրավունքը գերակայություն ունենա նաև այն ժամանակ, երբ այն իր բովանդակությամբ անարդար ու աննպատակահարմար է, բացառությամբ այն դեպքի, երբ արդարության հետ դրական օրենքի հակասությունն այնպիսի անտանելի չափի է հասնում, որ օրենքը՝ որպես «սխալ իրավունք», պետք է զիջի արդարությանը: Անհնար է հստակ սահման գծել օրինական անիրավության դեպքերի և, չնայած սխալ բովանդակությանը, դեռ գործող օրենքների միջև: Սակայն կարելի է շատ հստակ այլ սահման գծել. **որտեղ մարդիկ արդարության նույնիսկ չեն էլ ձգտում, որտեղ հավասարությունը, որն արդարության միջուկն է, դրական իրավունք ստեղծելիս գիտակցաբար մերժվում է, այնտեղ օրենքը ոչ միայն «սխալ իրավունք» է, այլև զուրկ է ընդհանրապես իրավական բնույթից, որովհետև չի կարելի իրավունքը, նաև պոզիտիվ իրավունքը, այլ կերպ սահմանել, քան այնպիսի մի համակարգ, որն իր իմաստով կոչված է ծառայելու արդարությանը»<sup>29</sup> (ընդգծումը՝ հեղինակի):**



<sup>27</sup> Rudolf Geiger, The German Border Guard Cases and International Human Rights, EJIL 9, 1998, p. 543.  
<sup>28</sup> Brian Bix, Radbruch's Formula and Conceptual Analysis, University of Minnesota Law School, 2011, p. 46.  
<sup>29</sup> Բանաձևի հայերեն թարգմանությունը իրավունքի դոկտոր (Doctor iuris, Berlin), Հագենի (Գերմանիա) համալսարանի դասախոս Գոռ Հովհաննիսյանի՝ <https://bit.ly/2sm8vda> (21.08.2018):

ՀԱՅԿ ՇԱՀՐԱՉՅԱՆ

ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԻՐԱՎՈՒՆԵՐԸ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԱՌՈՒՄՈՎ**

Իրավագիտության մեջ և իրավակիրառ պրակտիկայում հաճախ խոսում կամ պատկերացնում են իրավունքը օբյեկտիվ կամ սուբյեկտիվ առումով<sup>1</sup>:

Իրավունքը կարևորագույն սոցիալական կարգավորիչ է, որի միջոցով ապահովվում է հասարակական կարգը, խելամիտ պահանջ-մունքների բավարարումը գույքային շրջանառության պայմաններում:

«Իրավունք» եզրույթը բազմիմաստ ու բազմաշերտ սոցիալ-իրավական երևույթ է<sup>2</sup>: Իրավունքի իմաստավորման նման բարդությունը, մեր կարծիքով, բացատրվում է առնվազն երկու հանգամանքով: Նախ՝ իրավունքն ինքնին օբյեկտիվորեն բարդ սոցիալական երևույթ է, երկրորդ՝ իրավունքի հասկացական ապարատը սուբյեկտիվ առումով (ընկալման, մեկնաբանման, գործադրման) բազմաբնույթ է՝ պայմանավորված սուբյեկտի իրավագիտակցության, իրավամտածողության և ընդհանրապես աշխարհայեցողության մակարդակից:

Այդ է պատճառը, որ իրավունքի վերաբերյալ գոյություն են ունեցել և գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ, տեսակետներ, հայեցակարգեր, ուսմունքներ և այլն: Դրանց թվում է նաև իրավունքի հասկացությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ առումով:

Իրավունքը դիտարկվում է օբյեկտիվ առումով, որպես իրավական նորմերի համակցություն, քանի որ այն ստեղծվում և գործում է անկախ առանձին մարդկանց կամքից<sup>3</sup>: Իրավունքն օգտագործվում է սուբյեկտի առումով՝ օգտագործվում է իրավունքի սուբյեկտների պաշտոնապես ճանաչված ինչ-որ իրավական գործողություն կատարելու հնարավորությունը նշելու համար<sup>4</sup>: Սուբյեկտիվ իրավունքը իրա-

վական հնարավորություն է, որը պատկանում է իրավունքի կոնկրետ սուբյեկտիվ (ֆիզիկական կամ իրավաբանական անձանց և այլն):

Այսպիսով՝ օբյեկտիվ իրավունքը տվյալ ազգային պետության օրենսդրությունն է (գործող իրավունքն է): Այն լայն իմաստով «դրական» (պոզիտիվ) իրավունքը հենց օբյեկտիվ իրավունքն է:

Սակայն իրավունքն իր այս նախնական օբյեկտիվ վիճակում դեռևս «դեկլարատիվ», «թղթային» իրավունք է: Օբյեկտիվ իրավունքն իրացվում է սուբյեկտիվ իրավունքի վերածվելու ճանապարհով, երբ սահմանադրական և օրենսդրական նորմերը վերածվում են իրավունքի կոնկրետ սուբյեկտների որոշակի իրավագործությունների և իրավաբանական պարտականությունների:

Իրավունքի երկու իմաստների էությունը պարզ է՝ իրավական նորմերի համակցություն, որոնք արտահայտված են (արտաքինապես օբյեկտիվացված) պետության համապատասխան նորմատիվ իրավական ակտերում (սահմանադրությունում, օրենքներում, օրենսգրքերում, հրամանագրերում, հրամաններում, որոշումներում և այլն): Դրա **օբյեկտիվ իմաստով իրավունք** է, կամ պարզապես **օբյեկտիվ իրավունք** քաղաքացիների իրավունքների, ազատությունների ու պարտականությունների համակարգ, որոնք ամրագրված են գործող օրենսդրության մեջ կամ բխում են բազմաթիվ իրավահարաբերություններից, ինչպես նաև հատուկ են անհատին ի ծնե, կազմում է **իրավունք սուբյեկտիվ իմաստով** կամ **սուբյեկտիվ իրավունք**: Ընդ որում, օբյեկտիվ իրավունքի մեջ են մտնում նաև դատական նախադեպը, իրավական սովորույթը և նորմատիվ պայմանագրերը, իսկ սուբյեկտիվ իրավունքի մեջ՝ նաև օրինական շահերը:

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 128 2022

1 Տե՛ս **Milne A. J.** Human rights and human diversity: An essays in the philosophy. Basingstoke, London, 1986. Էջ 9-10:  
 2 Տե՛ս օրինակ, **Четверкин В. А.** Проблемы теории права (для особо одаренных студентов). М/, 2010, Современное правопонимание. Курс лекций. Изд-во “Норма”, М., 2016 և այլն:  
 3 Տե՛ս **Վաղարշյան Ա. Գ.** Պետության և իրավունքի տեսություն - 2: Դասախոսություններ: -Երևան, 2011, էջ 16:  
 4 Տե՛ս նույն տեղը:

իրավական նորմը՝ սահմանված կամ պետության կողմից արտոնված համապարտադիր, ձևականորեն որոշակի վարքագծի կանոն է: Սուբյեկտիվ իրավունքը՝ օրենքով երաշխավորված հնարավոր (թույլատրված, թույլատրելի) վարքագծի տեսակն ու չափն է: Ընդունված է համարել, որ սուբյեկտիվ իրավունքը բխում է օբյեկտիվից, այլ ոչ թե հակառակը: Միայն բնական իրավունքները իշխանությունից չեն և օրենքից չեն, այլ՝ բնությունից, բանականությունից են: Սակայն այս դեպքում էլ իշխանությունը, պետությունը պարտավոր են հարգել ու պաշտպանել այդ իրավունքները, այդ թվում նաև օբյեկտիվ իրավունքում դրանց ամրապնդման միջոցով: Ուստի, այստեղ էլ բնական ու դրական (օբյեկտիվ) իրավունքի միջև կապը բավականաչափ հստակ է երևում:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստով իրավունքի միջև տարբերությունը գիտության մեջ վաղուց է ձևավորվել, այն տարվում է դեռևս հռոմեական իրավագիտության մեջ, այնուհետև՝ հետագա իրավական համակարգերում, ինչպես եվրոպական մայրցամաքում, այնպես էլ ԱՄՆ-ում<sup>5</sup>: Այս հայեցակարգն առավելագույն զարգացում ու հիմնավորում է ստացել, մասնավորապես, անցյալ դարի գերմանական իրավագիտության մեջ<sup>6</sup>:

Ըստ էության իրավունքի երկու տեսակների գաղափարը սկզբունքորեն դրված է բնական-իրավական ուսմունքում, քանի որ բնական իրավունքը գոյություն ունի մարդու կամքից անկախ՝ ի վերուստ, սա վերաբերվում է մարդու անբաժան իրավունքներին, այսինքն՝ բնական իրավունքն իր էությամբ ու բովանդակությամբ միասնական, անբաժան իրավունք է, որը ներառում է օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքը անխզելի միասնության մեջ:

Սակայն իրավունքի հասկացությունների գոյությունն օբյեկտիվ ու սուբյեկտիվ իմաստով իրավաբանների մոտ միշտ վեճեր էր առաջացնում՝ հաճախակի հանդիսանալով բազմաթիվ

այլ իրավական խնդիրների տարբեր ընկալման ու լուծման պատճառ: Այդպես, օրինակ, Գ. Ֆ. Շերշենևիչը գրում էր, որ «արդեն իսկ սուբյեկտիվ իրավունքի մասին հասկացության հետազոտման շեմին մենք բախվում ենք դրա վճռական մերժման հետ», թեպետ ինքն այդ մերժումը համարում էր «ոչ ավել, քան բողոք բառի, այլ ոչ թե դրա կողմից նշանակված էության դեմ»<sup>7</sup>:

Սուբյեկտիվ իրավունքի կատեգորիան մերժելու առանձին փորձերը մի ժամանակ ձեռնարկվում էին նաև խորհրդային գրականության մեջ: Այս կատեգորիան հայտարարվել է «հնացած և ոչ պիտանի գիտության մեջ», «մեթոդաբանորեն սխալ», «չհամապատասխանող սոցիալիստական հարաբերություններին», իսկ դրա պահպանման մեջ դիտվում էր «բուրժուական իրավագիտության ազդեցությունը»<sup>8</sup>: 50-ական թվականների պետության և իրավունքի տեսության գծով որոշ դասագրքերում «սուբյեկտիվ իրավունք» եզրույթն անգամ հանդես չէր գալիս, այն սովորաբար փոխարինվում էր իրավասուբյեկտիվությամբ կամ իրավաունակությամբ:

Սակայն հետագայում այս նիհիլիստական միտումները չստացան աջակցություն: Դրանց հակառակ Ս.Ֆ. Կեչեկյանն արդարացիորեն ընդգծում էր. «Սուբյեկտիվ իրավունքը, այսինքն՝ առանձին անձանց իրավունքը, կազմում է իրավական համակարգի և իրավագիտության ամբողջովին անհրաժեշտ հասկացություն»<sup>9</sup>: Նույն կարծիքի էր Ա.Ա. Պիոնտկովսկին՝ «Սուբյեկտիվ իրավունքը հնացած կամ խորհրդային իրավունքի համար ոչ պիտանի հասկացություն չէ, ընդհակառակը, այժմ այն ձեռք է բերել իր իրական ու լիարժեք իմաստը»<sup>10</sup>:

Ավելի վաղ՝ 1955թ.-ին, «Խորհրդային պետություն և իրավունք» ամսագրի խմբագրական հոդվածներից մեկում ասվում էր. «Հարկավոր է ճանաչել սուբյեկտիվ իրավունքի բուն կատեգորիան «վերացնելու» փորձերի խորը սխալը՝ իբր «բուրժուական» իրավագիտության ազդեցության դեմ պայքարի դրոշի ներքո»<sup>11</sup>:

<sup>5</sup> Տե՛ս Լոуренс Фридмэн. Введение в американское право. М., 1993.

<sup>6</sup> Տե՛ս Жалинский А., Рерихт А. Введение в немецкое право. «Спарк», М., 2001.

<sup>7</sup> Տե՛ս Шершеневич Г. Ф. Общая теория права. М., 1912: ст. 600.

<sup>8</sup> Տե՛ս О состоянии юридических наук // Вопросы философии. 1953. № 1: ст. 105.

<sup>9</sup> Տե՛ս Кечекьян С. Ф. Правоотношения в социалистическом обществе. М., 1959: ст. 48.

<sup>10</sup> Տե՛ս Пионтковский А. А. К вопросу о взаимоотношении объективного и субъективного права // Советское государство и право. 1958. № 5: ст. 47.

<sup>11</sup> Տե՛ս Советское государство и право. 1955, № 3: ст. 11.

Դրանով իսկ տրվում էր ընդհանուր դիրքորոշումը, կողմնորոշումը:

Հիշեցնենք, որ դա եղել է այդպես կոչված «խռուչովյան հալոցքի» ժամանակաշրջանը, երբ առանձին անձի իրավունքների նկատմամբ վերաբերմունքը սկսեց աստիճանաբար փոխվել: Մ. Ս. Ստրոգովիչն ուշադրությունը դարձնում էր նրան, որ տվյալ հարցում իրավագիտության, անկասկած, նվաճում է այն դրույթի առաջնությունն ու հիմնավորումը, որ քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը Խորհրդային պետության ինքնուրույն գործառույթն է:

Սուբյեկտիվ իրավունքի հասկացության «ժխտումը» հիմնավորվում էր «սուբյեկտիվ իրավունք» եզրույթի ոչ հստակ, երկիմաստ լինելով, որը տարբեր մեկնաբանություն է առաջացնում անգամ իրավագետների շրջանում: Իսկ առօրյա գիտակցության մեջ այն առավել ևս անհանգստություն է մտցնում, չէ որ ցանկացած անտեղյակ քաղաքացի կարող է լիովին հիմնավորված նկատել. «Տարբեր տեսակի իրավունքների մասին լսել եմ, շատերն ինքս էլ ունեմ, սակայն ոչ մի «սուբյեկտիվի» մասին պատկերացում չունեմ»: Ուստի առաջարկություն էր արվում փոխարինելու «չարաբաստիկ» եզրույթն այլ եզրույթով կամ ընդհանրապես հրաժարվել դրանից: Սակայն այս փաստարկն ակնհայտորեն անհիմն է, քանի որ այս դեպքում յուրաքանչյուր գիտությանը ստիպված կլինեի հրաժարվել իր ոճից, իր «թռչնալեզվից», վանել անհասկանալի կամ պարզապես «անցակնալի» եզրույթները:

Այս բոլոր ծագումնաբանական կողմերի դիտարկման հետ կապված անհրաժեշտ է ասել, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի հասկացությունները չի կարելի շփոթել **իրավունքում օբյեկտիվի ու սուբյեկտիվի հիմնախնդրի** հետ: Դրանք տարբեր հարցեր են, թեպետ և փոխկապակցված: Վերջին դեպքում նկատի է առնվում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների, պատճառների, պայմանների հարաբերակցությունը, որոնք իրենց ազդեցությունն են թողնում իրավունքի՝ իբրև սոցիալական

երևույթի ձևավորման ու գործողության գործընթացների վրա: Այլ կերպ ասած, դա զուտ փիլիսոփայական, «խստմատյան» հիմնախնդիր է: Այն լայնորեն քննարկվում էր մեզ մոտ (բանավեճի կարգով) «Իրավագիտություն»<sup>12</sup> ամսագրի էջերին:

Այս բանավեճի ընթացքում դրա մասնակիցները համաձայնվեցին այն կարծիքի շուրջ, որ իրավունքում, իրավաստեղծության, իրավական կարգավորման գործում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները՝ կարևոր ինքնուրույն գիտական ուղղություն է, որը պահանջում է խորը տեսական մշակում՝ հասարակության զարգացման յուրաքանչյուր հստակ փուլի նկատմամբ և կիրառմամբ: Ինչ վերաբերվում է «օբյեկտիվ իրավունք» և «սուբյեկտիվ իրավունք» կատեգորիաներին, ապա դրանք պայմանական ձևաբանական հասկացություններ են (արտահայտություններ, բառակապակցություններ), որոնք ընդունված են համաշխարհային իրավագիտության և պրակտիկայի մեջ: Դրանց կապը օբյեկտիվի ու սուբյեկտիվի փիլիսոփայական հասկացությունների հետ բավականաչափ միջնորդավորված ու հարաբերական է<sup>13</sup>:

Սա փիլիսոփայական տեսակետ չէ, այլ գլխավորապես տրամաբանական- հասկացական, ճանաչողական, որը վերաբերվում է նշված հասկացությունների ծագմանը, դրանց ձևավորման, բովանդակության, բնույթի, գոյաբանական կարգավիճակի, հետազոտության մեթոդաբանությանը: Այլ կերպ ասած՝ այլ տեսակետ, հիմնախնդրի այլ տեսանկյուն, թեպետ և փիլիսոփայության, մասնավորապես, ճանաչողության տեսության որոշակի տարրեր դրանում, այնուամենայնիվ, առկա են, ինչպես և բազմաթիվ այլ իրավաբանական ինստիտուտներում ու հասկացություններում:

«Իրավունք» եզրույթը որպես բազմիմաստ սոցիալական երևույթ, միշտ չէ և ոչ բոլորի կողմից է օգտագործվում միևնույն իմաստով, այլ ձեռք է բերում տարբեր իմաստներ՝ կախված նրանից, թե ինչպիսի իրավաբանական երևույթ են ցանկանում արտահայտել: Ընդ որում, այդ-

<sup>12</sup> Տե՛ս Правоведение, 1961: Թիվ 1, 4, 1970, թիվ 6, 1971, թիվ 2, 1972, թիվ 2, 3, 1973, թիվ 1985, թիվ 3, տե՛ս նաև Советское государство и право, 1969, թիվ 6:

<sup>13</sup> Տե՛ս Витрук Н. В. К вопросу об объективном и субъективном праве и о понятиях «объективное право» и «субъективное право» // Вопросы Советского государства и права. Томск, 1966: էջ 3- 10; Алексеев С. С. Объективное в праве // Правоведение. 1971. № 1:

պիսի անորոշությունը գոյություն ունի ոչ միայն առօրյա կյանքում, որտեղ «իրավունք» բառի ետևում երբեմն կանգնած չէ իրավաբանական ոչ մի բան, այլև տեսության մեջ, որը նույնպես չի խուսափել այս իր հիմնական կատեգորիայի բազմադիմությունից: Մինչդեռ դեռևս հին մտածողները խորհուրդ էին տալիս. «Մի բազմապատկեր էություններն առանց անհրաժեշտության»:

Սակայն, չնայած այս իմացաբանական դժվարությանը, իրավաբանները վաղուց ի վեր օգտագործում են «իրավունք» բառը երկու գլխավոր իմաստներով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Իրավական իրականությունը դիտարկվում է երկու կտրվածքներում՝ այս կտրվածքի մեկ հարթության վրա տեսնում ենք պետության կողմից սահմանվող համապարտադիր նորմերը, իսկ մյուսում՝ այն ամենը, ինչը կապված է դրանց իրականացման հետ, այն հստակ հնարավորությունները, լիազորությունները, գործողությունները, որոնք մարդիկ կարող են ձեռնարկել և գործնականում ձեռնարկում են այս նորմերի հիման վրա և դրանց սահմաններում:

Իրավունքը՝ իբրև նորմ, օրենք, նորմատիվ իրավական ակտ, սովորույթ, նախադեպ՝ իբրև այդ սահմանումների շրջանակներում վարվելու սուբյեկտների հնարավորությունը կամ իրավասությունը՝ դա է իրավունքը օբյեկտիվի ու սուբյեկտիվի տարանջատման էությունը:

Իրավունքն օբյեկտիվ իմաստով տվյալ ժամանակաշրջանի օրենսդրությունն է կոնկրետ երկրում, իսկ իրավունքը սուբյեկտիվ իմաստով՝ այն հստակ հնարավորություններն են, իրավունքներ, պահանջներ, հավակնություններ, օրինական շահեր, ինչպես նաև՝ պարտականություններ, որոնք ծագում են օրենսդրության հիման վրա և սահմաններում իրավաբանական հարաբերությունների մասնակիցների համար:

Այստեղ հարկավոր է նկատել, որ եթե «իրավունք» հասկացությունը կիրառվում էր առանց որևէ վերապահումների, ապա դրա տակ միշտ նկատի էր առնվում իրավունքն օբյեկտիվ իմաստով, այսինքն՝ իրավական նորմեր:

Ճշգրտման անհրաժեշտությունը հենց առաջանում է այն ժամանակ, երբ պահանջվում է ուշադրություն դարձնել և մատնանշել ոչ թե օրենքի նորմը, այլ առանձին սուբյեկտի իրավունքը՝ սուբյեկտիվ իրավունքը: Առանց այդպիսի ճշգրտման, այսինքն՝ առանց «սուբյեկտիվ» հասկացության, իրավունքը սովորաբար դիտարկվում է իբրև օբյեկտիվ (նորմերի ամբողջություն), անգամ եթե «օբյեկտիվ» բառն այդ ժամանակ բացակայում էր: Տվյալ համատեքստում կարևոր է հակադրության պահը:

«Օբյեկտիվ իրավունքից,- գրում էր Մ. Վ. Վիշնյակը,- տեսական իրավաբանությունը սկսեց տարբերել սուբյեկտիվ իրավունքը, որը սահմանվում էր իբրև անձին պատկանող իրավասությունների ու հավակնությունների ամբողջություն՝ օբյեկտիվ իրավունքի նորմերի հիման վրա, ինչպես այն, ինչը ճանաչվում է անհատի շահերից ելնելով և օժտված է իրավական պաշտպանության հնարավորությամբ»<sup>14</sup>:

Բնականաբար, այն երևույթը, որը կոչվում է «սուբյեկտիվ իրավունք», կարելի էր արտահայտել նաև այլ քերականական ձևի օգնությամբ, օրինակ՝ սուբյեկտի իրավունք, անձի իրավունք, քաղաքացու իրավունք և այլն (լրացում) կամ օգտագործել ածական՝ անձնական իրավունք, անհատական իրավունք: Լայն լսարանին դա ավելի հասկանալի կլիներ: Ժամանակին առաջարկվում էին նաև այլ լեզվական խորհրդանիշերը: Ռ. Հերինգը սուբյեկտիվ իրավունքն անվանում էր հստակ՝ հակադրելով այն վերացական իրավաբանական ձևին<sup>15</sup>:

Ռ. Իերինգը, ինչպես արդեն նշվել է, օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքն անվանում էր վերացական ու հստակ<sup>16</sup>: Խորհրդային գրականության մեջ բազմիցս մատնանշվում էր «իրավասություն» եզրույթը՝ իբրև սուբյեկտիվ իրավունքի հոմանիշ: Սակայն իրավասությունն ու սուբյեկտիվ իրավունքը միշտ չէ, որ համընկնում են, վերջինը կարող է պարունակել ոչ թե մեկ, այլ մի քանի իրավասություններ: Այլ կերպ ասած՝ այս կատեգորիաները նույնական չեն, չեն նույնացվում մեկը մյուսին:

<sup>14</sup> Տե՛ս Вишняк М. В. Личность в праве. Пг., 1917. ст. 28.

<sup>15</sup> Տե՛ս Иеринг Р. Избранные труды. В 2 томах. Санкт-Петербург, 2006, ст. 575.

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը:

ՆՈՒՆԵ ԶՈՄԱՐԴՅԱՆ

Եվրասիա Միջազգային Համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության՝ որպես սոցիալական պետության հանրային քաղաքականությունն ու ինստիտուտների գործունեությունը պետք է ուղղված լինեն արդար սոցիալական կարգի գործադրմանը: Սոցիալական արդարության երաշխավորումը գործնականում իրականացվում է ժողովրդավարական մեթոդներով, իրավունքի հիման վրա՝ սամանադրական նորմերի և դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերի միջոցով, որոնք իրացվում են պետական իշխանության մարմինների իրավակիրառ պրակտիկայում: Այս գործընթացների հիմնական ուղենիշերը սահմանված են ՀՀ Սահմանադրության «Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» վերտառությամբ 3-րդ գլխում: Ըստ այդմ՝ սոցիալապես պատասխանատու պետության պարտականությունն է իրականացնել այնպիսի ակտիվ քաղաքականություն, որը միտված է ազատ անհատի ձևավորման համար ստեղծելու համալիր նախադրյալներ՝ անկախ կոնկրետ անձի փաստական հնարավորություններից<sup>1</sup>:

Այս գործընթացներում էական դեր է խաղում աղքատության հաղթահարումն ու հետագա կանխարգելումը, քանզի աղքատության շեմից վեր ապրելու իրավունքն ունի հիմնարար

նշանակություն արդարությանն ուղղված քաղաքականության համար: Այն չի կարող փոխարինվել կամ փոխհատուցվել այլ նպատակներով: Անհատական ինքնավարությունը և կյանքի հնարավորություններից օգտվելու կարողությունը հնարավոր են միայն այն դեպքում, երբ վերջինս ապրում է աղքատության շեմից բարձր:

ՀՀ Վիճակագրական կոմիտեի «Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2020թթ.» ուսումնասիրության համաձայն աղքատությունը Հայաստանում 2020թ. կազմել է 27%<sup>2</sup>: Դրա հետ մեկտեղ, սոցիալական պաշտպանության համակարգի խորքային վերլուծությունը փաստում է, որ աղքատությունը Հայաստանում շարունակում է մնալ ամենաբարձրերից մեկը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում, իսկ 2010-2015 թվականներին աղքատությունը հաղթահարած յուրաքանչյուր 3 անձանցից մեկը կրկին հայտնվել է աղքատության մեջ<sup>3</sup>: Ինչ վերաբերում է աղքատության արդյունքում հասարակությունում առաջացող անհավասարությանը, ապա, ըստ Ջինի գործակցի<sup>4</sup>, 2022թ. այն կազմում է 34.4<sup>5</sup>, որը նույնպես բնութագրական է անհավասարության բարձր մակարդակ ունեցող երկրների համար:

Հայաստանի Հանրապետությունում անհավասարության սկզբնական պատճառներից մեկը ռեսուրսների անհավասար բաշխումն ու սե-

<sup>1</sup> Տե՛ս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործական հետազոտություն)/ Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան.– Եր.: Հայրապետ հրատ., 2015, էջեր 139-140:  
<sup>2</sup> Տե՛ս Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2020թթ.//Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, էջ 30 [https://armstat.am/file/article/poverty\\_2021\\_a\\_2..pdf](https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf) (մուտք՝ 05.02.2022)  
<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային անալիզը: Հունիս 2020թ. IBRD-IDA, The World Bank Group. UNICEF, էջ 10:  
<sup>4</sup> Տե՛ս Ջինիի գործակիցը ցույց է տալիս, թե որքան անհավասարաչափ են բաշխված եկամուտները բնակչության առանձին խմբերի միջև: Գործակիցը թույլ է տալիս նաև դատել տվյալ երկրում տնտեսական անհավասարության մակարդակի մասին: Louse Simmons Economic Justice. Encyclopedia of Social Work. National Association of Social Workers Press and Oxford University Press. Published online: 29 March 2017.  
<sup>5</sup> Տե՛ս Gini Coefficient by Country 2021. World Population Review <https://worldpopulationreview.com/country-rankings/gini-coefficient-by-country> (մուտք՝ 05.02.2022):



փականության կենտրոնացումն է բնակչության փոքրաթիվ ընտանիքների ձեռքում<sup>6</sup>: Դա նշանակում է, որ փաստացի իրավիճակը տարբերվում է սահմադրական ձևակերպումներից, քանի որ բնակչության մեծ մասը բացառվել, դուրս է մնացել սեփականության իրավունքն իրականացնելու հնարավորությունից: Գերմանացի սահմանադրագետ Ցախերի կարծիքով՝ «Եթե հասարակության իրական կառուցվածքը, այսինքն՝ քաղաքականությունը, իրավունքը և փաստացի հարաբերությունները, այդ թվում՝ այն մարդկանց սոցիալական կարգավիճակը, որոնց համար վերջինս կրում է պատասխանատվություն, չեն համընկնում հասարակության սահմանադրաիրավական բնութագրերի հետ, ապա դրանք պետք է փոխվեն այնպես, որպեսզի ձեռք բերեն համապատասխանություն»<sup>7</sup>:

Այս պարագայում անհավասարության հաղթահարման ապահովման միջոցներից մեկը նյութական և ոչ նյութական ռեսուրսների, հատկապես՝ սեփականության հասանելիության ապահովումն է: Առաջնային հարցն այն է, թե ինչպես են հասարակության մեջ բաշխվում մասնավոր սեփականություն համարվող ռեսուրսները: Ասբյորն Էյդեն նշում է, որ «այնտեղ, որտեղ եկամուտները բավականին հավասարաչափ են բաշխված և հնարավորությունները ողջամտորեն հավասար են, անհատները շատ ավելի լավ վիճակում են սեփական կարիքները հոգալու առումով, և պետության կողմից պետական ծախսերի կարիք կարող է ավելի քիչ զգացվել, ... Մյուս կողմից, երբ եկամուտներն անհավասարաչափ են բաշխվում, հավասար

հնարավորություններից և իրավունքներից հավասարապես օգտվելն ապահովելու պահանջը կարող է ենթադրել ավելի մեծ պետական ծախսեր՝ հիմնված պրոգրեսիվ հարկման և պետական եկամուտների այլ աղբյուրների վրա<sup>8</sup>»:

Մեր կարծիքով պետական ծախսերի բարձր մակարդակի միջոցով հարցերի լուծումը կարելի է մեղմել շահագրգիռ սոցիալական խմբերի միջև «ուժերի համեմատաբար համաչափ հավասարակշռման» միջոցով<sup>9</sup>: Այսինքն՝ շտկել ուժերի հավասարակշռությունը սոցիալական խմբերի միջև՝ դասային, մասնագիտական, ոլորտային, տարածական և գենդերային տեսանկյուններից<sup>10</sup>: Սեփականության հասանելիության առումով դրա լուծման օրինակ կարող է լինել ձեռնարկություններում համատեղ որոշումների կայացման համակարգի գործադրումը, որտեղ աշխատակիցներն ունեն ձայնի իրավունք կորպորատիվ կառավարման մեջ (օրինակ՝ ընկերության տնօրենների խորհուրդներում) պաշտոնական ներկայացուցիչների միջոցով: Կարելի է զարգացնել տնտեսություն, որը բաղկացած կլինի փոխադարձ հարաբերություններից<sup>11</sup>, կոոպերատիվներից, աշխատողներին պատկանող ընկերություններից և սոցիալական ձեռնարկություններից: Մեկ այլ տարբերակ կարող է լինել խոշոր ձեռնարկությունների կապիտալի մի մասի վերաբաշխումը աշխատանքային կոլեկտիվի շրջանում՝ բաժնետոմսերի տեսքով<sup>12</sup>: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն ընկերությունները, որոնք զուգորդում են աշխատողների ներկայացուցչությունն ու համատեղ կառավարումը, ունեն ավելի բարձր արտադրողականություն<sup>13</sup>:

<sup>6</sup> Տե՛ս Մինասյան Էդիկ Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Եր., Երևանի համալս. հրատ., 2003:  
<sup>7</sup> Տե՛ս Цахер X.Ф. Социальное государство // Государственное право Германии. М., 1994. Т.1, ст. 64-65.  
<sup>8</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ: Դասագիրք/ Ա. Էյդեն, Կ.Կրաուզե, Ա.Ռոզաս.-Եր.: Տիգրան Մեծ, 2009, էջեր 36-37:  
<sup>9</sup> Տե՛ս Castles, F., Leibfried, S., Lewis, J., Obinger, H. and Pierson, C. (eds). (2010). The Oxford Handbook of the Welfare State. OUP Oxford. P 11.  
<sup>10</sup> Տե՛ս Veerayooth Kanchoochat, Social Protection and Welfare State Building: Fast and Slow Lessons// Social Development Working Papers. United Nations, ESCAP, No. 2'019/07, p 23.  
<sup>11</sup> «Փոխադարձ» եզրույթն օգտագործվում է որպես ընդհանուր հասկացություն սեփականության մի քանի մոդելների համար: Փոխադարձ հարաբերությունները, ի տարբերություն «ներդրողների կողմից վերահսկվող» ընկերությունների, հաճախ նկարագրվում են որպես ձեռնարկություններ, որտեղ մասնակիցներն ունեն որոշակի աստիճանի ժողովրդավարական վերահսկողության հնարավորություն քիզնեսի նկատմամբ և որոշակի մասնաբաժին եկամտի մեջ: A guide to mutual ownership models. Department for Business, Energy and Industrial Strategy. November 2011.  
<sup>12</sup> Տե՛ս Power, M.; Wilkinson, R.; Pickett, K. Inequality, economic democracy and sustainability. World Social Science Report, 2016: Challenging Inequalities; Pathways to a Just World; UNESCO: Paris, France, 2016, p 161.  
<sup>13</sup> Տե՛ս Estrin, S., Jones, D. C. and Svejnar, J. 1987. The productivity effects of worker participation: producer cooperatives in western economies. Journal of Comparative Economics, Vol. 11, No. 1, p 40-61.

Վիտոլսի դիտարկմամբ՝ եվրոպական երկրներում, որտեղ առկա է աշխատողների ներկայացուցչությունն ապահովող կոշտ օրենսդրություն, անհավասարությունն ավելի դանդաղ է աճում: Բացի այդ, ժողովրդավարական ձեռնարկություններում, որպես կանոն աշխատակիցների շրջանում աշխատավարձերի հաշվարկման գործակիցների տարբերությունը ցածր է<sup>14</sup>: Պատահական չէ, որ բրիտանական հասարակության 76 տոկոսը սատարում է աշխատակազմի ներկայացուցչությունը տնօրենների խորհրդների մակարդակում<sup>15</sup>:

Պետք է ընդգծել նաև, որ թեև սեփականությունը մարդու իրավունքների և ազատությունների արտահայտման կարևորագույն ձևն է, այնուամենայնիվ ոչ բոլոր մարդիկ կարող են հավասարապես օգտվել այդ իրավունքից<sup>16</sup>: Այդ իսկ պատճառով սեփականության իրավունքը լրացվում է մի շարք իրավունքներով, առավելապես՝ աշխատանքի և սոցիալական ապահովության իրավունքներով<sup>17</sup>: Սակայն մասնավոր սեփականության գոյության պայմաններում պետության համար դժվար է յուրաքանչյուրին ապահովել իր մասնագիտական որակին և կրթությանը համապատասխան աշխատանքով: Այս տեսակետից ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածն ամրագրում է միայն աշխատանքի ազատ ընտրության իրավունքը և, հիմնվելով սոցիալական պետության «ազատ անհատի հայեցակարգի» վրա, պահանջում է յուրաքանչյուր չափահաս անհատից սեփական աշխատանքով վաստակել անհրաժեշտ միջոցները: Անհատի ազատ զարգացումն իր հերթին

անխուսափելիորեն հանգեցնում է որոշակի անհավասարությունների, որն ընդլայնվում և շարունակում է աճել COVID-19-ի և հետպատերազմյան ճգնաժամային իրավիճակի պայմաններում: ԵԱՏՄ-ի վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանում գործազրկության մակարդակն ամենաբարձրն է անդամ պետությունների շարքում: Օրինակ, եթե Բելարուսում այն կազմում է 4,0%, Ղազախստանում՝ 4,9%, Ղրղզստանում՝ 5,8%, իսկ Ռուսաստանում՝ 5,6%, ապա Հայաստանում՝ 17,0%<sup>18</sup>:

Ինչպես տեսնում ենք, ներգրավվածությունն աշխատաշուկայում պահանջում է հրատապ գործողություններ, որոնք ինչպես արդեն նշել ենք, պետք է հասկանալ և լուծել ոչ միայն եկամտի և հարստության տեսանկյունից: Այս առումով կարող ենք մատնանշել Ասիա-Խաղաղօվկիանոսյան երկրների (Ինդոնեզիա, Ճապոնիա, Մալայզիա, Սինգապուր, Չինաստան, Կորեա և այլ) փորձը, որտեղ սոցիալական խնդիրների լուծումները «թաքնված էին» երկրների զարգացման ազգային ռազմավարություններում: Այդ ռազմավարություններն ուղղված էին աշխատանքի խթանմանն ու արտադրողականության բարձրացմանը և հիմնավորում էին այն թեզը, որ սոցիալական պաշտպանությունն ու տնտեսական աճը կարող են բարգավաճել որպես մեկ ամբողջություն և ապահովել երկարաժամկետ զարգացում<sup>19</sup>: Հետևաբար, զարգացման միասնական ազգային ռազմավարությունը կարող է լինել լուծումներից մեկը: Ընդ որում, այդ ռազմավարությունը պետք է արձագանքի ինչպես մերօրյա ճգնաժամային պայ-

<sup>14</sup> Stén Vitols, S. 2010. Goodcorp: the research network on corporate governance. European Corporate Governance Institute and European Trade Union Institute. [www.etui.org/Networks/GoodCorp-the-research-network-on-Corporate-Governance](http://www.etui.org/Networks/GoodCorp-the-research-network-on-Corporate-Governance) (մուտք՝ 05.02.2022).

<sup>15</sup> Stén Power, M.; Wilkinson, R.; Pickett, K. Inequality, economic democracy and sustainability. World Social Science Report, 2016: Challenging Inequalities; Pathways to a Just World; UNESCO: Paris, France, 2016, p 162.

<sup>16</sup> Հետաքրքրական է, որ ակադեմիկոս Վ.Ս.Ներսիսյանցն իր ցվիլիզմի հայեցակարգում առաջ է քաշում այն քաղաքացիական սեփականության գաղափարը, որը կարող է գործել միայն «տնտեսական հավասարության» շրջանակներում՝ տնտեսական և իրավական ձևով և անհատականացված հավասար քաղաքացիական սեփականության սահմաններում՝ որպես սեփականության նվազագույն միասնական չափ բոլորի համար: Ըստ այդմ, գիտնականի կարծիքով անհրաժեշտ է «բոլորին օժտել արտադրության միջոցների սեփականության բավարար նվազագույն իրավունքով» (Нерсесянц В.С. Философия права. М., 2005, ст. 344).

<sup>17</sup> Stén Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ: Դասագիրք/ Ա. Էյդե, Կ.Կրաուզե, Ա.Ռոզաս-Եր.: Տիգրան Մեծ, 2009, էջեր 24-25:

<sup>18</sup> Stén ЕЭК: О безработице в Евразийском экономическом союзе. Статистика Евразийского экономического союза. Экспресс-информация 4 августа 2021 г. [http://www.eurasiancommission.org/ru/act/integr\\_i\\_makroec/dep\\_stat/econstat/Documents/Express\\_Unemployment/expressunemp202106.pdf](http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Documents/Express_Unemployment/expressunemp202106.pdf) (մուտք՝ 05.02.2022).

<sup>19</sup> Stén UN ESCAP: Veerayooth Kanchoochat Social protection and welfare state building: fast and slow lessons// Social Development Working Papers. 2019/07, p 13.

մաններում առաջացող մարտահրավերներին, այնպես էլ ուղղված լինի կայուն զարգացմանն ու հաշվի առնի պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Նման մոտեցում կարող է լինել երկրի ներառական զարգացման ազգային ծրագիրը<sup>20</sup>: Այսինքն՝ զարգացում, որը մարդակենտրոն է, կարող է խթանել կայուն, ներառական և արդար աճ, ներդրումներ և առևտուր: Այն ապահովում է շուկաների և ռեսուրսների հասանելիություն, անաչառ իրավական կարգավորման միջավայրի ստեղծում բիզնեսի ու անհատների համար երկարաժամկետ ապագայում<sup>21</sup>, տրամադրում է հնարավորությունների հավասար հասանելիություն հասարակության բոլոր շերտերի, հատկապես՝ աղքատների համար<sup>22</sup>»:

**«Քաղաքական հարթությունում** ներառական զարգացումը պահանջում է ինստիտուցիոնալ փոփոխություններ և հարմարում (ադապտացիա) փոփոխվող տնտեսական պայմաններին: Զարգացումը կազմակերպվում է այնպես, որ հին և նոր ինստիտուտների համակցության պայմաններում հաճախակի առաջացող լարվածությունը լուծվի քաղաքական գործընթացի միջոցով: Հանրային կառավարման ոլորտում որդեգրվում է ինտեգրված, միասնական և համապարփակ (համապետական) քաղաքականություն (“whole-of-government” approach), որով նպատակ է դրվում ապահովել գործադիր իշխանության համակարգի ներդաշնակ, սիներգիկ, արհեստավարժ, տեխնոլոգիա հեն առաջադեմ լուծումներով պատասխանատու գործունեություն<sup>23</sup>: Համակարգված աշխատանքը օգնում է կառավարել փոխզիջումները, խուսափել կամ նվազեցնել տնտեսական, սոցիալական և բնապահպանական բացասական

ազդեցությունները, բացառել լիազորությունների կրկնօրինակումը տարբեր կառավարչական մարմինների կողմից: «Կառավարությունն արդեն իսկ մշակել է «Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թ. ռազմավարություն»-ը<sup>24</sup>, որը ցանկալի է դիտարկել ներառական զարգացման համատեքստում:

**«Տնտեսական հարթությունում** ձևավորվում է ներառական տնտեսություն, որպեսզի ապահովվի յուրաքանչյուրի ազատ մասնակցությունը տնտեսական կյանքին, ստեղծվի հավասար հնարավորություններ բոլորի, հատկապես՝ հասարակության սոցիալապես խոցելի անդամների բարեկեցության ապահովման համար<sup>25</sup>, ինչն էլ իր հերթին պահանջում է ակտիվ պետական քաղաքականություն աշխատաշուկայում: Սակայն, պետությանը նախևառաջ անհրաժեշտ է որոշել, թե տնտեսության զարգացման որ մոդելն առավելագույնս կնպաստի Հայաստանում ներառական տնտեսության կայացմանը:

Մեր կարծիքով՝ Հայաստանին անհրաժեշտ է նորարար, կատարելագործված, բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսություն: Նման տնտեսության պայմաններում սոցիալական արդարության իրագործման համար կարևոր նշանակություն են ձեռք բերում սոցիալական շուկայական տնտեսության տարրերի՝ տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության իրավակարգավորումները: Դրան զուգահեռ պետք է ուժեղացվի և կատարելագործվի հակամենաշնորհային օրենսդրությունը՝ կանխելու խոշոր ձեռնարկությունների գերիշխումը ռազմավարական նշանակություն ունեցող բնագավառներում: Մյուս կողմից առողջ մրցակցային միջավայրը երաշխիք կհանդիսանա ներդրումների համար, ընդ

<sup>20</sup> «Ասիական հրաշք» աճի նմուշօրինակը օգտակար դասեր է տալիս ոչ միայն բարձր և կայուն աճը պահպանելու, այլև ներառական աճի հասնելու համար: Aghion, Philippe, Reda Cherif and Fuad Hasanov. 2021. “Fair and Inclusive Markets: Why Dynamism Matters,” IMF Working Paper 21/29.

<sup>21</sup> Տե՛ս Lanchovichina, Elena; Lundstrom, Susanna. 2009. Inclusive Growth Analytics: Framework and Application. Policy Research working paper; no. WPS 4851. World Bank. <https://openknowledge.worldbank.org/handle/10986/4047> (մուտք՝ 05.02.2022).

<sup>22</sup> Տե՛ս I. Ali and H. Hwa Son (2007), “Measuring inclusive growth”, Asian Development Review, Vol. 24, No. 1, էջեր 11-31 [https://think-asia.org/bitstream/handle/11540/1704/Volume%2024\\_No%201\\_2007\\_02.pdf?sequence=1](https://think-asia.org/bitstream/handle/11540/1704/Volume%2024_No%201_2007_02.pdf?sequence=1) (մուտք՝ 05.02.2022).

<sup>23</sup> Տե՛ս Inclusive government for a more inclusive society// Government at a Glance 2015. OECD 2015 p 47.

<sup>24</sup> Տե՛ս Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարության փաթեթը հաստատելու մասին որոշման նախագիծ: <https://www.e-draft.am/projects/3438> (մուտք՝ 05.02.2022).

<sup>25</sup> Տե՛ս I. Ali and H. Hwa Son (2007), “Measuring inclusive growth”, Asian Development Review, Vol. 24, No. 1, էջեր 11-31 [https://think-asia.org/bitstream/handle/11540/1704/Volume%2024\\_No%201\\_2007\\_02.pdf?sequence=1](https://think-asia.org/bitstream/handle/11540/1704/Volume%2024_No%201_2007_02.pdf?sequence=1) (մուտք՝ 05.02.2022).

որում գործարարները պետք է շահագրգռված լինեն կատարելու ներդրումներ, այլ ոչ թե գումարներ կուտակեն օՖշորային գոտիներում:

**ՀՀ տարածքային հարթությունում** սոցիալական արդարության ապահովման համար պահանջվում է հաշվի առնել յուրաքանչյուր աշխարհագրական տարածքի զարգացման կարիքները և արդարացիորեն բաշխել ազգային ռեսուրսները տարբեր շրջանների միջև: Դա անհրաժեշտ է որպեսզի, առավելագույնի հասցնել հնարավորությունների արդյունավետությունն ու նվազեցնել յուրաքանչյուր տարածքի ֆիզիկական և սոցիալական պայմաններից բխող թերությունները: Ներառական զարգացումը պետք է ուղղված լինի տարածաշրջանային տնտեսական համակարգերի ոչ խտրական հիմունքներով տնտեսական վերարտադրմանը<sup>26</sup>: Մինչդեռ ՀՀ-ում մշտական բնակչության թվաքանակի անհավասար բաշխումն ըստ մարզերի, վկայում է, որ երկիրը զարգանում է անհամաչափ: Այս հարցում ներկայումս պետության կողմից իրականացվող հիմնական միջոցառումներից են ֆինանսական համահարթեցումը և համայնքների խոշորացումը<sup>27</sup>: Այնուամենայնիվ, մի շարք հետազոտություններ ցույց են տալիս, որ այս գործիքները բավարար չեն ապահովելու համայնքների համահարթ զարգացումը, քանի որ նշված քայլերը դեռևս ուղղված չեն համայնքների առանձին կարիքների և հնարավորությունների բացահայտմանը<sup>28</sup>:

Համավարակի հետևանքով սրվել է նաև առանձին բնակավայրերում, հատկապես՝ քաղաքներում հնարավորությունների, ռեսուրսներ

րի, կյանքի որակի և բոլորի համար անվտանգության հարցերը սոցիալական արդարության ապահովման տեսակետից: Սոցիալական արդարությունը պահանջում է կանաչ քաղաքների զարգացում, որոնք առաջ են բերում տարբեր քննարկումներ քաղաքների կայուն և ներառական զարգացման առումով<sup>29</sup> և հորդորում են բնապահպանությանն ավելի շատ պատասխանատվություն ստանձնել սոցիալական խնդիրների համար:

Սոցիալական արդարության իրագործումն առնչվում է նաև **միջսերնդային** հարցին: Չնայած գիտական գրականությունում իրարամերժ կարծիքների առկայության, գերակշռողն այն է, որ ներկայիս սերունդը կարող է ոչ միայն ազդել ապագա մարդկանց վարքագծի վրա, այլև իշխանություն գործադրել՝ անտեսելով ապագա սերունդների շահերը և իր համար առանձնացնել առավել մեծ քանակությամբ բարիքներ ու հնարավորություններ՝ ի հաշիվ ապագա սերունդների: Օրինակ՝ վարել բնական ռեսուրսների օգտագործման այնպիսի քաղաքականություն, որն առաջ կբերի երկարաժամկետ բացասական ազդեցություններ<sup>30</sup>: Սոցիալական արդարության գնահատման տեսակետից թիրախավորվում են նաև կենսաթոշակային, ընտանեկան և բնապահպանական քաղաքականությունները, պետական պարտքը<sup>31</sup>: Միջսերնդային արդարության պաշտպանության համար առաջակվում են տարբեր միջոցներ, այդ թվում՝ սահմանադրությունների վերանայում որոշակի սահմանված պարբերականությամբ<sup>32</sup>, նորմատիվ իրավական ակտերի

<sup>26</sup> St' u Popelo, O., Tulchynska, S., Marhasova, V., Garafonova, O., & Kharchenko, Y. (2021). Public management of regional development in the conditions of the inclusive economy formation. *Journal of Management Information and Decision Sciences*, 24(7), էջեր 1-8 <https://www.abacademies.org/articles/public-management-of-regional-development-in-the-conditions-of-the-inclusive-economy-formation-11772.html> (մուտք՝ 05.02.2022)

<sup>27</sup> Տե՛ս Ֆինանսական համահարթեցման մասին ՀՀ օրենք՝ ընդունված 2016թ. հոկտեմբերի 20-ին, Վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենք՝ ընդունված 1995թ. նոյեմբերի 7-ին:

<sup>28</sup> Տե՛ս Տնտեսաքաղաքական հրատապ հարցեր. հետազոտությունների ժողովածու / Կազմ.՝ Ս. Մարտիրոսյան.- Եր.: Հեղ. հրատ., 2021, էջեր 34-57:

<sup>29</sup> St' u Angelovski, I., Brand, A. L., Connolly, J. J., Corbera, E., Kotsila, P., Steil, J., et al. (2020). Expanding the boundaries of justice in urban greening scholarship: toward an emancipatory, antisubordination, intersectional, and relational approach. *Ann. Am. Assoc. Geogr.* 29, p 1–27.

<sup>30</sup> Տե՛ս Intergenerational Justice. *Stanford Encyclopedia of Philosophy*. First published the Apr 3, 2003; substantive revision the May 4, 2021.

<sup>31</sup> Տե՛ս Merkel, Wolfgang and Heiko Giebler. 2009. "Measuring Social Justice and Sustainable Governance in the OECD." In *Sustainable Governance Indicators 2009. Policy Performance and Executive Capacity in the OECD*, edited by the Bertelsmann Stiftung. Gütersloh: Bertelsmann Stiftung, p 91.

<sup>32</sup> Տե՛ս Tremmel Jörg *Constitutions as Intergenerational Contracts: Flexible or fixed?/ In Intergenerational Justice Review Vol 3, No 1 (2017) <https://www.igjr.org/ojs/index.php/igjr/article/view/716/618> .*

նախագծերի ազդեցության գնահատում, ֆոնդերի, հանձնաժողովների, ապագա սերունդների իրավունքների պաշտպանի և համանման այլ ինստիտուտների ստեղծում<sup>33</sup>:

Այսպիսով՝ սոցիալական արդարության իրականացման խնդիրները ուղղակիորեն պայմանավորված են տնտեսական, սոցիալական և բնապահպանական հարցերի համալիր լուծման հետ, որին հասնելու լավագույն ճանապարհն է երկրի կայուն զարգացումը: Այս առումով կայուն զարգացման սկզբունքը մեկնաբանվում է ավելի լայն, քան ձևակերպված է ՀՀ Սահմանադրությունում<sup>34</sup>: Կայուն զարգացման սկզբունքի ամբողջական ամրագրումն առաջարկում ենք ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

**«Հայաստանի Հանապետությունն առաջնորդվում է հավասարակշռված և համալիր կայուն զարգացման սկզբունքով, հիմնվելով տնտեսական, սոցիալական և բնապահպանական հենասյուների վրա և ապահովելով յուրաքանչյուրի հավասար հնարավորությունները իրացնելու մարդկային ներուժը»:**

Վերը նշվածին հասնելու համար անհրաժեշտ է միավորել սոցիալական պետության բոլոր տարրերի (պետություն, գործարար ոլորտ կամ բիզնես, քաղաքացիական հասարակություն, անհատ) ուժերը առաջադրված խնդիրների լուծման գործում պատասխանատվություն ստանձնելու համար, որը դրսևորվում է յուրաքանչյուր բաղադրամասի սոցիալական պատասխանատվությամբ: Այուսմենայնիվ, այս իրողության մեջ կենտրոնական տեղում պետության պատասխանատվության խնդիրն է: Այս տեսակետից առաջին տեղում է Ազգայի Ժողովի կողմից պետական բյուջեի ընդունման և դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը, որն իրականացվում է Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասի և 111-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա: Մենք ելնում ենք

այն սկզբունքից, որ սոցիալական պետության բյուջեն պետք է ունենա սոցիալական կողմնորոշվածություն և գնահատվի նաև սոցիալական արդարության սկզբունքի տեսակետից: Այս հիմքով առաջարկվում է պետական բյուջեի նախագծի փորձաքննությունն իրականացնելիս գնահատել նաև նախագծի սոցիալական բնույթը: Համապատասխանաբար անհրաժեշտ է պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությունում առանձին կետով գնահատել բյուջեի սոցիալական ուղղակի ազդեցություն ունեցող ծախսերի արդյունավետությունը:

Պետության կենսագործունեությունն ապահովելու հարցում առանցքային նշանակություն ունի նաև Կառավարության ծրագիրը, որով որոշվում են երկրի առաջիկա տարիների քաղաքականության հիմնական ուղղությունները: Այդ իսկ պատճառով կարևորվում է Կառավարության կողմից Ազգային ժողովին ներկայացվող տարեկան զեկույցը ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Համաձայն Սահմանադրության 87-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Կառավարությունը տարեկան զեկույցի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացնում պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործման վերաբերյալ (Սահմանադրություն, հոդված 86): Սահմանադրական նորմի նման պահանջը պայմանավորված է նրանով, որ Սահմանադրության 3-րդ գլխով ամրագրված պետության քաղաքականության հիմնական նպատակները Կառավարության համար ունեն առաջնահերթություն և Կառավարությունը հստակ վերլուծություն ու տեղեկատվություն պետք է տրամադրի այդ ոլորտում առկա խնդիրների, իր նպատակների, ձեռնարկված միջոցառումների, ձեռքբերումների վերաբերյալ<sup>35</sup>: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք Սահմանադրության 87-

<sup>33</sup> Stén Rose Michael Constitutions, Democratic Self-Determination and the Institutional Empowerment of Future Generations: Mitigating an Aporia/In Intergenerational Justice Review, Vol. 2, No 2 (2016) DOI: <https://doi.org/10.24357/igjr.2.2.715>

<sup>34</sup> ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև»:

<sup>35</sup> Տեն Սարգսյան Ն., Ավետիսյան Հ., Օդաբաշյան Հ. Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում / Նորա Սարգսյան, Համլետ Ավետիսյան, Հովհաննես Օդաբաշյան. - Եր.: «Լույս» հիմնադրամ, 2020. - էջ 128:

րդ հողվածում նշված «տեղեկատվություն» բառը փոխարինել «հաշվետվություն» բառով, ինչը հիմք կհանդիսանա Կառավարության պատասխանատվության՝ 86-րդ հողվածում նշված ուղղությունների ակնհայտ անհիմն չկատարելու համար:

Խորհրդարանական վերահսկողության շրջանակներում կարևոր գործիք է նաև ԱԺ հանձնաժողովների կողմից օրենքների կարգավորման արդյունավետության գնահատումը, որն իրականացվում է ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրինքի 122-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն: Արժևորելով սոցիալական արդարությունը՝ էական ենք համարում հանձնաժողովների կողմից երկրի սոցիալական ուղղվածությունը կանխորոշող օրենքների կարգավորման արդյունավետության պարբերական գնահատումը: Առաջարկում ենք ԱԺ կանոնակարգում սահմանել դրույթ, համաձայն որի հանձնաժողովները երեք տարին մեկ կիրականացնեն կարգավորման արդյունավետության պարտադիր գնահատում սոցիալական արդարության տեսանկյունից էական նշա-

նակություն ունեցող նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ, որոնց մեջ կներառվեն՝ ՀՀ սահմանադրական օրենքները, հարկային և աշխատանքային օրենսգրքերը և մի շարք այլ օրենքներ<sup>36</sup>: Օրենքների ցանկը կարող է վերանայվել և համալրվել՝ ելնելով հասարակական պահանջներից և զարգացումներից:

Սոցիալական արդարության ապահովման տեսակետից վերահսկողական արդյունավետ գործիք կարող է հանդիսանալ վերահսկողական խորհրդարանական լուսմները: Դրանց միջոցով հնարավոր կլինի հասարակության լայն շերտերի հետ դիտարկել և գնահատել կառավարության աշխատանքը՝ կապված սոցիալտնտեսական խնդիրների իրականացման հետ: Վերահսկողական լուսմների արդյունքում բարձացված հարցերը, բացերը, թերություններն ու դրանց վերացման առաջարկությունները համապատասխան հանձնաժողովի կողմից կներկայացվեն Կառավարությանը համապատասխան քայլեր ձեռնարկելու և դրանց վերաբերյալ հանձնաժողովին հաղորդում ներկայացնելու համար:



<sup>36</sup> Այդ օրենքների շարքում կարող ենք առանձնացել «Կուտակային կենսաթոշակների մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին», «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին», «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին», «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Կրթության մասին», «Զբաղվածության մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքները:



**ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հազենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր)

**ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացված են անհրաժեշտ պաշտպանության նախապայմանները՝ ըստ ՀՀ նոր քրեական օրենսգրքի: Մանրամասն պարզաբանվում են անհրաժեշտ պաշտպանության վիճակին, պաշտպանական գործողություններին և սուբյեկտիվ կողմին ներկայացվող օրենսդրական պահանջները: Հատուկ ուշադրություն է հատկացվում անհրաժեշտ պաշտպանության սոցիալ-էթիկական սահմանափակումներին, հատկապես անհրաժեշտ պաշտպանության սադրանքին ու դրա իրավական կարգավորմանը:

**ГОР ОГАНЕСЯН**

Доцент кафедры немецкого и европейского конституционного и административного права, а также международного права в Университете Хагена, Адвокат, член Саксонской коллегии адвокатов, доктор юридических наук (Берлин), магистр административных наук (Шпайер)

**ПРЕДПОСЫЛКИ НЕОБХОДИМОЙ ОБОРОНЫ**

В статье представлены предпосылки необходимой обороны в соответствии с новым Уголовным кодексом Армении. Подробно разъясняются правовые требования к состоянию необходимой обороны, оборонительных действий и субъективной стороне необходимой обороны. Особое внимание уделяется социально-этическим ограничениям необходимой обороны, особенно провокации необходимой обороны и ее правовому регулированию.

**GOR HOYHANNISYAN**

Associate Professor at the Chair of German and European Constitutional and Administrative Law, as well as International Law at the University of Hagen, Attorney-at-law, Member of the Saxon Bar Association, Doctor of Laws (Berlin), Master of Administrative Sciences (Speyer)

**PRECONDITIONS OF SELF-DEFENCE**

The article presents the preconditions of self-defence according to the new Armenian Criminal Code. In detail, the legal requirements for the situation, the act and the subjective side of self-defence are explained. The socio-ethical limitations of self-defence, especially the provocation of self-defence and its legal treatment are extra highlighted.

\* \* \*

**ԳԱՅԱՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական համագործակցության վարչության դատախազ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության ամբիոնի սպիրանտ

**ՀԱՆՁՆՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ, ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ ԱՅՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ**

Հոդվածը նվիրված է հանձնման ինստիտուտի իրավական բնույթի բացահայտմանը, որը նպատակ է հետապնդում պարզելու, իրավունքի ճյուղերից որի նորմերն են առավելապես գերակշռում քննարկվող հարաբերություններում և դրանցից որի համատեքստում է անհրաժեշտ դիտարկել քննարկվող ինստիտուտը: Հոդվածում անդրադարձ է կատարված նաև հանձնման հասկացության բացահայտմանը և դրա տարբերակմանը այլ հասկացություններից, ինչը հնարավորություն է տալիս ճիշտ ընկալելու քննարկվող ինստիտուտը և տարբերակելու ընթացակարգով նման, բայց բովանդակությամբ սկզբունքորեն տարբերող գործընթացներից:

**Բանալի բառեր.** հանձնում, էքստրադիցիա, փոխանցում, քրեական իրավունք, միջազգային իրավունք, ինստիտուտ, իրավական բնույթ և այլ:

**ԳԱԿԱՆԵ ՄԵԼԻԿՅԱՆ**

Прокурор управления международно-правового сотрудничества  
